

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**YEREVAN STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
*ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՂԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*

**ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА**  
*МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ*

**JOURNAL OF YEREVAN UNIVERSITY**  
*INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE*

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
*ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ*  
*SOCIAL SCIENCES*

**№ 3 (42)**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ**  
**ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**  
**YEREVAN STATE UNIVERSITY PRESS**

**ԵՐԵՎԱՆ - 2023**

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Международные отношения, Политология». Выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».

Three issues of “Journal of Yerevan University. International Relations, Political Science” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Գլխավոր խմբագիր՝ **Պետրոսյան Գեղամ** (ս.գ.դ., պրոֆ.)

Պատասխ. քարտուղար՝ **Ալթունյան Կատերինա** (ք.գ.թ., դոց.)

**Ազյան Վահագն** (ս.գ.թ., դոց.), **Ալեքսանյան Աշոտ** (ք.գ.դ., պրոֆ.), **Ավագյան Արսեն** (ս.գ.դ., պրոֆ.), **Գալստյան Խաչիկ** (ք.գ.դ., պրոֆ.), **Ենգոյան Աշոտ** (ք.գ.դ., պրոֆ.), **Եփրեմյան Տիգրան** (ս.գ.թ.), **Լեպեխին Վլադիմիր** (ՌԴ, ս.գ.թ.), **Կոմլևա Վալենտինա** (ՌԴ, ս.գ.դ., պրոֆ.), **Կրյուչկով Իգոր** (ՌԴ, ս.գ.դ., պրոֆ.), **Կուրիլև Կոնստանտին** (ՌԴ, ս.գ.դ., դոց.), **Մանուկյան Ժակ** (ս.գ.թ., դոց.), **Մարգարով Ալեքսանդր** (ք.գ.դ., պրոֆ.), **Մարուքյան Արմեն** (ս.գ.դ., պրոֆ.), **Պետրոսյան Վահրամ** (ս.գ.թ., դոց.), **Սաֆարյան Արամ** (ս.գ.թ., դոց.), **Սիլաև Նիկոլայ** (ՌԴ, ս.գ.թ.), **Քեռյան Գարիկ** (ք.գ.դ., պրոֆ.)

Редакционная коллегия:

Главный редактор: **Петросян Гегам** (д.ист.н., проф.)

Исполнительный секретарь: **Алтунян Катерина** (к.пол.н., доц.)

**Авагян Арсен** (д.ист.н., проф.), **Аглыан Ваагн** (к.ист.н., доц.), **Алексамян Ашот** (д.пол.н., проф.), **Галстян Хачик** (д.пол.н., проф.), **Енгоян Ашот** (д.пол.н., проф.), **Епремян Тигран** (к.ист.н.), **Керян Гарик** (д.пол.н., проф.), **Комлева Валентина** (РФ, д.соц.н., проф.), **Крючков Игорь** (РФ, д.ист.н., проф.), **Курьев Константин** (РФ, д.ист.н., доц.), **Лепехин Владимир** (РФ, к.ф.н.), **Манукян Жак** (к.ист.н., доц.), **Маркаров Александр** (д.пол.н., проф.), **Марукян Армен** (д.ист.н., проф.), **Петросян Ваграм** (к.ист.н., доц.), **Сафарян Арам** (к.ист.н., доц.), **Силаев Николай** (РФ, к.ист.н.)

Editorial Board:

Editor-in-chief: **Petrosyan Gegham** (Sc. D. in History, Professor)

Executive Secretary: **Altunyan Katerina** (Ph.D. in Political Science, Associate Professor)

**Aglyan Vahagn** (Ph.D. in History, Associate Professor), **Aleksanyan Ashot** (Sc. D. in Political Science, Professor), **Avagyan Arsen** (Sc. D. in History, Professor), **Engoyan Ashot** (Sc. D. in Political Science, Professor), **Galstyan Khachik** (Sc. D. in Political Science, Professor), **Keryan Garik** (Sc. D. in Political Science, Professor), **Komleva Valentina** (RF, Sc. D. in Sociological Sciences, Professor), **Kryuchkov Igor** (RF, Sc. D. in History, Professor), **Kurylev Konstantin** (RF, Sc. D. in History, Associate Professor), **Lepkhin Vladimir** (RF, Ph.D. in Philosophy), **Manukyan Zhak** (Ph.D. in History, Associate Professor), **Markarov Alexander** (Sc. D. in Political Science, Professor), **Maruqyan Armen** (Sc. D. in History, Professor), **Petrosyan Vahram** (Ph.D. in History, Associate Professor), **Safaryan Aram** (Ph.D. in History, Associate Professor), **Silaev Nikolay** (RF, Ph.D. in History), **Yepremyan Tigran** (Ph.D. in History)

**ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ**

**ԽԱԶԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ**

Արդի միջազգային հարաբերություններում պետության արտաքին քաղաքականությունն իրականացնելիս կարևոր դեր է խաղում «փափուկ ուժի» հայեցակարգը: Աշխարհաքաղաքական ուժային շատ կենտրոններ՝ ԱՄՆ, ԵՄ, ՌԴ, ՉԺՀ, իրենց արտաքին քաղաքական զինանոցում վաղուց կիրառում են «փափուկ ուժի» ու դրա նոր կառուցածի՝ «խելամիտ ուժի» ռազմավարությունները: Վերջերս «փափուկ ուժի» հայեցակարգային մշակումները հաջողությամբ յուրացնում և կիրառում են նաև տարածաշրջանային որոշ պետություններ: Դրանց թվում հատկապես առանձնանում է Թուրքիան, որը վերջին տարիներին էականորեն ընդլայնել է միջազգային և տարածաշրջանային գործընթացներում իր մասնակցությունն ու անթաքույց հավակնություններ է ցուցաբերում՝ մեծացնելու իր աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական ազդեցությունը Կենտրոնական Ասիայում ու Հարավային Կովկասում:

Հոդվածի նպատակն է բացահայտել Թուրքիայի արտաքին քաղաքականության գործիքակազմում «փափուկ ուժի» ինստիտուցիոնալ կառուցակարգերն ու դրսևորման առանձնահատկությունները: Հետազոտության շրջանակներում քննարկման առարկա են դառնում «փափուկ ուժի» արդի հայեցակարգային մոտեցումները, թուրքական «փափուկ ուժի» գործառնության ինստիտուցիոնալ, մշակութային և տնտեսական չափումները: Հոդվածում հիմնավորվում է այն թեզը, որ տարածաշրջանի երկրների մշակութային ու տնտեսական «յուրացումից» հետո Թուրքիան առաջ է քաշելու նաև քաղաքական նոր օրակարգեր, որոնց սպասարկման գործում «փափուկ ուժի» ռազմավարությունը շարունակելու է ունենալ առանցքային գործառնություն:

*Բանալի բառեր – «փափուկ ուժ», «խելամիտ ուժ», «թմրեցնող ուժ», հիշողության քաղաքականություն, տնտեսական էքսպանսիա, «սողացող կլանում»*

**Ներածություն**

Արդի միջազգային հարաբերություններում պետություններն իրենց անվտանգության և ազգային-պետական շահերի պաշտպանության գործում կիրառում են ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական մեթոդներ ու եղանակներ: Ավանդական մեթոդները, որպես կանոն, ներառում են պետության արտաքին քաղաքական նպատակներին հասնելու կոշտ գործիքակազմեր (Hard Power): XX դարասկզբից ի վեր, հատկապես քաղաքական ռեալիզմի հարացույցի շրջանակներում, պետության արտաքին քաղաքական նպատակների առաջնդման կոշտ-ուժային

հայեցակարգը գերիշխող էր: «Մառը պատերազմի» սանձազերծման ողջ ժամանակահատվածում ինչպես ԱՄՆ-ն, այնպես էլ ԽՍՀՄ-ը իրենց արտաքին քաղաքական ռազմավարություններում հիմնականում հենվում էին Hard Power-ի ռազմավարության վրա, որի հիմնական գործիքակազմը ներառում էր ուժի, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ մեխանիզմների միջոցով հակառակորդին ռազմաքաղաքական կամ տնտեսական պարտության մատնելուն ուղղված գործողությունների լայն համալիր: Միաժամանակ, որոշ հեղինակներ իրավացիորեն նկատում են, որ, այնուամենայնիվ, ԽՍՀՄ-ը կազմալուծվեց ոչ այնքան կոշտ դիմակայության կամ պատերազմական գործողությունների պատճառով, որքան «փափուկ ազդեցության» գործիքակազմի լայն կիրառման: Արևմտյան կենսակերպի և արժեքների իդեալականացումը, ազատ շուկայական հարաբերությունների և ժողովրդավարական հասարակական-քաղաքական համակարգերի կառուցման քարոզչական իդեոլոգեմները ավելի գրավիչ թվացին միլիոնավոր մարդկանց, քան հոչակված սոցիալիստական ու կոմունիստական արժեհամակարգի հիմնադրույթները<sup>1</sup>:

Պատահական չէ, որ հենց Մառը պատերազմի ավարտից հետո երևան եկան պետությունների ազգային անվտանգության ապահովման այսպես կոչված «ոչ ավանդական» ռազմավարությունները, որոնց թվում հատկապես հիշատակելի է «փափուկ ուժի» հայեցակարգը: Ամերիկյան գիտնական Ջ. Նայը առաջիններից էր, որ գիտական շրջանառության մեջ դրեց այդ հասկացությունը՝ այն սահմանելով որպես համոզման և գրավչության միջոցով ուրիշների վրա ազդելու ու առաջադրված նպատակներին հասնելու ունակություն<sup>2</sup>: Իհարկե, Մ. Լեբեդևան իրավացիորեն նկատում է, որ տարբեր հարացույցների շրջանակներում «փափուկ ուժի» հայեցակարգի մեկնաբանությունները կարող են իրարից սգրունքորեն տարբերվել<sup>3</sup>: Օրինակ՝ քաղաքական ռեալիզմում «փափուկ ուժը» ընկալվում է «փափուկ ճնշման» համատեքստում, որն ընդգրկում է հակառակորդի վրա ոչ ռազմական ճանապարհով ազդեցության ընդլայնման ողջ գործիքակազմը, այդ թվում՝ քաղաքական և տնտեսական հարկադրանքի մեթոդները: Ընդ որում, այս դեպքում, ինչպես նշում է Մ. Լեբեդևան, «փափուկ ուժը» վերածվում է քարոզչության պարզ գործիքի, և դժվար է գատել նրանց էական տարբերությունները<sup>4</sup>: Արդյոք ք այս իմաս-

<sup>1</sup> St' u **Самохин А.** Мягкая сила в контексте проблематики обеспечения национальной безопасности // Историческая и социально-образовательная мысль, 2016, т. 8, N4/1, <https://cyberleninka.ru/article/n/myagkaya-sila-v-kontekste-problematiki-obespecheniya-natsionalnoy-bezopasnosti/viewer>, (մուսք 23.03. 2023) **Галстян Х.** «Smart Power» в Российской Внешней Политике: Время «Благоразумной Силы». // Управление в XXI веке: Сборник статей по материалам Международной научно-практической конференции. НИУ «БелГУ», 23 октября 2015 года, Белгород, 2015, էջ 43:

<sup>2</sup> St' u **Най Д.** Гибкая сила. Как добиться успеха в мировой политике, М., «Тренд», 2006, էջ 12:

<sup>3</sup> St' u **Лебедева М.** Мягкая сила: понятие и подходы // Вестник МГИМО-Университета, 2017, 3(54), էջ 213:

<sup>4</sup> St' u նույն տեղը:

տով է շրջանառում «փափուկ ուժ» հասկացությունը Ջ. Նայր: Կարծում ենք ոչ: Ի սկզբանե հեղինակը «փափուկ ուժի» հայեցակարգը դիտարկում էր նեոլիբերալիզմի հարացույցի լույսի ներքո, որտեղ որևէ արտաքին դերակատարի կողմից իր ազդեցության մեծացման կարևոր սկզբունք էր համարվում կամավոր ենթակայության գործոնը, որտեղ խոսքը ոչ այնքան միակողմանի ազդեցության (օրինակ քարոզչության դեպքում), որքան երկկողմ փոխազդեցության և փոխհարստացման հասնելու՝ կողմերի երկուստեք ձգտումների մասին է: Ջ. Նայի բնորոշմամբ՝ «փափուկ ուժը» ուրիշների նախապատվությունները ձևավորելու ունակությունն է՝ սեփական մշակույթի, արժեքների և ինստիտուտների գրավչությունը բարձրացնելու, ինչպես նաև արտաքին քաղաքականությունը լեգիտիմացնելու ու դրան բարոյապես աջակցելու ճանապարհով, որի արդյունքում «փափուկ ուժի» սուբյեկտը տիրում է ազդեցության օբյեկտ հանդիսացող մարդկանց սրտերին ու մտքերին<sup>5</sup>:

Իր հետագա աշխատություններում հեղինակը որոշակիորեն վերանայում է «փափուկ ուժի» հայեցակարգն ու մեկ այլ ամերիկյան հետազոտողի՝ Ջ. Արմիթիջի հետ առաջ է քաշում «խելամիտ ուժի» (Smart power) հայեցակերպը՝ որպես իշխանության արդյունավետ ռազմավարություններին միտված «փափուկ» և «կոշտ» ուժային ռեսուրսների համատեղման ունակություն<sup>6</sup>: Սակայն հեղինակների կարծիքով՝ «խելամիտ ուժը» ոչ թե «փափուկ» և «կոշտ» ուժերի պարզ միագումար է, այլ դրանց որակյալ համադրում կամ բազմապատկում: Ինչպես նշում է Օ. Լեոնովան, եթե առկա է ուժի հայեցակարգի միայն մեկ գործոնը, իսկ մյուսն իսպառ բացակայում է, ապա դրանց բազմապատկումը տալիս է զրո արդյունք<sup>7</sup>: Հետևաբար, միայն «փափուկ» և «կոշտ» ուժերի ռացիոնալ բազմապատկումը «խելամիտ ուժի» հայեցակարգի շրջանակներում կարող է ապահովել ցանկալի արդյունքներ: Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ արդի աշխարհակարգային գլոբալ փոխակերպումների, տեղեկատվական, հաղորդակցական և թվային հասարակությունների դարաշրջանում ազդեցության միայն «կոշտ» կամ «փափուկ» գործիքակազմերով դժվար է հասնել երկարաժամկետ դրական արդյունքների, ապա կանխատեսելի է, որ «խելամիտ ուժի» հայեցակարգը մեծ ներուժ ունի վերաճելու միջազգային հարաբերությունների կառուցակարգման նոր մեզամիտումի:

### **«Փափուկ ուժի» համաթուրքական ինստիտուտները**

Ինչպես արդեն նշվեց, արդի միջազգային հարաբերություններում պետության արտաքին քաղաքականության իրականացման կարևոր

<sup>5</sup> St' u Nye J., Soft Power: The Means to Success in World Politics. N.Y., Public Affairs, 2004, էջ 6-7:

<sup>6</sup> St' u Nye J., The future of Power // Public Affairs, 2011, էջ 320:

<sup>7</sup> St' u Леонова О. Джозеф Най и «мягкая сила»: попытка нового прочтения // Социально-гуманитарные знания, 2018/1, էջ 113:

գործիքակազմերից է դարձել «փափուկ ուժի» հայեցակարգը, որը թույլ է տալիս տվյալ պետության ազգային շահերն առաջ մղել առանց կոշտ հարկադրանքի և դիմակայության՝ կամավոր համագործակցության, համոզման և գրավչության բարձրացման ճանապարհով: Այո, աշխարհաքաղաքական ուժային շատ կենտրոններ՝ ԱՄՆ, ԵՄ, ՌԴ, ՉԺՀ, իրենց արտաքին քաղաքական զինանոցում վաղուց են կիրառում «փափուկ ուժի» ու դրա նոր կառուցակերպի՝ «խելամիտ ուժի» ռազմավարությունները: Ընդ որում, վերջերս «փափուկ ուժի» գործիքակազմը հաջողությամբ յուրացնում և կիրառում են նաև տարածաշրջանային որոշ պետություններ: Դրանց թվում հատկապես առանձնանում է Թուրքիան, որը վերջին տարիներին էականորեն ընդլայնել է միջազգային և տարածաշրջանային գործընթացներում իր մասնակցությունն ու անթաքույց հավակնություններ է ցուցաբերում իր աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական ազդեցությունը Կենտրոնական Ասիայում ու Հարավային Կովկասում մեծացնելու համար: Այդ ազդեցության ընդլայնման համար Թուրքիան կիրառում է ինչպես ինստիտուցիոնալ նոր հարթակների ստեղծման, այնպես էլ մշակութային ու տնտեսական լայնածավալ «էքսպանսիայի» քաղաքականությունը:

«Փափուկ ուժի» հայեցակարգի դասական մոդելը, որը նկարագրում է Ջ. Նայրը, ենթադրում է որևէ պետության կողմից սեփական արժեքների ու գաղափարների տարածման գործում համապատասխան ինստիտուտների և խաղի կանոնների ստեղծում<sup>8</sup>: Թուրքիայի պարագայում նման ինստիտուտների ձևավորումը սկիզբ է առնում Խորհրդային Միության կազմալուծումից հետո: Մինչ այդ Թուրքիան միջազգայնորեն ճանաչված միակ թուրքախոս պետությունն էր աշխարհում: Հետխորհրդային ժամանակաշրջանում արդեն, 1992 թ. սկսած, Թուրքիայի նախաձեռնությամբ ձևավորվեցին մի քանի ինստիտուցիոնալ հարթակներ՝ թուրքախոս պետությունների միջև համագործակցությունը խթանելու այդ գործում Թուրքիայի բացառիկությունն ընդգծելու նպատակով: Մասնավորապես, դեռ 1992 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի նախագահ Թ. Օզալի հրավերով Անկարայում հավաքվեցին Թուրքիայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի և Ղրղզստանի նախագահները՝ մասնակցելու թուրքախոս պետությունների առաջին վեհաժողովին: 1993 թ. Ալմա-Աթայում ստորագրվեց թուրքական մշակույթի «թյուրքսոյ» (türksoy) միջազգային կազմակերպության ստեղծման մասին համաձայնագիրը<sup>9</sup>: Ի դեպ, այդ կազմակերպությունը 2023 թ. թուրքական աշխարհի մայրաքաղաք է հռչակել Արցախի հինավուրց բերդաքաղաք Շուշին, որը ուրիշների պատմական, մշակութային ու հոգևոր ժառանգության յուրացման գոր-

<sup>8</sup> St' u Nye J., Soft Power: The Means to Success in World Politics. N.Y., Public Affairs, 2004, էջ 9:

<sup>9</sup> St' u The International Organization of Turkic Culture TURKSOY, <https://Tyurksoy.org> (մուտք՝ 26.04.2023):

ծում թուրքական ռազմավարական մտածողության խոստուն վկայությունն է: Հարկ է նշել, որ 1990-ականներից սկսած՝ զուգահեռաբար քայլեր ձեռնարկվեցին նաև թուրքախոս պետությունների համագործակցության քաղաքական նշանակության ինստիտուցիոնալ հարթակների ձևավորման ուղղությամբ: 2008 թ. նոյեմբերին Ստամբուլում ստորագրվեց թուրքական պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի (TURKPA) ստեղծման մասին համաձայնագիրը, որի մաս կազմեցին թուրքախոս 6 պետություններից 4-ը՝ Թուրքիան, Ադրբեջանը, Ղազախստանը և Ղրղզստանը<sup>10</sup>: Խորհրդանշական հերթական վայրում՝ հայկական Նախիջևանում, 2009 թ. ստորագրվեց «Նախիջևանի հռչակագիրը», որն ազդարարեց թուրքական պետությունների համագործակցության որակական նոր մակարդակի կառույցի «Թուրքական խորհրդի» ստեղծման մասին: Իսկ արդեն «Թուրքական խորհրդի» գործունեության իրավապայմանագրային հենքի վրա 2021 թ. Ստամբուլում Թուրքիայի նախագահ Ռ. Էրդոդանի կողմից ազդարարվեց «Թուրքական պետությունների կազմակերպության» հիմնադրման մասին<sup>11</sup>: Այժմ այդ կառույցի լիիրավ անդամ են 5 թուրքախոս պետություններ, իսկ Թուրքմենստանը, Հունգարիան և Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը ունեն դիտորդի կարգավիճակ: Արժանահիշատակ է նաև տեղական ինքնակառավարման մակարդակը միավորող թուրքական աշխարհի համայնքների միությունը, որին անդամակցում են 30 և ավելի երկրների և տարածաշրջանների համայնքային միավորներ:

Ըստ էության, կարելի է փաստել, որ Թուրքիայի կողմից նախաձեռնվող «փափուկ ուժի» ինստիտուտները միաժամանակ գործում են քաղաքականության իրականացման ինչպես մակրո-, այնպես էլ մեզո- և միկրոմակարդակներում: Նման կարգի ինստիտուտների ստեղծումն ու դրանց միջոցով առաջնորդության ապահովումը Թուրքիայի համար ռազմավարական նշանակություն ունի: Միավորելով թուրքախոս պետություններին՝ քաղաքական, տնտեսական ու մշակութային մեկ ընդհանուր դաշտում՝ թուրքական աշխարհը հավակնում է դառնալ առնվազն տարածաշրջանային ինքնաբավ քաղաքակրթություն, որը նաև աշխարհագրորեն միմյանց կկապի տարածաշրջանի թուրքական պետությունները: Հենց այս լույսի ներքո պետք է դիտարկել Ադրբեջանի և Թուրքիայի անթաքույց հավակնությունները հատկապես 2020 թ. 44-օրյա պատերազմի նոր նախավիճակից (Status Quo) հետո, երբ թուրքական «մեկ ազգ-երկու պետություն» տանդեմը աշխարհաքաղաքական բառապաշար ներմուծեց «Զանգեզուրի միջանցք» եզրույթը և այժմ էլ փորձում է ինչպես դիվանագիտական, այնպես էլ «երկաթե բռունցքի»

<sup>10</sup> St u Parliamentary Assembly of Turkic States, <https://turk-pa.org/about> (մուտք՝ 28.04.2023):

<sup>11</sup> St u Organization of Turkic States, <https://turkicstates.org/en/turk-konseysi-hakkinda> (մուտք՝ 30.04.2023):

անթաքույց ցուցադրությամբ հասնել ՀՀ ինքնիշխան տարածքների զավթման լեգիտիմացմանը: Մասնավորապես, զավթված Շուշիում էր-դողանի և Ալիևի մասնակցությամբ 2021 թ. հունիսի 15-ին ստորագրվեց տիրահոչակ «Շուշիի հռչակագիրը», որտեղ խոսվում է նաև այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» մասին<sup>12</sup>: Ընդ որում, այդ հռչակագիրն արագ վավերացվեց երկու երկրների խորհրդարաններում՝ դառնալով իրենց ներպետական օրենսդրության անքակտելի մասը: Բացի այդ, «Շուշիի հռչակագրի» դրույթների մեծ մասն ունի ռազմաքաղաքական հստակ բաղադրիչ, ինչը հիմք է տալիս կարծելու, որ այն կարող է դառնալ ապագա համաթուրքական ռազմաքաղաքական նոր դաշինքի ստեղծման իրավապայմանագրային հենքը: Հարկ է ընդգծել, որ Արցախում Թուրքիայի անմիջական օժանդակությամբ և մասնակցությամբ Ադրբեջանի ռազմական «հաջողությունները» արդիական են դարձրել Անկարայի վաղեմի երազանքներից մեկի՝ թուրքախոս պետությունների ռազմական նոր դաշինքի՝ «Թուրանի բանակի» ձևավորման շուրջ քննարկումները<sup>13</sup>:

### **Թուրքական «դիզիների» դոզավորված քարոզչական գործառնությունները**

Ռուսական հեղափոխության առաջնորդ Լենինին են շատերը վերագրում հայտնի խոսքերը, որ բոլոր արվեստներից ամենակարևորը կինոն է<sup>14</sup>: Այո՛, որևէ երկրի մշակույթի, կենցաղի, ավանդույթների ու արժեքների տարածման գործում կինոյի ժանրը մեծ դեր ունի: Այդ առումով վերջին տարիներին թուրքական սերիալների արտադրությունը, որոնք անվանվում են «դիզիներ», պատկառելի մասշտաբների է հասել: Հեռուստասերիալների արտադրության ոլորտում Թուրքիան ԱՄՆ-ից հետո գրավում է 2-րդ տեղը, իսկ թուրքական «դիզիները» 2018 թ. դրությամբ ցուցադրվել էին աշխարհի 146 երկրներում, որոնք դիտել է 700 մլն-ից ավելի մարդ<sup>15</sup>: Հեղինակավոր «Ֆորբս» ամսագրի կանխատեսումների համաձայն՝ 2023 թ. թուրքական սերիալների արտահանման եկամուտը կարող է գերազանցել 2 մլրդ դոլարը<sup>16</sup>: Հետաքրքրական է նաև թուրքական սերիալների սպառման աշխարհագրությունը, որի հիմնական շուկան են Մերձավոր Արևելքի, հետխորհրդային տարածաշրջանի, Կենտրոնական և Արևելյան Ասիայի, ինչպես նաև լատինամերիկյան երկրները:

<sup>12</sup> Տե՛ս «Между Азербайджаном и Турцией подписана Шушинская декларация о союзнических отношениях», <https://ru.president.az/articles/52115> (մուտք՝ 04.05.2023):

<sup>13</sup> Տե՛ս **Շանգարև Ք.** «Армия Турана»-проект Турции по военной интеграции Тюркского мира. // Обозреватель, 2021/7, <https://cyberleninka.ru/article/n/armiya-turana-proekt-turtsii-voennoy-integratsii-tyurkskogo-mira-ugrozy-i-perspektivy/viewer> (մուտք՝ 23. 08. 2023):

<sup>14</sup> Տե՛ս **Լենին Վ.** Полное собрание сочинений, М., 5-ое изд., том 44, 1970, էջ 579:

<sup>15</sup> Տե՛ս **Լոգորեա Ա.** Сериалы – мягкая сила Турции, <https://www.trussian.com/mnenie/serialy-myagkaya-sila-turcii-2309506> (մուտք՝ 05.04.2023):

<sup>16</sup> Տե՛ս «Великолепный век турецкого телевидения: как Турция стала мировым экспортером сериалов», <https://www.forbes.ru/forbeslife/345519-velikolepnyu-vek-tureckogo-televideniya-kak-turciya-stala-mirovym-eksporterom> (մուտք՝ 09. 04. 2023):



րի բնակիչները: Նման ծավալների կինոարտադրությունը, բնականաբար, անհնար է իրականացնել առանց պետական, պաշտոնական քաղաքական աջակցության: Թուրքական սերիալային արտադրության պրոդյուսերները մատնանշում են, որ այդ գործում իրենք ունեն թուրքիայի էկոնոմիկայի, մշակույթի և տուրիզմի նախարարությունների, ինչպես նաև անձամբ թուրքիայի նախագահ Ռ. Էրդոհանի անմիջական օժանդակությունն ու աջակցությունը<sup>17</sup>: Օրինակ եթե 2011 թ. թողարկված «Հրաշալի դարաշրջան» սերիալը թուրքական իշխանությունների կողմից առանձնապես չէր համարվում որպես «փափուկ ուժի» ցուցադրություն, ապա ավելի ուշ էկրան բարձրացած այնպիսի «դիզիներ», ինչպիսիք են «Էրթուդրուլ վերածնունդ» կամ «Վերջին կայսրը», միանշանակ տեղավորվում էին թուրքական «փափուկ ուժի» նոր հայեցակարգի շրջանակներում: Մասնավորապես, «Էրթուդրուլի» հիմնական կարգախոսներից է «ազգային զարթոնքը», որը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին լսարանին ուղղված՝ սեփական ինքնության, թուրքական ազգայնականության ու ծավալապաշտության դասական արտացոլումն է: Այդ սերիալով տարված՝ Էրդոհանը նույնիսկ հայտարարել էր, որ «քանի դեռ առյուծները չեն սկսել գրել իրենց սեփական պատմությունները, նրանց որսորդները միշտ կլինեն հերոսներ»<sup>18</sup>: Օսմանյան կայսրության երբեմնի փառքի էլ ավելի մոլեգին քարոզչություն է պարունակում հաջորդ հայտնի սերիալը՝ «Վերջին կայսրը», որը պատմում է սուլթան Աբդուլ Համիդի կառավարման տարիների ու նրա կառավարչական տաղանդի մասին: Ի դեպ, այդ «դիզիի» թե՛ կողմնակիցները, թե՛ քննադատները նկատել էին սուլթանի և թուրքիայի նախագահ Էրդոհանի կերպարների նմանությունները: Օրինակ թուրքիայի նախագահի հետևորդները տեսնում էին այդ կերպարներում երկու հպարտ առաջնորդների սիմբիոզը, ովքեր չէին վախենում դիմակայել Արևմուտքին, և ովքեր երազում էին թուրքիան դարձնել կենտրոնական համամահմեդական միասնության երկիր: Իսկ քննադատները մատնանշում էին երկու առաջնորդների բոնապետական կառավարման հակումներն ու պարանոյիկ կախվածությունը հետախուզական ծառայություններից<sup>19</sup>:

Այսպիսով, իրական կամ թաքնված ի՞նչ վտանգներ կարող են պարունակել թուրքական սերիալները հայ հասարակության համար: Առաջին պոտենցիալ կամ իրական վտանգը հայ հասարակության շրջանում այդ օտարածին արժեքների անարգել քարոզչությունն ու տարածումն է: Բանն այն է, որ թուրքական մշակույթը, կենցաղը, սովորույթները, հագուկապը դրական լույսի ներքո ընկալելն ու ընդօրինակելը կարող են լրջորեն վնասել սեփական մշակութային ինքնության գիտակցմանն և պահպանմանը: Ըստ էության, սերիալների միջոցով կա-

<sup>17</sup> Տե՛ս «How Turkish TV is taking over the World», <https://www.theguardian.com/tv-and-radio/2019/sep/13/turkish-tv-magnificent-century-dizi-taking-over-world> (մուտք՝ 15.04.2023)

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը:

րող է տեղի ունենալ շարքային հայ մարդու կամ սերիալ սպառողների «ենթագիտակցականի իսլամիզացիա», իսկ հետագայում նաև՝ կրոնափոխության և իսլամադավանության բացահայտ քարոզչություն: Երկրորդ վտանգավոր միտումը, որը սերիալների միջոցով Թուրքիան անթաքույց իրականացնում է, վերաբերում է ուրիշ մշակույթների և մշակութային արժեքների թուրքացմանը: Այդ սերիալներում հաճախ են հանդիպում հայկական աշխարհագրական տեղանունների, ազգային երգ-երաժշտության, կերակրատեսակների «թուրքացման» երևույթներ, որոնք ներկայացվում են որպես թուրքական «մշակույթի» ձեռքբերումներ: Սերիալների միջոցով տեղի է ունենում նաև լեզվական էքսպանսիա, քանի որ այդ սերիալների մեծ մասը հեռարձակվում է առանց թարգմանության, թուրքական բառամթերքը դառնում է առօրյա-խոսակցականի մաս: Երրորդ, առավելապես քաղաքական ու քաղաքակրթական նշանակություն ունեցող ազդեցությունը վերաբերում է սերիալային արտադրության միջոցով թուրքական պետության կողմից վարվող հատուկ «*պատմական քաղաքականությանը*» կամ «*հիշողության քաղաքականությանը*»: Հատկապես պատմական սերիալների բովանդակությունը էականորեն ձևախեղված է ներկայացվում, փորձ է արվում խմբագրել պատմությունը, որտեղ թուրքական զավթողականությունն ու բարբարոսությունը, բնիկ ազգերին նվաճելու, հարկադիր դավանափոխության և ցեղասպան գործողությունները քողարկվում են մարդկային առաքինությունների, արդարության, ազնվության, նվիրվածության և հերոսների հուզականության լույսի ներքո, որտեղ թուրքականը դառնում է մարդկային դրական գծերի հումանիշ: Սա, իր հերթին, էականորեն բարձրացնում է Թուրքիայի արտաքին դրական իմիջը՝ միաժամանակ թուլացնելով հայ հասարակության զգալի մասի զգոնությունը թուրքական սպառնալիքի հանդեպ:

**«Նոր էլիտաների» ձևավորումը որպես ռազմավարական նպատակ. թուրքական կրթական ծրագրերի սարդոստայնը**

Թուրքական «փափուկ ուժի» կիրառման երկրորդ ռազմավարական ուղղությունը կարելի է համարել տարատեսակ գիտակրթական նախաձեռնություններ կյանքի կոչելը: Հետխորհրդային տարածքում, հատկապես թուրքալեզու պետություններում, 1990-ականներից սկսած լայն տարածում ստացան թուրքական լիցեյները, որոնք հայտնի են նաև «գյուլենական դպրոցներ» անվամբ: Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներում՝ Ղրղզստանում, Ղազախստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում և Ուզբեկստանում, գործում են հարյուրավոր նման դպրոցներ<sup>20</sup>: Իհարկե, 2016 թ. Թուրքիայում հեղաշրջման անհաջող փորձից հետո, որի գլխավոր կազմակերպիչ հռչակվեց ԱՄՆ-ում

<sup>20</sup> Seli u Эргашев А., Гришин О. Образовательная политика Турции в Центральной Азии. // Проблемы постсоветского пространства, 2002, № 9, էջ 322:

գտնվող վտարանդի ընդդիմադիր գործիչ Ֆ. Գյուլենը, որոշ դպրոցներ էրդոդանի պահանջով փակվեցին, սակայն դրանք շարունակում են վայելել մեծ համբավ և համարվում են «էլիտար կրթական հաստատություններ»: Ինչպես արդեն նշվեց, այնտեղ, որտեղ պաշտոնական Անկարայի քաղաքական ազդեցությունն ուժեղ էր, «գյուլենական» դպրոցները կա՛մ փակվեցին, կա՛մ էլ անցան Թուրքիայի կառավարության վերահսկողության տակ: Հատուկ այդ նպատակով 2016 թ. Թուրքիայի խորհրդարանն ընդունեց օրենք կրթության նախարարության կազմում «Մաարիֆ» կրթական հիմնադրամի ստեղծման մասին, որը փաստացի օժտված էր Թուրքիայի կառավարության անունից այլ երկրներում նախակրթարաններից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ բացելու և կրթական ծառայություններ մատուցելու բացառիկ լիազորություններով<sup>21</sup>: Այսօր արդեն այդ հիմնադրամի ենթակայության ներքո են գործում աշխարհի շուրջ 50 պետություններում տեղակայված 450 ինչպես գյուլենական «ֆեթո», այնպես էլ «Մաարիֆ» դպրոցներ<sup>22</sup>: Եթե «գյուլենական» դպրոցների դեպքում հիմնական շեշտը դրվում էր գործունեության երկրում կրթական բարձր որակի ծառայությունների մատուցման ռազմավարության վրա, ապա «Մաարիֆ» կրթական հաստատությունների դեպքում թուրքական կառավարությունը լրիվ ուրիշ ռազմավարական նպատակներ է հետապնդում: Ինչպես նշում է «Ազատության ստոկհոլմյան կենտրոնի» լրագրող Ա. Բոզքուրթը, «Մաարիֆ» հիմնադրամի գործունեության համատեքստում մի շարք մտահոգիչ հանգամանքներ կան, որոնք վերաբերում են քաղաքական իսլամի ծայրահեղական ուղղությունների տարածման, Իրաքում և Սիրիայում գործող իսլամական ահաբեկչական խմբավորումներին գաղտնի աջակցության և այլ գործոններին: Հեղինակն ամեննին պատահական չի համարում, որ այդ հիմնադրամը բացվել է բացառապես Էրդոդանի նախաձեռնությամբ, որի գործունեությունն ուղղված է թուրքահոծ երկրների երիտասարդության շրջանում ի դեմս Էրդոդանի՝ համայն իսլամական աշխարհի մուսուլմանների պաշտպանի, առաջնորդի ու նոր «խալիֆի» կերպարի ձևավորմանն ու քարոզչությանը<sup>23</sup>:

Ե՛լ ավելի լայնածավալ պետական աջակցության ծրագրեր է ֆինանսավորում Թուրքիան բարձրագույն կրթության ոլորտում: Հատկապես վերջին տարիներին էականորեն աճել են այդ ոլորտում կրթական ծառայությունների մատուցման թուրքական առաջարկները: Ըստ վիճակագրական տվյալների՝ Թուրքիայի գիտակրթական հաստատություններում վերջին տասնամյակում արտասահմանյան ուսանողների թիվը եռապատկվել է՝ հասնելով 180 000-ի, իսկ մինչև 2023 թ. նախա-

<sup>21</sup> Տե՛ս Turkish Maarif Foundation, <https://turkiyemaarif.org/page/about-us>, (մուտք՝ 05.06.2023):

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>23</sup> Տե՛ս «Что из себя представляет и какие цели преследует фонд «Маариф», <https://rus.azattyk.org/a/kyrgyzstan-maarif-turkey/29476939.html>, (մուտք՝ 10.07.2023):

տեսվում էր այդ թիվը հասցնել 250 000-ի<sup>24</sup>: Թուրքական բարձրագույն ուսումնական հաստատությունները վարկանիշային աղյուսակում զբաղեցնում են 43-րդ տեղը, որոնցից առնվազն 10-ը ներառված է լավագույն 1000-ի ցանկում<sup>25</sup>: Բարձրագույն կրթության խորհրդի անատոլիական նախագծի շնորհանդեսի ժամանակ երդողանը հայտարարել էր, որ արտասահմանյան ուսանողների համար գրավչության տեսանկյունից Թուրքիան համաշխարհային թոփ տասնյակում է, իսկ 2002-ից սկսած՝ կրթական հաստատությունների թիվն առնվազն եռապատկվել է, որտեղ սովորողների թվաքանակը հնգապատկվել է՝ 1,6 միլիոնից հասնելով 8,4 միլիոնի<sup>26</sup>:

Այսպիսով, Թուրքիան կրթական ոլորտում վարած քաղաքականությամբ հետապնդում է առնվազն մի քանի ռազմավարական նպատակ: Աշխատելով թիրախային երկրների երիտասարդների հետ և ներառելով նրանց իր կրթական ծրագրերում՝ Թուրքիան ձևավորում է իր արտաքին քաղաքականության նկատմամբ առնվազն չեզոք, եթե ոչ լիովին աջակից աշխարհայացքային «սանիտարական գոտի»: Թուրքիայում կրթություն ստացած շատ երիտասարդներ ապագայում կամ արդեն ներկայում, վերադառնալով իրենց քաղաքացիության երկրներ, ընդգրկվում են կառավարող նոր էլիտաների մեջ՝ դառնալով Թուրքիայի ազդեցության գործակալներ: Հայաստանը նույնպես հետ չի մնում այդ ընդհանուր օրինաչափությունից: ՀՀ ներկա կառավարող էլիտայում նույնպես կան մարդիկ, որոնք ուսանել են Թուրքիայում կամ տարբեր հասարակական նախաձեռնությունների շրջանակներում համատեղ ծրագրեր են իրականացրել թուրքերի հետ: Հատկապես հիշատակելի է հանրակրթական դպրոցի դասագրքերում «պատմություն» առարկայի նոր չափորոշիչների շուրջ բարձրացված աղմուկը: Պարզվում է, որ այդ գործում ներգրավված հայ «մասնագետները» թուրքական ՀԿ-ների հետ պատմության դասագրքերի պատրաստման «հարուստ փորձ» ունեն: Ակնհայտ է, որ Թուրքիայի՝ այս ուղղությամբ տարվող «փափուկ ուժի» քաղաքականությունն ուղղված է «ցեղասպան պետության» բարդույթից ազատվելուն ու հայ հասարակության շրջանում այդ երկրի դրական կերպարի ձևավորմանը:

### **Թուրքիայի «փափուկ ուժի» տնտեսական գործիքակազմը. Հայաստանի տնտեսության «աջարականացման» վտանգները**

Ինչ վերաբերում է պետության կողմից «փափուկ ուժի» կիրառման տնտեսական գործիքակազմին, ապա հարկ է նշել, որ «փափուկ ուժի»

<sup>24</sup> Տե՛ս «Турция планирует до 2023 года довести число иностранных студентов в своих вузах до 250 тыс.», <https://www.aa.com.tr/ru>, (մուտք՝ 15.07.2023):

<sup>25</sup> Տե՛ս <https://www.topuniversities.com/university-rankings/world-university-rankings/2023>, (մուտք՝ 16.07.2023):

<sup>26</sup> Տե՛ս «Президент Турции подчеркнул значимость развития системы высшего образования страны», <https://ru.haberler.com/russian-news-1560690/>, (մուտք՝ 18.07.2023):

հայեցակարգի տնտեսական բաղադրիչի վերաբերյալ մասնագիտական դիսկուրսում որոշ տարակարծություններ կան: Օրինակ՝ Ջ. Նայնի սկզբանե տնտեսական գործոնը չէր դիտարկում «փափուկ ուժի» համատեքստում, այլ ավելի շուտ այն համարում էր բռնության ու կոշտ հարկադրանքի կիրառման գործիք՝ որպես «stick and carrot», կամ ամերիկյան ավելի լայն տարածում ունեցող «մտրակի և բլիթի» մեթոդաբանության դրսևորում<sup>27</sup>: Իհարկե, եթե դիտարկենք տարբեր պետությունների կողմից կիրառվող տնտեսական ազդեցության այնպիսի գործիքներ, ինչպիսիք են սանկցիաները, էմբարգոները կամ պրոտեկցիոնիզմի քաղաքականությունը, ապա դրանք, անշուշտ, ավելի շատ բնորոշ են «կոշտ ուժի» հայեցակարգին: Մինչդեռ բարենպաստ ներդրումային միջավայրի, տնտեսական օգնության, «էժան փողերի», անտոկոս վարկերի, հարկային ու մաքսային արտոնությունների տրամադրման քաղաքականությունը կարող է վկայել պետության հենց «փափուկ ազդեցության» գործիքակազմի նախընտրության մասին:

Անշուշտ, մեր տարածաշրջանում աշխարհատնտեսական այլ խոշոր կենտրոններին զուգահեռ՝ Թուրքիան նույնպես կիրառում է «փափուկ ուժի» տնտեսական գործիքակազմը: Մասնավորապես, Խորհրդային Միության կազմալուծումից հետո Թուրքիան բացառիկ հնարավորություն ստացավ ընդլայնելու հետխորհրդային տարածքում իր տնտեսական, քաղաքական ու մշակութային ազդեցությունը: Եթե Հարավային Կովկասի և Միջին Ասիայի նորանկախ հանրապետություններից շատերը բավականին զգուշավոր էին մոտենում Թուրքիայի քաղաքական ազդեցության ընդլայնման նախաձեռնություններին, ապա տնտեսական համագործակցության առաջարկներն ավելի հոժարակամ ընդունեցին: Բանն այն է, որ ԽՍՀՄ կազմալուծմանը զուգահեռ՝ ամբողջությամբ փլուզվել էին նաև նախկին միութենական հանրապետություններին միմյանց կապող տնտեսական կապերն ու հարաբերությունները: Առաջացած վակուումն աստիճանաբար լցվում էր թուրքական կապիտալով, որը ձեռք էր բերել տնտեսական էքսպանսիայի նոր միջավայր: Բանն այն է, որ եվրոպական շուկաներում թուրքական արտադրանքը բախվում էր կոշտ մրցակցության ու ինստիտուցիոնալ խոչընդոտների, մինչդեռ հետխորհրդային տարածքի երկրներում այն ավելի մրցունակ էր ու ավելի գրավիչ: Բացի այդ՝ Թուրքիայի նախագահ Օզալի՝ տնտեսական ազատականացման ու ներկրման փոխարինմանը և արտահանմանը միտված քաղաքականության շնորհիվ թուրքական տնտեսության դրական աճի տեմպերը պահանջում էին նոր սպառման շուկաների յուրացում, որն էլ արագորեն կյանքի էր կոչվում 1990-ականներից սկսած: Ընդամենը մի քանի տարում միայն Ադրբեջանի հետ առևտրաշրջանառությունն աճեց 8 անգամ, իսկ Վրաս-

<sup>27</sup> См. у **Миронова В.** Экономический фактор мягкой силы государства: проблемы идентификации. // Экономика. Налоги. Право, 2020, № 6, т. 13, էջ 18:

տանի դեպքում Թուրքիան դարձավ թիվ մեկ առևտրային գործընկերը՝ դուրս մղելով Ռուսաստանին<sup>28</sup>։ Չնայած Հայաստանի հետ Թուրքիայի 1993 թ. ի վեր փակ սահմանին՝ անցած տարիների ընթացքում Հայաստան-Թուրքիա առևտրաշրջանառությունը պատկառելի չափերի է հասել։ Մասնավորապես, 1995-2021թթ. Հայաստանը Թուրքիայից երրորդ երկրների տարածքով ներկրել է շուրջ 3 միլիարդ դոլարի, այդ նույն ժամանակահատվածում արտահանելով ընդամենը 50 մլն դոլարի ապրանքներ<sup>29</sup>։ Թուրքիայի հետ առևտրաշրջանառության նման բացասական հաշվեկշիռը վկայում է, որ հայկական տնտեսությունը պատրաստ չէ թուրքականի հետ մրցակցությանը, իսկ հայ-թուրքական սահմանի բացման և դիվանագիտական հարաբերությունների վերականգման պարագայում թուրքական կապիտալի և ապրանքների ներհոսքը դեպի Հայաստան կարող է ավելի մեծ չափերի հասնել։ Այս սցենարի զարգացման դեպքում ավելի իրատեսական է թվում թուրքական կապիտալի կողմից հայաստանյան տնտեսության «աջարկանացումը»։ Այսօր Վրաստանի մաս կազմող Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը տնտեսական առումով փաստացի գտնվում է Թուրքիայի ազդեցության գոտում։ Թուրքական տնտեսական ներդրումները ներառում են էներգետիկ և տրանսպորտային նախագծերի, տուրիզմի, շինարարության, թեթև արդյունաբերության և հեռահաղորդակցության ոլորտները<sup>30</sup>։ Վրաստանում գործում են թուրքական կապիտալով 2000-ից ավելի ընկերություններ, իսկ այդ ընկերությունների կողմից վերակառուցված Բաթումի միջազգային օդանավակայանը Թուրքիան օգտագործում է ներքին չվերթների սպասարկման նպատակով<sup>31</sup>։

Այսպիսով, կարելի է փաստել, որ մեր տարածաշրջանում Թուրքիան վարում է տնտեսական էքսպանսիոնիզմի ագրեսիվ քաղաքականություն, իսկ տնտեսական գրավչության թուրքական մոդելը ոչ այլ ինչ է, քան հարևան պետությունների «սողացող կլանման» կիրառական քաղաքականության դասական օրինակ։ Ընդամենը, թուրքական «փափուկ ուժի» հատկապես մշակութային և տնտեսական գործիքակազմի ուսումնասիրությունը թույլ է տալիս այն որակել որպես քաղաքական ռեալիզմի դպրոցին բնորոշ «փափուկ ճնշման» հայեցակարգի պրակտիկ դրսևորում։ Մի բան ակներև է, որ տարածաշրջանի երկրների մշակութային ու տնտեսական «յուրացումից» հետո Թուրքիան առաջ է քաշելու նաև քաղաքական նոր օրակարգեր, որոնց սպասարկման գոր-

<sup>28</sup> Sef u **Габер Е.** Политика Турции на Кавказе и в Центральной Азии в постсоветский период, // Центральная Азия и Кавказ, 2011/3, т. 14, էջ 165:

<sup>29</sup> Sef u «Հայաստան-Թուրքիա առևտուրը 1995-2021-ին. սպառել ենք ավելի քան 3 միլիարդ դոլարի թուրքական ապրանք», <https://www.aniarc.am/2022/01/17/armenia-turketurnout-3-billion-2020/> (մուտք՝ 01.08.2023թ.):

<sup>30</sup> Sef u **Юркодал О.** Инвестиционная политика Турции в Грузии после распада СССР, Российский внешнеэкономический вестник, 2021/7, էջ 126:

<sup>31</sup> Sef u նույն տեղը:

ծում «փափուկ ուժի» գործիքակազմը շարունակելու է իրականացնել «արևելյան օտարակի թմրեցնող գրավչության» գործառույթը:

**ХАЧИК ГАЛСТЯН – Институциональные механизмы стратегии «мягкой силы» Турции.** – В современных международных отношениях концепция «мягкой силы» является одним из важных инструментов реализации внешней политики государства. Многие геополитические центры силы – США, ЕС, РФ, Китай – давно используют в своем внешнеполитическом арсенале стратегии «мягкой силы» и ее новую модификацию – концепцию «умной силы». В последнее время инструментарий «мягкой силы» успешно реализуется также и некоторыми региональными державами. Среди них, в частности, можно выделить Турцию, которая в последние годы значительно расширила спектр своего участия в международных и региональных политических процессах. Кроме этого, современная Турция проявляет явные амбиции по увеличению своего геополитического и геоэкономического влияния в регионах Центральной Азии и Южного Кавказа.

Основная цель статьи - раскрыть особенности использования институциональных механизмов стратегии «мягкой силы» во внешнеполитическом инструментарии Турции. В рамках данного исследования обсуждаются современные концептуальные подходы «мягкой силы», институциональные, культурные и экономические измерения применения турецкой «мягкой силы». Выдвигается тезис о том, что после культурного и экономического «освоения» стран региона Турция будет продвигать новые политические повестки, на службе которых инструментарий «мягкой силы» продолжит выполнять свою ключевую функцию.

**Ключевые слова:** «мягкая сила», «умная сила», «онемелая сила», политика памяти, экономическая экспансия, «ползучее поглощение»

**KHACHIK GALSTYAN – The Institutional Mechanisms of Turkey's "Soft Power" Strategy.** – In modern international relations, the concept of "soft power" plays an important role in the implementation of the state's foreign policy. Many geopolitical centers of power, such as the United States, EU, Russian Federation, China, have long used "soft power" strategies and its new modification - the concept of "smart power" in their foreign policy arsenal. Recently, the tools of "soft power" have also been successfully implemented by some regional states. Among them, in particular, we can emphasize Turkey, which has significantly expanded the range of its participation in international and regional political processes. In addition, modern Turkey shows serious ambitions to increase its geopolitical and geo-economic influence in the regions of Central Asia and the South Caucasus.

The main purpose of the article is to reveal the features of using the institutional mechanisms of "soft power" strategy in Turkey's foreign policy arsenal. Within the framework of this study, modern conceptual approaches of "soft power", institutional, cultural and economic dimensions of the Turkish "soft power" strategy are discussed. The author argues that after the cultural and economic "expansion" of the countries of the region, Turkey will promote new political agendas, in the service of which the "soft power" strategy will continue to perform their key function.

**Key words:** "soft power", "smart power", "numbing power", memory policy, economic expansion, "creeping absorption"

## В ПРЕДДВЕРИИ 10-ЛЕТИЯ ПОДПИСАНИЯ «БОЛЬШОГО ДОГОВОРА» О СОЗДАНИИ ЕАЭС: НОВЫЕ ВЫЗОВЫ И НОВЫЕ ВОЗМОЖНОСТИ

ГРИГОР БАЛАСАНЯН

Все знают, что интеграционные процессы — это прежде всего возможность, которое обязательно нужно использовать для достижения хороших результатов. В современную эпоху глобализации возрастает степень взаимодействия государств во всех сферах жизни. В условиях перехода к многополярности мира большую роль играют региональные союзы. В 2024г. исполняется 10 лет подписания так называемого «Большого договора», которое имело большое значение для формирования ЕАЭС. Более того, Союз формировался именно на основе этого договора. Что касается многовекторных интеграционных процессов на постсоветском пространстве, то ключевым событием для этих процессов стало создание Евразийского экономического союза. В свою очередь, евразийская интеграция является геополитическим проектом в ответ на расширение зоны Европейского Союза (ЕС). Инициатива Евразийского союза изначально была амбициозной. Его целью было создание наднационального союза, подобного ЕС. Можно сказать, что создание Евразийского союза является краеугольным камнем истории интеграционных процессов постсоветского пространства. Изначально Союз создавался как экономическое объединение, целью которого было развитие экономики и экономических связей между странами-участницами Союза. Это особенно имеет большое значение для таких маленьких экономик, как Армения и Киргизия. Для Армении можем сказать, что экспортные возможности республики в страны ЕАЭС выросли почти в 10 раз.

**Ключевые слова:** *договор, ЕАЭС, ЕС, интеграционные процессы, барьеры, международное сотрудничество*

В современном мире свою особую роль имеют интеграционные процессы. Постсоветское пространство не исключение. После распада Советского Союза образовался вакуум, которое поспешили заполнить центры силы. Были предложены несколько интеграционных проекты, каждый из которых имело свое значение и свою конкретную цель. Но их объединяло то, что они были созданы не для обеднения, а для разъединения народов бывшего Советского Союза. В этом плане свою исключительное место имеет ЕАЭС, которое как раз призвано объединить народы, развивать экономику, поддержать имеющиеся гуманитарные связи и сохранять общую Великую историю.

Информационными материалами исследования послужили научные статьи, периодические публикации, официальные страницы государственных учреждений, а также Евразийской экономической комиссии. В ходе исследования использовались общенаучные методы, в том числе системного анализа, методы экспертных оценок и др.

В 1994 г. президент Казахстана Назарбаев первым заговорил о соз-



дании такой организации. Во время первого официального визита в Московский государственный университет имени Ломоносова, упомянув об идее образования Евразийского союза на основе единого экономического пространства и единой оборонной политики, он также добавил, что необходимо создать качественно новые отношения между странами, которые будут основываться на принципах добровольности и равноправия<sup>1</sup>.

Первый шаг в реализации этой программы был сделан в 1995 году. Это было Соглашение о Таможенном союзе, подписанное между Россией, Беларусью и Казахстаном<sup>2</sup>. Целью соглашения было свободное движение товаров, обеспечение свободного экономического сотрудничества между хозяйствующими субъектами и добросовестной конкуренции. Правда, кризис не позволил реализовать Таможенный союз, и только спустя четыре года в Москве президенты Белоруссии, Казахстана, Киргизии, России и Таджикистана подписали договор о Таможенном союзе и Едином экономическом пространстве<sup>3</sup>. И уже 23 мая 2000 г. В ходе межгосударственной встречи в Минске было принято решение о подготовке соглашения о международной интеграции. Наконец, 10 октября в городе Астана между пятью государствами было создано Евразийское экономическое сообщество (Евразийское экономическое сообщество), которое считается основой ЕАЭС<sup>4</sup>.

В ходе неформального саммита 26 августа 2006 г. государства-члены ЕврАзЭС приняли решение о создании Таможенного союза, в соответствии с которым Казахстану, Белоруссии и России было поручено подготовить договорно-правовую базу. И уже в 2011 г. Таможенный союз Беларуси, России и Казахстана начал нормально функционировать. Затем между тремя президентами в Москве были подписаны документы следующего этапа интеграции, а именно:

- Декларация о евразийской экономической интеграции,
- Соглашение о Евразийской экономической комиссии,
- Регламент Евразийской экономической комиссии<sup>5</sup>.

В свое время Председатель Государственной Думы России Нарышкин заявил, что после образования Таможенного союза и Единого экономического пространства государства-партнеры намерены создать наднациональный орган — Евразийский парламент, Таможенный союз и Единое экономическое пространство. Экономическое пространство станет основой будущего Евразийского союза. Нарышкин также добавил, что Евразийская межпарламентская ассамблея, пришедшая на смену Межпарламентской ассамблее ЕврАзЭС, должна разработать основы законодательства в основных сферах

---

<sup>1</sup> «Евразийский Экономический Союз, Архитектура будущего», Годовой отчет 2014, с. 9. [https://eec.eaunion.org/upload/files/paos/library/ЕЕС\\_ar2014.pdf](https://eec.eaunion.org/upload/files/paos/library/ЕЕС_ar2014.pdf)

<sup>2</sup> Соглашение стран СНГ от 20.01.1995 "О Таможенном союзе", <https://legalacts.ru/doc/soglashenie-stran-sng-ot-20011995-o-tamozhennom/>

<sup>3</sup> Договор о Таможенном союзе и Едином экономическом пространстве, <http://cbd.minjust.gov.kg/act/view/ky-kg/17017>

<sup>4</sup> Заявление глав государств Республики Беларусь, Республики Казахстан, Кыргызской Республики, Российской Федерации и Республики Таджикистан об учреждении Евразийского экономического сообщества, <http://www.kremlin.ru/supplement/3310>

<sup>5</sup> Сарсенов А. Правовые основы создания Евразийского экономического союза, Вестник Института законодательства РК, № 4 (45), 2016, с. 153-156. <https://vestnik.zqai.kz/index.php/vestnik/article/view/592/566>

правоотношений и в перспективе стать полноценным Евразийским парламентом и формироваться на основе демократических выборов. Позже Нарышкин также сообщил, что Россия, Беларусь и Казахстан сформировали рабочую группу по формированию будущего парламента Евразийского союза. Инициативы российских парламентариев не получили ожидаемого положительного отклика в парламентах Белоруссии и Казахстана, поскольку не было необходимости спешить с внесением политической составляющей в интеграционные процессы и акцентировать внимание на экономических вопросах интеграции, ведь любой интеграционный проект возможен только при соблюдении самоуправления государств-членов. По этой причине казахстанская сторона сочла подготовку проекта концепции межпарламентского органа преждевременной и отвергла любые политические заявления. Однако после 14 лет работы организация была распущена и стала основой для создания другой организации. Наконец, в 2014 г. 29 мая в Астане был подписан Договор о создании ЕАЭС между Россией, Беларусью и Казахстаном, который вступил в силу с 1-го января 2015г<sup>6</sup>. Армения официально стало членом Союза с 2-го января<sup>7</sup>, а Кыргызстан – с 8-го мая<sup>8</sup>.

Изначально Союз создавался как экономическое объединение, целью которого было развитие экономики и экономических связей между странами-участниками Союза. Это особенно имеет большое значение для таких маленьких экономик, как Армения и Киргизия. Для Армении можем сказать, что экспортные возможности республики в страны ЕАЭС выросли почти в 10 раз. Продукция армянских производителей беспрепятственно экспортируется в страны ЕАЭС. По сравнению с ЕС, куда экспортируется в основном руда, в евразийский рынок экспортируется готовая продукция. И это имеет большое значение для маленькой экономики Армении. И не только Армении. Другие члены Союза также имеют такие возможности. Но также встречаются проблемы и об этом также нужно открыто говорить. В евразийском реестре барьеров, ограничений и изъятий опубликованы списки товаров, в отношении которых одна или несколько членов ЕАЭС применяют барьеры или ограничения. И на все это у всех есть один ответ – защита собственной экономики. Мы все помним «молочные войны» между Казахстаном и Киргизией, непростые экономические отношения РФ и Беларуси. Но на наш взгляд мы все должны работать со всеми производителями Союза, чтобы они в лице другого производителя видели только партнёра, с кем можно работать, создавать кооперации и т. д., а не конфликтовать.

В случае участия в какой-либо региональной организации национальная экономика страны проходит определенный этап трансформации и адаптации. Это главный вызов евразийской интеграции для всех членов ЕАЭС, в том числе и для Армении. Еще одним вызовом интеграции является сложный процесс приведения правовых норм и национального зако-

---

<sup>6</sup> Договор о евразийском экономическом союзе,  
[https://www.economy.gov.ru/material/file/2bbbf9ae33443d533d855bf2225707e/Dogovor\\_ees.pdf](https://www.economy.gov.ru/material/file/2bbbf9ae33443d533d855bf2225707e/Dogovor_ees.pdf)

<sup>7</sup> Присоединение Республики Армения к ЕАЭС  
[https://eec.eaunion.org/comission/department/dep\\_razv\\_integr/prisoedinenie-gosudarstv-k-eaes/ra.php](https://eec.eaunion.org/comission/department/dep_razv_integr/prisoedinenie-gosudarstv-k-eaes/ra.php)

<sup>8</sup> Присоединение Кыргызской Республики к ЕАЭС,  
[https://eec.eaunion.org/comission/department/dep\\_razv\\_integr/prisoedinenie-gosudarstv-k-eaes/kr.php](https://eec.eaunion.org/comission/department/dep_razv_integr/prisoedinenie-gosudarstv-k-eaes/kr.php)

нодательства в соответствие с ЕАЭС. Следующей проблемой является отсутствие эффективного промышленного сотрудничества и кооперации внутри Союза. В создавшихся условиях обостряется конкуренция. В результате вместо координации усилий, направленных на сотрудничество, бизнесмены государств-членов ЕАЭС по инерции вытесняют друг друга с общего рынка, тем самым создавая благодатную почву для еще более острой конкуренции с компаниями из третьих стран. Существует также ряд других проблем, связанных с частичным выполнением странами обязательств по синхронизации денежно-кредитных, фискальных и других элементов экономической политики<sup>9</sup>.

Экономическая целесообразность членства в ЕАЭС давно доказано. Маленькие страны имеют свою долю из так называемого общего бюджета ЕАЭС, где страны перечисляют средства из таможенных сборов. А деньги эти не маленькие.

Как я в выше уже говорил, в ЕАЭС есть и свои проблемы. Это в первую очередь эффективная работа Евразийской экономической комиссии. Дело в том, что порой принятые комиссией решения не выполняются на местах. Нужны конкретные рычаги давления на правительства, чтобы на местах исполнялись решения Комиссии и этим создавались новые рабочие места. Все промышленные мощности стран участниц подлежат обязательной описи. Должен быть создан единый реестр не работающих промышленных мощностей стран ЕАЭС. Перед правительствами должен ставиться вопрос о предоставлении конкретных планов по перезапуске этих предприятий. Финансовые вливания для этой программы можно сделать через Евразийский банк развития, который на сегодняшний день можно сказать отсутствует в экономической жизни Союза.

28-го апреля 2020г. Комиссией было принято решение об объединении спутников РФ, Беларуси и Казахстана для зондирования Земли<sup>10</sup>. Имея в виду научный потенциал Армении было бы желательно включить научные институты национальной Академии Армении в этот проект и этим запустить сборку таких аппаратов и на территории республики. Комиссия ограничилась только принятием решения и все, а на наш взгляд нужно было идти за выполнением этих решений на местах. Понимаем, что инициатива с мест также важна, но Комиссия, как наднациональный орган, также должна активно работать.

Экономика Союза хорошо себя зарекомендовала и в период всемирной пандемии. Страны участницы ЕАЭС были обеспечены всем необходимым. Это касается и продуктов питания, и средств индивидуальной защиты. В то время, когда между странами ЕС и НАТО иногда шли настоящие «масочные войны».

Мы все знаем, что одна из так называемых «4-х свобод» — это свободное перемещение рабочей силы внутри Союза. Это десятки и сотни тысяч рабочих, которые часть года работают в своей стране, а часть – на

---

<sup>9</sup> Манасерян Т. Н. Вызовы и перспективы Евразийской интеграции для экономики Армении, Семь лет членства Армении в ЕАЭС: успехи, уроки и перспективы Евразийской интеграции /Сборник статей/, 2022, с. 11.

<sup>10</sup> Евразийские спутники готовятся к старту, <https://eec.eaeunion.org/news/28-04-2020-1/>

территории Союза, в основном, конечно, в РФ. И поэтому стал вопрос о необходимости официально зафиксировать их рабочий стаж, чтобы при достижении пенсионного возраста они могли предоставить необходимые документы для подсчета стажа и из других стран Союза. Для этого в декабре 2019г. был подписан и в парламентах стран ратифицирован договор ЕАЭС о пенсионном обеспечении<sup>11</sup>, который вступил в силу с 1-го января 2020г. Такого договора нет в ЕС и это говорит о том, что ЕАЭС больше, чем только экономический Союз.

На сегодняшний день есть решение Комиссии о том, что юридические лица из стран ЕАЭС могут участвовать в тендерах на государственные закупки. Если взять Армению, то в 2019-2020гг. представители стран ЕАЭС не могли участвовать в таких тендерах, так как вся информация на сайтах государственных учреждений была на армянском языке. Это была зафиксирована Комиссией, а также была включена в реестр барьеров, ограничений и изъятий. На сегодняшний день мы можем зафиксировать, что этот вопрос решен. Была еще одна проблема в этой отрасли — это не признание электронных подписей юридических лиц из Армении, принимающих участие в государственных тендерах. С радостью хотим констатировать, что в целом эта проблема также решена.

Растёт международный авторитет Союза. Иран, Сербия, Вьетнам, Китай. Это не полный список стран, которые имеют договора о свободной торговле. На очереди Египет, Израиль, Индонезия.

Нужно сказать, что первой страной, с которой было заключено соглашение о свободной торговле, стала Социалистическая Республика Вьетнам. Соглашение о приграничной зоне свободной торговли с ЕАЭС и Вьетнамом вступило в силу 5-го октября 2016г<sup>12</sup>.

Вьетнам является очень привлекательным рынком, при этом экономическая специализация Вьетнама такова, что основные экспортные товары стран ЕАЭС будут дополнять друг друга, а жесткая конкуренция возможна только в некоторых отраслях, которые защищены соглашением. Это выгодно всем сторонам договора. Кроме того, соглашение о свободной торговле с Вьетнамом открывает новые возможности для производителей стран ЕАЭС. По оценкам совместной исследовательской группы, либерализация торговли с Вьетнамом не содержит существенных рисков для экономик стран ЕАЭС. Импорт из Вьетнама составляет около 1% всего импорта из третьих стран в ЕАЭС, при этом основную часть составляет продукция, которая не производится в ЕАЭС в необходимых количествах<sup>13</sup>.

В конце 2015 года началась работа по вопросу заключения времен-

---

<sup>11</sup> Информация по реализации Соглашения о пенсионном обеспечении трудящихся государств-членов Евразийского экономического союза от 20 декабря 2019 г. [https://sfr.gov.ru/grazhdanam/pensionres/pens\\_zagran/~7884](https://sfr.gov.ru/grazhdanam/pensionres/pens_zagran/~7884)

<sup>12</sup> Малеев Ю. Н. Международное управление устойчивым развитием: пределы необходимого и возможного, Московский журнал международного права, № 4 (100) 2015, с. 6. [https://mgimo.ru/upload/iblock/5c3/file\\_8bd7a0b33dfb33e5a028604e1f8f280a.pdf](https://mgimo.ru/upload/iblock/5c3/file_8bd7a0b33dfb33e5a028604e1f8f280a.pdf)

<sup>13</sup> Воронцова Н. А. Либерализация торговли в рамках Евразийского экономического союза (на примере Соглашения ЕАЭС-Вьетнам), 2021, с. 105. [https://mgimo.ru/upload/iblock/5c3/file\\_8bd7a0b33dfb33e5a028604e1f8f280a.pdf](https://mgimo.ru/upload/iblock/5c3/file_8bd7a0b33dfb33e5a028604e1f8f280a.pdf)

ного соглашения, направленного на создание зоны свободной торговли между Исламской Республикой Иран и ЕАЭС, чему способствовало заключение Совместного всеобъемлющего плана действий (СВПД) и отмена санкций против Ирана<sup>14</sup>. 17-го мая 2018г. между Евразийским экономическим союзом и его государствами-членами, с одной стороны, и Исламской Республикой Иран, с другой стороны, было подписано временное соглашение, ведущее к формированию зоны свободной торговли, которое вступило в силу с 27 октября 2019 г. 11-го декабря 2020 года решением №16 Высшего Евразийского экономического совета начались вести переговоры о заключении соглашения о свободной торговле<sup>15</sup>.

17-го февраля 2022г. Армения ратифицировала продление временного соглашения о зоне свободной торговли между Ираном и ЕАЭС. Документ хорошо показал свою эффективность. По данным ЕЭК, по сравнению с допандемическим 2019 годом экспорт Союза в Иран увеличился на 47%, а импорт — на 67%. Сегодня стороны уже ведут переговоры о постоянном соглашении о свободной торговле, кроме того, Тегеран выразил заинтересованность в возможном вступлении в ЕАЭС<sup>16</sup>.

ЕАЭС продолжил развивать переговорные каналы для заключения аналогичных соглашений с другими странами, и одной из таких стран стала Республика Сингапур. Переговоры о заключении соглашения о свободной торговле между государствами-членами ЕАЭС и Сингапуром начались в 2017 году. 1-го октября 2019г. стороны подписали Рамочное соглашение о всестороннем экономическом сотрудничестве, а также Соглашение о свободной торговле товарами<sup>17</sup>. Список стран можно продолжить.

Страны ЕАЭС получили уникальную возможность экспортировать свои товары в эти страны, в том числе и с помощью РЖД. На примере Маленькой Армении мы и представить не могли, что можем иметь особые экономические возможности в торговле с Китаем, или Вьетнамом, в будущем выходить на огромный рынок Индонезии, Египта. Как уже было сказано есть большая вероятность будущего членства Ирана в ЕАЭС. Но правовая база для этого отсутствует, нет парламентской ассамблеи. Наши казахстанские друзья нам все время говорят, что ЕАЭС это экономическая, и только экономическая организация, в которой все правовые вопросы могут решаться на основе правовой базы договора об СНГ. Но, например Иран не является членом СНГ и на него не распространяется этот договор. Уверены, что с политической составляющей Союз еще с быстрыми темпами может развиваться. Она не угрожает суверенитету ни одного из

---

<sup>14</sup> **Иллерицкий Н. И.** «Новые возможности энергетического сотрудничества ЕАЭС и Исламской Республики Иран», Национальный исследовательский институт мировой экономики и международных отношений имени Е. М. Примакова Российской академии наук, Москва, 2018, с. 20-26, V Международная молодежная конференция «Мировая энергетика: основные тенденции, динамика, перспективы», <https://www.imemo.ru/files/File/ru/conf/2018/27042018/Illeretskiy.pdf>

<sup>15</sup> Евразийская экономическая комиссия (ЕЭК). <https://eec.eaeunion.org/commission/department/dotp/torgovye-soglasheniya/iran.php>

<sup>16</sup> **Захиринежад М.** «Свободная торговля Ирана и Евразийского союза позволяет наращивать несырьевой экспорт», «Евразия. Эксперт», <https://eurasia.expert/authors/mahnaz-zahirinejad/>

<sup>17</sup> Евразийская экономическая комиссия (ЕЭК), Республика Сингапур., <https://eec.eaeunion.org/commission/department/dotp/torgovye-soglasheniya/singapore.php>

членов и в этом плане все могут быть спокойны.

Есть еще одно направление, которое на наш взгляд обязательно нужно развивать. Здесь мы можем заимствовать опыт АСЕАН.

В США есть представительство этой организации. Это Совет США-АСЕАН, который был основан в 1984г. Штаб-квартира находится в столице США<sup>18</sup>.

Когда инвесторы из третьих стран изъявляют желание инвестировать в страны АСЕАН, их конкретно ориентируют, где лучше инвестировать по предоставленному бизнес-плану потенциального инвестора. Берется за основу в первую очередь промышленные мощности или логистику того, или иного члена Организации. Такие центры для ЕАЭС можно и нужно открыть в странах Латинской Америки, в частности в Бразилии, в странах арабского мира. Для этого идеально подходят Объединённые Арабские Эмираты, и в странах того же АСЕАН. Нужно говорить о себе, нужно выйти за рамки постсоветского пространства. Это безусловно может благоприятно повлиять на развитие стран участниц ЕАЭС.

В связи с этим остро встаёт проблема логистики внутри ЕАЭС. Как известно Армения не имеет сухопутной границы с другими странами Союза и для нас одним из способов связаться с нашими союзниками остается авиасообщение. Однако здесь у нас еще много проблем. Высокие цены на авиабилеты, отсутствие прямых рейсов мешают развитию Союза. Нужны новые самолеты, дешёвые авиабилеты, чтобы граждане ЕАЭС имели возможность при желании посетить страны Союза. Нужна единая программа развития авиации, а финансовую поддержку может оказать Евразийский банк развития с дешёвыми кредитами.

Как мы видим за небольшие 10 лет сделано не мало. Союз динамично развивается. Расширяется география сотрудничества, все больше стран изъявляют желание на подписание договоров о свободной торговле с ЕАЭС. Растет товарооборот внутри Евразийского экономического союза, что на себе испытывают также простые граждане Союза. Но те вопросы, которые нами были подняты сегодня, можно считать новыми вызовами и новыми возможностями нашего Союза. У нас безусловно есть потенциал и его нужно обязательно использовать.

**ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ – ԵԱՄՍ ստեղծման մասին «Մեծ պայմանագրի» ստորագրման 10-ամյակին ընդառաջ. նոր մարտահրավերներ և նոր հնարավորություններ** – Հանրահայտ է, որ ինտեգրացիոն գործընթացներն առաջին հերթին հնարավորություն են, որոնք պետք է օգտագործել լավ արդյունքների հասնելու համար: Գլոբալացման ժամանակակից դարաշրջանում աճում է պետությունների փոխգործակցության աստիճանը կյանքի բոլոր ոլորտներում: Բազմաբևեռ աշխարհին անցնելու համատեքստում կարևոր դեր են խաղում տարածաշրջանային դաշինքները: 2024 թ. լրանում է այսպես կոչված «Մեծ պայմանագրի» ստորագրման 10-ամյակը, որը կարևոր նշանակություն ունեցավ ԵԱՄՍ ձևավորման համար: Ընդ որում, միությունը ստեղծվել է հենց

<sup>18</sup> Российский союз промышленников и предпринимателей, <https://rspp.ru/activity/cooperation/asean/>

այս համաձայնագրի հիման վրա: Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածքում բազմավեկտոր ինտեգրացման գործընթացներին, ապա դրանց առանցքային իրադարձությունը Եվրասիական տնտեսական միության ստեղծումն էր: Եվրասիական ինտեգրումն իր հերթին աշխարհաքաղաքական նախագիծ է՝ ի պատասխան Եվրամիության (ԵՄ) գոտու ընդլայնման: Դրա նպատակն էր ստեղծել ԵՄ-ին նման վերագգային միություն: Կարելի է ասել, որ Եվրասիական միության ստեղծումը հետխորհրդային տարածքում ինտեգրացման գործընթացների պատմության հիմնաքարն է: Սկզբում միությունը ստեղծվել է որպես տնտեսական միավորում, որի նպատակն էր զարգացնել Միության անդամ երկրների տնտեսությունը և տնտեսական հարաբերությունները: Սա հատկապես կարևոր է փոքր տնտեսությունների համար, ինչպիսիք են Հայաստանը և Ղրղզստանը: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության արտահանման հնարավորությունները ԵԱԵՄ երկրներ աճել են մոտ 10 անգամ:

**Բանալի բառեր** – *պայմանագիր, ԵԱԵՄ, ԵՄ, ինտեգրացիոն գործընթացներ, խոչընդոտներ, միջազգային համագործակցություն*

**GRIGOR BALASANYAN - *On the Approach of the 10<sup>th</sup> Anniversary of the Signing of the “Grand Treaty” on the Creation of the EAEU: new challenges and new opportunities.*** - Everyone knows that integration processes are, first of all, an opportunity that must be used to achieve good results. In the modern era of globalization, the degree of interaction between states in all spheres of life is increasing. In the context of the transition to a multipolar world, regional unions play an important role. 2024 marks the 10<sup>th</sup> anniversary of the signing of the so-called “Great Treaty”, which was of great importance for the formation of the EAEU. Moreover, the Union was formed precisely based on this treaty. As for the multi-vector integration processes in the post-Soviet space, the key event for these processes was the creation of the Eurasian Economic Union. In turn, Eurasian integration is a geopolitical project in response to the expansion of the European Union (EU) zone. The Eurasian Union initiative was initially ambitious. Its goal was to create a supranational union like the EU. We can say that the creation of the Eurasian Union is the cornerstone of the history of integration processes in the post-Soviet space. Initially, the Union was created as an economic association, the purpose of which was the development of the economy and economic relations between the member countries of the Union. This is especially important for small economies such as Armenia and Kyrgyzstan. For Armenia, we can say that the republic’s export opportunities to the EAEU countries have grown almost 10 times.

**Keywords:** *Treaty, EAEU, EU, integration processes, barriers, international cooperation*

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴԻՐՔԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ  
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ՓՍՅԼԱԿ ԵՆԳՈՅԱՆ

Սեփական տնտեսության զարգացման գործում Չինաստանի աննախադեպ հաջողությունները, որոնք ձեռք են բերվել 1980-ականների բարեփոխումների շնորհիվ, թույլ են տվել երկրին ավելի արժանի տեղ զբաղեցնել համաշխարհային քաղաքականության և տնտեսության մեջ: Ստեղծվեցին անհրաժեշտ նախադրյալներ արտաքին քաղաքականության հայեցակարգի հետագա վերափոխման համար՝ համաշխարհային գործընթացներում Չինաստանի դերի ակտիվացման և երկիրը համաշխարհային ուժային կենտրոններից մեկի վերածելու նպատակով, որը հսկայական դեր է խաղում նոր բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման գործում: Այս առումով Չինաստանն իր արտաքին քաղաքականության մեջ սկսեց հիմնվել այնպիսի միջազգային կառույցների վրա, ինչպիսիք են BRICS-ը և ՇՀԿ-ն, ինչպես նաև առաջ քաշել այնպիսի ենթակառուցվածքային նախագծեր, ինչպիսին է «Մեկ գոտի, մեկ ճանապարհը»: ՉՏՀ-ի արտաքին քաղաքականության նոր ռազմավարությունը հակասության մեջ է մտնում վերջին տասնամյակների ընթացքում ձևավորված միաբևեռ աշխարհակարգի հետ, ինչը հանգեցնում է Չինաստանի և Արևմուտքի միջև հարաբերությունների սրմանը՝ չնայած նրանց միջև զարգացած տնտեսական հարաբերություններին: Միևնույն ժամանակ, ՉՏՀ-ի ժամանակակից արտաքին քաղաքականության հայեցակարգում հատուկ տեղ է հատկացվում Ռուսաստանին, որը, Չինաստանի հետ մեկտեղ, դիտարկվում է որպես զարգացող բազմաբևեռ աշխարհակարգի և գլոբալ կայունության երաշխավորներից մեկը:

**Բանալի բառեր** – արտաքին քաղաքական ռազմավարություն, աշխարհակարգ, բազմաբևեռ աշխարհ, աշխարհաքաղաքականություն, աշխարհատնտեսություն, ուժային կենտրոն, տնտեսական զարգացում

ՉՏՀ-ի տնտեսական հզորացումը երկրի՝ համաշխարհային քաղաքականության մեջ ավելի ակտիվ մասնակցության հիմք դարձավ: Ներկայումս ՉՏՀ ղեկավար Մի Չինփինը ակտիվորեն կոչ է անում ուժեղացնել չինական ազդեցությունը համաշխարհային գործընթացներից շատերում՝ «ընդհանուր ճակատագրի հանրույթ»<sup>1</sup> կառուցելու նպատակով: «Ընդհանուր ճակատագրի հանրույթը» նկարագրում է մի աշխարհ, որտեղ տիրում է փոխգործակցություն, նկարագրում է «նոր» մոտեցումը

<sup>1</sup> Ст' у Си Цзиньпин призвал воплотить в реальность идею сообщества с единой судьбой для человечества // «Синьхуа Новости» – <https://russian.news.cn/20230823/46fd8e84524d4449a38e6c102784a0e5/c.html>



միջազգային հարաբերություններին, որը փոխարինում է «հնացածին»: Չինացի քաղաքական գործիչների կարծիքով՝ «ընդհանուր ճակատագրի հանրույթը» ստեղծվում է «ընդհանուր շահերի հանրույթ» և «ընդհանուր պարտավորությունների հանրույթ» ձևավորելով: Ընդհանուր շահերը մոտավորապես համապատասխանում են տնտեսական փոխկախվածության իրավիճակին, երբ պետությունները փոխլրացնում են միմյանց<sup>2</sup>:

«Ընդհանուր ճակատագրի հանրույթի» հետ մեկտեղ՝ Մի Ծինփինը առաջ քաշեց «չին ազգի վերածննդի» գաղափարը, որտեղ կենտրոնական տեղ է գրավում ՉԺՀ-ի բացառիկ դերի մասին գաղափարը՝ որպես խաղաղ զարգացման և միջազգային համագործակցության, ներդաշնակ խաղաղության, չինական ավանդական իդեալների և արժեքների հայեցակարգերը խթանող երկիր: Այս հայեցակարգի շնորհիվ Չինաստանը ներկայումս դարձել է համաշխարհային քաղաքականության կարևոր սուբյեկտ՝ հեռանալով Դեն Սյաոպինի գաղափարից՝ «թաքցնել սեփական ունակությունները, թաքնվել և սպասել բարենպաստ պահի, մեջ չընկնել, բայց պատրաստ լինել գործողությունների»<sup>3</sup>:

Վերջին տարիներին նոր քաղաքականությունը միավորվեց նոր ինստիտուտների հետ, ինչպիսին են՝ Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկը, Շանհայան համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ), ԲՐԻԿՍ-ը, և նոր նախաձեռնությունների հետ, ինչպիսին է տրանսպորտային գոտին, որպեզի կառուցվի «ընդհանուր ճակատագրի հանրույթի» ֆիզիկական հիմքը: Այսպես առաջացավ «Նոր մետաքսի ճանապարհի» ստեղծման գաղափարը, կամ ինչպես այսօր են անվանում այս հայեցակարգը՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ»:

Այս նախաձեռնությունն իր առջև նպատակ է դնում ստեղծել ցամաքային և ծովային ենթակառուցվածքների ճյուղավորված ցանց, որը կմիացնի Եվրոպան, Ասիան և Աֆրիկան հնագույն «Մետաքսի ճանապարհի» երկայնքով և դրանից դուրս: Չինաստանը ձգտում է արագացնել «Մետաքսի ճանապարհի» տրանսպորտային երակների կառուցումը: Շուրջ 150 երկրների ներգրավմամբ<sup>4</sup> աշխարհատնտեսական այս նախագիծը պահանջում է հսկայական ներդրումներ: Morgan Stanley բանկի գնահատմամբ, մինչև 2027 թվականը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծում ներդրումները կկազմեն 1,3 տրիլիոն դոլար<sup>5</sup>: Չի-

<sup>2</sup> Տե՛ս **Хененкова Е.** Дом, который построил Китай: сообщество общей судьбы для всех народов // «Regnum» – <http://regnum.ru/news/2343234.html>

<sup>3</sup> Внешнеполитический процесс на Востоке: Учеб. пособие для студентов вузов / Под ред. Д. В. Стрельцова. – М.: Издательство Аспект Пресс, 2017, с. 269.

<sup>4</sup> Տե՛ս «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծում Չինաստանի հետ համագործակցության համար փաստաթղթեր ստորագրած երկրների ցուցակը // «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի պաշտոնական կայք – [https://www.yidaiyilu.gov.cn/info/iList.jsp?tm\\_id=126&cat\\_id=10122&info\\_id=77298](https://www.yidaiyilu.gov.cn/info/iList.jsp?tm_id=126&cat_id=10122&info_id=77298)

<sup>5</sup> Տե՛ս **Мануков С.** «Один пояс, один путь»: уточнение пути и расширение пояса // «Eurasia Daily» – <https://eadaily.com/ru/news/2019/05/03/odin-poyas-odin-put-utochnenie-puti-i-rasshirenie-poyasa>

նաստանը պատրաստ է ստանձնել դրա իրականացման ծախսերի առ-  
յուծի բաժինը: Հասկանալի է բազմաթիվ երկրների ցանկությունը՝ միա-  
նալու այս նախագծին՝ իրենց տնտեսություններում բազմամիլիոնանոց  
ներդրումներ ապահովելու համար:

Արտերկրում չինական ձեռնարկությունների զարգացման ասո-  
ցիացիայի նախագահ Հե Չժենվեյը 2023 թվականի հունվարին հայտա-  
րարել է, որ Չինաստանն արդեն ավելի քան 1 տրիլիոն դոլար է ներդ-  
րել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը մասնակցող  
երկրներում՝ իրականացնելով ավելի քան 3000 նախագիծ: Դա թույլ է  
տվել ստեղծել ավելի քան 420 հազար աշխատատեղ, աղքատությունից  
դուրս բերել ավելի քան 40 միլիոն մարդու ՉԺՀ-ի գործընկեր երկրնե-  
րում: Նա վստահ է, որ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությու-  
նը շարունակելու է մնալ չինական ներդրումային ներկայության ընդ-  
լայնման հիմնական ուղիներից մեկը<sup>6</sup>:

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագիծը բաղկացած է եկու հիմ-  
նական ուղղություններից՝ հյուսիսային (Ղազախստան (կամ Մոնղո-  
լիա) – Ռուսաստան – Բելառուս – ԵՄ) և հարավային (Պակիստան  
(կամ Կենտրոնական Ասիա) – Իրան – Թուրքիա (կամ Ադրբեջան, Վրաս-  
տան) – ԵՄ): Թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական առումով առավել նա-  
խընտրելի է դառնում հյուսիսային ուղղությունը, քանի որ այն ավելի  
կարճ է, անցնում է ընդամենը 3 երկրների տարածքով և զուրկ է լոգիս-  
տիկայի հետ կապված տարբեր տեխնիկական խնդիրներից: Առավել  
ևս, որ այսօր լուրջ քայլեր են արվում ասիական երկրների միջև համա-  
գործակցությունն ամրապնդելու ուղղությամբ: ՌԴ նախագահ Վլադի-  
միր Պուտինի խոսքով՝ Չինաստանը «Նոր մետաքսի ճանապարհի» գա-  
ղափարն առաջարկել է «Ճիշտ ժամանակին», և որ նախագծի ինտե-  
գրումը տարածաշրջանային այլ նախաձեռնությունների՝ ԵԱՏՄ-ի,  
ՇՀԿ-ի, ինչպես նաև Հարավարևելյան Ասիայի ազգերի ասոցիացիայի  
(ԱՍԵԱՆ) շրջանակներում եվրասիական խոշոր գործընկերության  
հիմք դրեց: 2015 թվականի մայիսին ՉԺՀ-ի և Ռուսաստանի ղեկավար-  
ները Մոսկվայում համաձայնագիր ստորագրեցին «Գոտի և ճանա-  
պարհ» նախաձեռնությունը ԵԱՏՄ-ի հետ համաձայնեցնելու մասին<sup>7</sup>:

Հյուսիսային ուղղությունը թեև ավելի ձեռնտու է, սակայն ուկրաի-  
նական ճգնաժամի և այդ ֆոնի վրա սրվող Ռուսաստան-Արևմուտք հա-  
կամարտության ու հակառուսական պատժամիջոցների կիրառման  
պատճառով Չինաստանը ստիպված է վերագնահատել բոլոր ռիսկերը իր  
միջազգային առևտրի ապահովման համար, ինչի պատճառով «Մեկ գո-  
տի, մեկ ճանապարհ» նախագծում ժամանակավորապես ավելի նպատա-

<sup>6</sup> Տե՛ս Կիտայ нарастит инвестиции в страны «Одного пояса, одного пути» // «CGTN»  
– <https://russian.cgtn.com/news/2023-06-16/1669555721243619330/index.html>

<sup>7</sup> Տե՛ս Լյուցին поприветствовал «Новый шелковый путь» и призвал к интеграции //  
«Мир 24» – <https://mir24.tv/news/16107482>

կահարմար կարող է դառնալ հարավային ուղղությունը, որը անցնում է Կենտրոնական Ասիայի, Մերձավոր Արևելքի և Հարավային Կովկասի երկրների տարածքով: Օրինակ՝ Չինաստանը 2022 թվականին արդեն ուղարկեց բեռնատար գնացք չինական Սիան քաղաքից Ղազախստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռումինիայի, Հունգարիայի, Սլովակիայի և Չեխիայի տարածքներով դեպի գերմանական Մանհեյմ քաղաք<sup>8</sup>:

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության հիման վրա Չինաստանը սկսեց ընդլայնել համագործակցությունը Իրանի հետ, որը ունի ռազմավարական նշանակություն չինական աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի տեսանկյունից: Նախ և առաջ Իրանի տարածքով է անցնում «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության հարավային ուղղությունը, երկիրը գործող երկաթգծային կապեր ունի Պակիստանի (չինական նախագծի կարևորագույն ուղղություններից մեկը անցնում է վիճելի Քաշմիր մարզի տարածքով, ինչը առաջացնում է Հնդկաստանի դժգոհությունը), Թուրքիայի, Ադրբեջանի (Նախիջևանի կողմից, բացի այդ՝ «Հյուսիս – Հարավ» միջանցքի շրջանակներում կառուցվում է Ռեշտ-Աստարա երկաթգիծը)<sup>9</sup>, Թուրքմենստանի, Աֆղանստանի հետ, իսկ Իրաքի հետ վերջին երկու տարվա ընթացքում վարվում են բանակցություններ Շալանչե-Բասրա երկաթգծի բացման մասին<sup>10</sup>: Այս ամենի շնորհիվ Իրանը դառնում է տարբեր ուղղություններով տանող ճանապարհների խաչմերուկ: Բացի այդ, Իրանը ունի էներգակիրների մեծ պաշարներ (բնական գազ՝ աշխարհի 16.4%, 2-րդ տեղ; նավթ՝ 13.5%, 3-րդ տեղ<sup>11</sup>), բավականին զարգացած քիմիական արդյունաբերություն, ինչպես նաև Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական տերություններից է:

2021 թվականի մարտին Չինաստանը և Իրանը ստորագրեցին 25-ամյա պայմանագիր համապարփակ համագործակցության մասին, ինչը շատերի կողմից գնահատվեց որպես պատմական իրադարձություն ոչ միայն իրանա-չինական հարաբերությունների, այլև ամբողջ Մերձավոր Արևելքի համար: Չինաստանի և Իրանի միջև պայմանագրի ստորագրումը երկար աշխատանքի արդյունք է: Երկարաժամկետ համաձայնագրի ստորագրման գաղափարը առաջարկվել է դեռևս 2016 թվականին, երբ ՉԺՀ նախագահ Սի Ծինփինը ժամանեց Թեհրան: Այն ժամանակ դա ընկալվում էր որպես «միջուկային գործարքը» (Գործողությունների համատեղ համապարփակ ծրագիր – ԳՀՀԾ) լրացնող միջոց, որի շնորհիվ Իրանը կկարողանա դուրս գալ տնտեսական և քա-

<sup>8</sup> Տե՛ս և Китай запустил грузовой ж/д маршрут в Германию в обход России // «Вести» – <https://www.vesti.ru/finance/article/2707929#:~:text=20%20апреля%202022.%20Китай%20запустил,маршрут%20проходит%20в%20обход%20России>

<sup>9</sup> Տե՛ս և Россия и Иран договорились о строительстве новой железной дороги в рамках проекта «Север – Юг» // «Российская газета» – <https://rg.ru/2023/05/17/mumbai-stanet-blizhe.html>

<sup>10</sup> Տե՛ս և Между Ираком и Ираном начали строить железную дорогу // «РБК» – <https://www.rbc.ru/rbcfreenews/64f36ac99a794762a1f0cd21>

<sup>11</sup> Տե՛ս և Почему энергетический альянс Ирана и России нежелателен для Европы // «Российская газета» – <https://rg.ru/2022/07/20/takaia-im-dostalas-dolia.html>

ղաքական շրջափակումից<sup>12</sup>:

ԳՀՀԾ-ի ստորագրման պահի դրությամբ Չինաստանը Իրանի համար արդեն առաջին առևտրային գործընկերն էր: Իրանի դիրքորոշումը այն էր, որ պատժամիջոցները հանելուց հետո երկիրը հնարավորություն ստանա մոտավորապես հավասար չափով ներդրումներ ներգրավելու ինչպես Չինաստանից, այնպես էլ արևմտյան երկրներից, ինչի շնորհիվ կարելի էր հավասարակշռություն պահել նրանց միջև և խուսափել որևիցե մեկից կախվածության մեջ ընկնելուց: Սակայն իրավիճակը փոխեց Իրանին զսպելու ամերիկյան քաղաքականությունը (որը սկսվեց ԱՄՆ-ի նախկին նախագահ Դ. Թրամփի օրոք և շարունակվում է մինչ օրս), և եվրոպացիները, հետևելով ԱՄՆ-ին, դադարեցրին համագործակցությունը Բալասական Հանրապետության հետ: Իրանը ստիպված եղավ գնալ մերձեցման Չինաստանի, իսկ հետագայում նաև Ռուսաստանի հետ՝ իր տնտեսական և անվտանգային ոլորտներում հիմնարար խնդիրները լուծելու համար<sup>13</sup>:

Իրանի՝ ՉԺՀ-ի հետ կնքված 25-ամյա համաձայնագրի մանրամասնությունները չեն հրապարակվել, սակայն հայտնի են համագործակցության ոլորտները՝ միջուկային էներգետիկա, նավահանգստային և երկաթուղային ենթակառուցվածք, ռազմական նշանակության տեխնոլոգիաների փոխանակում, նավթագազային ենթակառուցվածք: «The New York Times»-ի տվյալներով՝ Չինաստանը 25 տարվա ընթացքում իրանական տնտեսության մեջ կներդնի 400 մլրդ դոլար<sup>14</sup>: Համագործակցությունը կնպաստի ՉԺՀ-ի դիրքերի ուժեղացմանը՝ որպես Իրանի գլխավոր գործընկեր տնտեսության ոլորտում: Երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը 2022 թվականին կազմել է 15.8 մլրդ դոլար, ընդ որում առևտրի զարգացման ներուժը հսկայական է, եթե հաշի առնենք, որ 2014-ին՝ մինչև նավթի գնի նվազումը և հակաիրանական նոր սանկցիաների կիրառումը, այն կազմել է 52 միլիարդ<sup>15</sup>:

Որոշ տվյալների համաձայն՝ իրանա-չինական համաձայնագրի շրջանակներում կա նաև նախագիծ Պարսից ծոցի ափին չինական ռազմաբազայի կառուցման վերաբերյալ<sup>16</sup>: Պետք է հաշվի առնել, որ Պարսից ծոցում տեղակայված է ամերիկյան նավատորմը, իսկ ծոցի մյուս ափին՝ Քաթարում (Իրանի ափից ընդամենը 200 կմ հեռավորության վրա), տեղակայված են ԱՄՆ-ի և Թուրքիայի խոշոր ավիաբազաներ: Չինաստանի կողմից ռազմաբազայի կառուցումը Իրանում կնշա-

<sup>12</sup> Տե՛ս Что сулит Ирану сотрудничество с Китаем? И почему этим обеспокоен Вашингтон // «ТАСС» – <https://tass.ru/opinions/11038009>

<sup>13</sup> Տե՛ս Что сулит Ирану сотрудничество с Китаем? И почему этим обеспокоен Вашингтон // «ТАСС» – <https://tass.ru/opinions/11038009>

<sup>14</sup> Տե՛ս Срочный друг: Китай и Иран станут стратегическими партнерами на 25 лет // «Известия» – <https://iz.ru/1144341/kirill-senin/srochnyi-drug-kitai-i-iran-stanut-strategicheskimi-partnerami-na-25-let>

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>16</sup> Տե՛ս О военном сотрудничестве Китая и Ирана // «Русстат» – <https://russtrat.ru/analytics/23-marta-2022-0010-9480>

նակի ուժերի հարաբերակցության կտրուկ փոփոխություն ոչ միայն անմիջապես Պարսից ծոցում, այլև ամբողջ Մերձավոր Արևելքում:

Չինաստանը, իրագործելով «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագիծը, լուծում է մի շարք կարևոր խնդիրներ: Նախ և առաջ, բարելավվում է ներքին տնտեսական վիճակը, քանի որ արագ զարգացող չինական տնտեսությունը և բարձրացող կենսամակարդակը ավելի ու ավելի մեծ ռեսուրսներ են պահանջում, ինչը ենթադրում է արտաքին աշխարհի հետ կապող ենթակառուցվածքի զարգացում՝ անհրաժեշտ ապրանքների ներմուծումը ապահովելու և սեփական արտադրանքն արտահանելու նպատակով:

Մյուս շատ կարևոր խնդիրը կապված է աշխարհատնտեսական մարտահրավերների հետ: Բանն այն է, որ Չինաստանի համար ներկայումս շատ մեծ նշանակություն ունի Մալակկայի նեղուցը, որի միջոցով երկիրը ներմուծում է անհրաժեշտ էներգակիրներ (հիմնականում՝ Մերձավոր Արևելքից) և օգտակար հանածոներ աֆրիկյան երկրներից, ինչպես նաև արտահանում է իր արտադրանքը տարբեր երկրներ: Մալակկայի նեղուցը շատ խոցելի է հատկապես վերջերս ՉԺՀ-ի և ԱՄՆ-ի միջև սրվող աշխարհաքաղաքական լարվածության ֆոնին, քանի որ ամերիկյան նավատորմը կարող է փակել այդ նեղուցը և մատակարարման խնդիրներ ստեղծել Չինաստանի համար: Այդ իսկ պատճառով երկրի ղեկավարությունը մշակել է այլընտրանքային (հիմնականում՝ ցամաքային) ուղիների կառուցման նախագիծ, որի միջոցով Չինաստանը կկարողանա ապահովել սեփական տնտեսության հիմնական պահանջները:

ՉԺՀ-ի ղեկավարությունը գիտակցում է, որ սրընթաց զարգացող Չինաստանը շատ լուրջ վտանգ է ներկայացնում ամերիկյան աշխարհակալության համար, ինչի պատճառով ԱՄՆ-ն տարբեր ոլորտներում ճնշում է գործադրում Չինաստանի վրա՝ երկրի զարգացումը դանդաղեցնելու և արտաքին քաղաքականությունը ավելի «կանխատեսելի» դարձնելու նպատակով: Մասնավորապես, ԱՄՆ-ն աջակցում է Սինցզյանի և Տիբեթի անջատողական ուժերին, զենք է մատակարարում Թայվանի հակաչինական իշխանությանը, ինչպես նաև օգտագործում է տեղեկատվական միջոցները Չինաստանի վրա ճնշում գործադրելու համար (Հոնկոնգի հարցում (չնայած ՉԺՀ-ի հիմնավորված մտահոգություններին, քանի որ, ըստ չինացի մասնագետների, լայն ինքնավարություն ունեցող Հոնկոնգը փաստացի դարձել էր արևմտյան երկրների ազդեցության տարածման գործիք, և դա կանգնեցնելու համար Չինաստանը 2020 թվականին օրենք ընդունեց, որի շնորհիվ ուժային կառույցները ստացան լայն արտոնություններ)<sup>17</sup>: Բացի այդ, ԱՄՆ-ն պարբերաբար մեղադրում է ՉԺՀ-ին COVID-19-ի տարածման մեջ, փորձում է ներքա-

---

<sup>17</sup> Ст' и За что боролись, на то и напоролись. Что даст Гонконгу новый закон о безопасности? // «ТАСС»  
[https://tass.ru/opinions/8869789?utm\\_source=yandex.ru&utm\\_medium=organic&utm\\_campaign=yandex.ru&utm\\_referrer=yandex.ru](https://tass.ru/opinions/8869789?utm_source=yandex.ru&utm_medium=organic&utm_campaign=yandex.ru&utm_referrer=yandex.ru)

շել իր կողմը Հնդկաստանին որպես Չինաստանի հակակշիռ, ստեղծեց AUKUS ռազմական կազմակերպությունը (որը անվանեցին «խաղաղ-օվկիանոսյան ՆԱՏՕ»), հակաչինական պայքարին միացրեց Ճապոնիային (որի զինված ուժերը ԱՄՆ-ի աջակցությամբ բավականին արագ զարգացան), սկսեց վարել բարձր մաքսատուրքերի քաղաքականություն չինական ապրանքների նկատմամբ, փակում է Կոնֆուցիոսի ինստիտուտները և իր ազդեցության լծակներով պարտադրում է այլ երկրներին (հատկապես եվրոպական) նման քայլերի դիմել:

Իհարկե, թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Չինաստանի համար որոշակի զսպիչ գործոն են ՉԺՀ-ԱՄՆ զարգացած տնտեսական հարաբերությունները, որոնց վատթարացումը երկու կողմին էլ շատ լուրջ վնաս կարող է պատճառել: ՉԺՀ-ի վիճակագրությամբ՝ 2022 թվականին երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 759,4 մլրդ դոլար (արտահանումը դեպի ԱՄՆ կազմել է 581,7 մլրդ, ներմուծումը՝ 177,6 մլրդ), ինչը 0,6%-ով ավելի է 2021 թվականի համեմատ (755,6 մլրդ): ԱՄԵԱՆ-ից (975,3 մլրդ) և ԵՄ-ից (847,3 մլրդ) հետո ԱՄՆ-ն երրորդ ամենախոշոր առևտրային գործընկերն է Չինաստանի համար: Նրանց հաջորդում են Հարավային Կորեան (362,2 մլրդ), Ճապոնիան (357,4 մլրդ), Թայվանը (319,7 մլրդ)<sup>18</sup>:

Չինաստանը իր հերթին երրորդ առևտրային գործընկերն է ԱՄՆ-ի համար Կանադայից և Մեքսիկայից հետո<sup>19</sup>: Երկիրը դեպի ԱՄՆ հիմնականում արտահանում է տարբեր տեսակի էլեկտրատեխնիկա, տվյալների մշակման սարքավորումներ և կապի միջոցներ, իսկ ԱՄՆ-ից ներմուծում է պրոցեսորներ (Չինաստանը ապահովում է իր պահանջարկը 90%-ով, սակայն որոշ ոլորտների համար ներմուծում է ամենաժամանակակից պրոցեսորներ ԱՄՆ-ից, Հարավային Կորեայից և Թայվանից, որոնք Չինաստանը արտադրել դեռևս չի կարող), ինքնաթիռներ, գյուղատնտեսական ապրանքներ (հիմնականում՝ սոյա), նավթ<sup>20</sup>:

Բացի այդ, Չինաստանը համարվում է ԱՄՆ-ի պետական պարտատուների մեջ ամենամեծ ներդրողներից մեկը: Մինչև ԱՄՆ-ի նախագահ Դ. Թրամփի վարած «առևտրային պատերազմը» այն պահպանվում էր 1,2-1,3 տրլն դոլարի սահմաններում, սակայն այսօր՝ 848,8 մլրդ դոլար է և շարունակում է նվազել: Բացի ՉԺՀ-ից, ԱՄՆ-ի հիմնական վարկատուներն են Ճապոնիան (1,1 տրլն), Մեծ Բրիտանիան (643 մլրդ), Բելգիան (330,9 մլրդ), Լյուքսեմբուրգը (327 մլրդ) և Շվեյցարիան (290 մլրդ)<sup>21</sup>:

Այնուամենայնիվ, չնայած վերը նշված հանգամանքներին, աշխարհաքաղաքական լարվածությունը երկու գերտերությունների միջև

<sup>18</sup> Տե՛ս ՉԺՀ մաքսային գլխավոր վարչության պաշտոնական կայքը – <http://www.customs.gov.cn/customs/302249/zfxxgk/2799825/302274/302275/4794352/index.html>

<sup>19</sup> Տե՛ս Экспорт и импорт США (2011-2022) // «TrendEconomy» – <https://trendeconomy.ru/data/h2/UnitedStatesOfAmerica/TOTAL>

<sup>20</sup> Տե՛ս Какие товары наиболее торгуются между США и Китаем? // «Maps & Data» – <https://dzen.ru/a/Xd488ABwn0aN15Pb>

<sup>21</sup> Տե՛ս Взвешенная стратегия: Китай распродает американский госдолг // «Известия» – <https://iz.ru/1502037/oksana-belkina/vzveshennaia-strategiia-kitai-rasprodaet-amerikanskii-gosdolg>

սրվում է: ԱՄՆ-ն ցանկանում է թուլացնել ՉԺՀ-ի աճող քաղաքական և տնտեսական ազդեցությունը աշխարհում՝ սեփական աշխարհակալության վրա հիմնված միաբնեռ աշխարհը պահպանելու նպատակով, իսկ Չինաստանը, իր հերթին, նպատակ ունի չեզոքացնել իր զարգացումը զսպելու ամերիկյան քաղաքականությունը և տապալել համաշխարհային դուլարային համակարգը:

Այսօրվա դրությամբ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Թայվանի հիմնախնդիրը: Երբ 1980-ական թվականներին ՉԺՀ-ում սկսվեցին շուկայական բարեփոխումները, և տնտեսությունը սկսեց սրընթաց աճել, Թայվանում իշխող Գոմինդան կուսակցությունը, չնայած մեծ հակասություններին, սկսեց աստիճանաբար մերձենալ մայրցամաքային Չինաստանի հետ, ինչն ընկալվում էր երկու կողմից որպես շատ լուրջ ձեռքբերում: Վերջապես երկու չինական պետությունները կապեր հաստատեցին, և միավորման հնարավորություն հայտնվեց՝ թեև ոչ մտտավոր ապագայում և երկարատև բանակցություններից հետո: Թայվանի բնակչությունը չի կորցրել իր չինական ինքնագիտակցությունը և միշտ էր ցանկանում միանալ իր պատմական հայրենիքին՝ սկզբնական շրջանում «մեկ երկիր, երկու համակարգ» սկզբունքով: Այդ ընթացքը այս կամ այն կերպ շարունակվում էր մինչև 2016 թվականը, երբ Թայվանում իշխանության եկավ բացահայտ հակաչինական և արևմտամետ Դեմոկրատական առաջադիմական կուսակցությունը (ԴԱԿ): ՉԺՀ-Գոմինդան երկխոսությունը ուշ թե շուտ կնպաստեր Թայվանի վերադարձին Չինաստանի կազմի մեջ, սակայն արտաքին միջամտությունը խանգարեց իրադարձությունների բնականոն ընթացքին:

Այսօր իշխող ԴԱԿ-ը կողմ է Թայվանի անկախության հաստատմանը, Չինաստանի Հանրապետության անվանափոխմանը Թայվանի Հանրապետության (օրինակ՝ Լիտվան արդեն բացեց հենց «Թայվանի» ներկայացուցչություն, ինչի պատճառով ՉԺՀ-ն պարզապես ջնջեց Լիտվային իր մաքսային գրանցամատյանից)<sup>22</sup>, «թայվանական» ինքնության տարածմանը չինական ինքնության փոխարեն<sup>23</sup>, ինչպես նաև ռազմաքաղաքական հարաբերությունների հաստատմանը ԱՄՆ-ի և նրա խաղաղովկիանոսյան դաշնակիցների հետ: Արդյունքում Թայվանը սկսեց ավելի արագ տեմպերով զենք գնել ԱՄՆ-ից, ավելի հաճախ հայտարարել նոր հրթիռների ստեղծման կամ էլ նմանատիպ ամերիկյան հրթիռների տեղադրման մասին (մինչև 1200 կմ հեռահարությամբ, ինչը փակում է Չինաստանի ամենախիտ բնակեցված ավիամերձ տա-

<sup>22</sup> Տե՛ս և Китайские таможенники «обнулили» Литву и закрыли путь литовским товарам // «Eurasia Daily» – <https://eadaily.com/ru/news/2021/12/03/kitayskie-tamozhenniki-obnulili-litvu-i-zakryli-put-litovskim-tovaram>

<sup>23</sup> Տե՛ս և Taiwan or the Republic of China? Island grapples with question of identity as Double Tenth celebrations play down nationalism // «South China Morning Post» – <https://www.scmp.com/news/china/politics/article/3032211/taiwan-or-republic-china-island-grapples-question-identity>

րածքները)<sup>24</sup>, պարբերաբար գորավարժություններ անցկացնել՝ իբր «չինական սպառնալիքից» պաշտպանվելու համար, կապեր հաստատել ԱՄՆ-ի պաշտոնական անձանց հետ: Որպես աջակցության նշան՝ 2022 թվականի օգոստոսին Թայվան ժամանեց պետական պաշտոնյա Նենսի Փելոսին՝ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակը, ինչը, ըստ ՉԺՀ-ի, «մեկ Չինաստանի» սկզբունքի կոպիտ խախտում է:

Այս ամենը դրդապատճառ դարձավ ՉԺՀ-ի բավականին կոշտ արձագանքի: Չինաստանի պաշտպանության նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Թան Քեֆեյը հայտարարեց. «Վաշինգտոնն ավելի ու ավելի է անտեսում «մեկ Չինաստանի» սկզբունքը: Մեր բանակը վճռականորեն կկասեցնի կղզու այսպես կոչված անկախությունն ապահովելու ցանկացած փորձ, ինչպես նաև անջատողականների գործողությունները և արտաքին ուժերի միջամտությունը Չինաստանի ներքին գործերին»<sup>25</sup>: Այդ ժամանակվանից սկսած՝ ՉԺՀ-ն պարբերաբար անցկացնում է գորավարժություններ<sup>26</sup> Թայվանի շրջակայքում՝ փաստացի ցույց տալով կղզու խոցելիությունը և հասկացնելով, որ Թայվանի միացումը ցանկալի է խաղաղ ճանապարհով:

Դրա մասին հայտարարում են տարբեր պաշտոնյաներ: Մասնավորապես, 2023 թվականի մայիսին ՉԺՀ-ի արտաքին գործերի նախարար Ցին Գանը ասաց. «ՉԺՀ-ի կենտրոնական կառավարությունը ձգտում է Թայվանի հետ վերամիավորվել խաղաղ ճանապարհով, սակայն, հաշվի առնելով ԱՄՆ-ի աջակցությամբ թայվանցի անջատողականների կղզին մայրցամաքից մեկուսացնելու փորձերը, չի բացառում նաև այլ մեթոդներ»<sup>27</sup>:

Խնդրի խաղաղ լուծման հարցում Չինաստանը լուրջ աշխատանք է կատարում ընդդիմադիր Գոմինդանի հետ, որի դիրքերը շարունակում են մնալ ուժեղ, ինչը ցույց տվեցին 2022 թվականի նոյեմբերի տեղական ընտրությունները Թայվանում, որտեղ Գոմինդանը հաղթեց մարզերի մեծ մասում, իսկ Թայպեի քաղաքապետ ընտրվեց Չան Կայշիի ծոռը՝ Չան Վանանը: Թայվանի նախագահ Ցայ Ինվենը, որը ցանկանում էր տեղական ընտրությունները ներկայացնել որպես անհնազանդություն Չինաստանին, հետագայում հրաժարական է տվել ԴԱԿ-ի նախագահի պաշտոնից: Դա լավ առիթ կարող է դառնալ Գոմինդանի հաղթանակի համար 2024 թվականի նախագահական և խորհրդարանական ընտրություններին:

---

<sup>24</sup> St' u Sankei: Тайвань намерен начать производство ракет с дальностью полёта до 1200 км // «Russia Today» – <https://russian.rt.com/world/news/993765-taiwan-rakety-dalnost>

<sup>25</sup> Минобороны Китая: Позиция США по Тайваню вынуждает армию КНР готовиться к войне // «Российская Газета» – <https://rg.ru/2022/11/04/minoborony-kitaia-poziciia-ssha-rotajvaniu-vynuzhdaet-armiiu-knr-gotovitsia-k-vojne.html>

<sup>26</sup> St' u BC Китая успешно отработали поставленные на учениях вокруг Тайваня задачи // «РИА Новости» – <https://ria.ru/20230410/ucheniya-1864247443.html>

<sup>27</sup> Глава МИД КНР: Пекин хочет мирного объединения с Тайванем, но не исключает других методов // «ТАСС» – <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/17701603>



Չինաստանի և ԱՄՆ-ի հետաքրքրությունը Թայվանի նկատմամբ բացատրվում է նաև մեկ այլ շատ կարևոր հանգամանքով. Թայվանը ապահովում է կիսահաղորդիչների համաշխարհային շուկայի մոտ 60%-ը: Միայն առանձին վերցրած TSMC-ն (Taiwan Semiconductor Manufacturing Company) զբաղեցնում է շուկայի 54%-ը<sup>28</sup>: Կիսահաղորդիչները պրոցեսորների արտադրության կարևորագույն բաղադրիչներից են, իսկ եթե հաշվի առնենք էլեկտրական սարքավորումների նշանակությունը ժամանակակից տնտեսության համար, ապա կիսահաղորդիչների արտադրությունը ռազմավարական նշանակության ոլորտ է:

Ընդ որում, TSMC-ն 2022 թվականին առաջիններից է սկսել արտադրել 3 նանոմետրի (նմ) կիսահաղորդիչներ<sup>29</sup> (այնինչ, այսօրվա դրությամբ ամենագարգացածը դեռ համարվում են 28-5 նմ կիսահաղորդիչները. ինչքան չափսը փոքր է, այդքան ավելի է աճում պրոցեսորի արտադրողականությունը, և քչանում է էներգիայի ծախսը): Այդ իսկ պատճառով Չինաստանի համար շատ կարևոր է վերահսկողություն հաստատել այս տեխնոլոգիաների և, ըստ էության, պրոցեսորների համաշխարհային շուկայի նկատմամբ, ինչը անհրաժեշտ է տեխնոլոգիական ոլորտում առաջատար դիրքեր ունենալու համար: Դա, իհարկե, անթույլատրելի է ԱՄՆ-ի տեսանկյունից, և նա ցանկանում է իր տարածքում կառուցել նմանատիպ գործարաններ կամ նույնիսկ տեղափոխել 3 նմ կիսահաղորդիչների արտադրությունը Թայվանից Ամերիկա, որպեսզի Չինաստանը չտիրանա այդ տեխնոլոգիաներին: Մեկը արդեն կառուցում է TSMC-ն, նաև կա պայմանավորվածություն Ճապոնիայում գործարան կառուցելու մասին: ԱՄՆ-ում կառուցվող գործարանը կբացվի արդեն 2024 թվականին, սակայն հենց 3 նմ կիսահաղորդիչների արտադրությունը կսկսվի 2026 թվականից ոչ շուտ<sup>30</sup>: Բացի այդ, թայվանական Foxconn կազմակերպությունը ստորագրել է համաձայնագիր Հնդկաստանի հետ Թամիլնադ նահանգում էլեկտրական սարքերի գործարանի կառուցման մասին (ավարտը նախատեսված է 2024-ին)<sup>31</sup>:

Ուստի Չինաստանը կատարում է պատասխան քայլեր. սահմանափակումներ է դնում համակարգչային տեխնիկայի արտադրության համար անհրաժեշտ հումքի, առաջին հերթին հազվագյուտ հողային մետաղների (որոնց համաշխարհային արտադրության 70%-ը Չինաստանն է)

---

<sup>28</sup> Տե՛ս Как конфликт Китая и Тайваня может отразиться на поставках полупроводников // «Euronews» – <https://ru.euronews.com/next/2023/04/12/the-world-runs-on-semiconductors-and-tensions-between-china-and-taiwan-put-their-supply#:~:text=Ha%20долю%20Тайваня%20приходится%20производство,как%20Apple%2C%20Qualcomm%20и%20Nvidia>

<sup>29</sup> Տե՛ս TSMC запустила серийное производство 3-нм чипов // «Хайтек+» – <https://hightech.plus/2022/12/29/tsmc-zapustila-seriinoe-proizvodstvo-3-nm-chipov>

<sup>30</sup> Տե՛ս Производитель чипов вложит до \$40 млрд в строительство заводов в США // «РБК» – <https://www.rbc.ru/business/07/12/2022/638ff30e9a794783ec641d57>

<sup>31</sup> Տե՛ս Apple Supplier Foxconn Plans \$500 Million Component Plants in India // «Bloomberg» – <https://www.bloomberg.com/news/articles/2023-07-31/apple-supplier-foxconn-plans-500-million-india-component-plants#xj4y7vzkg>

տանում է)<sup>32</sup>, ինչպես նաև շափյուղաների արտահանման նկատմամբ: Այս ամենը նշանակում է, որ Չինաստանը կշարունակի ամրապնդել դիրքերը համաշխարհային տնտեսության մեջ:

Վերջին տասնամյակի ընթացքում ակտիվ զարգացան Չինաստանի տնտեսական հարաբերությունները ԵՄ-ի հետ: Ապրանքների և ծառայությունների երկկողմ առևտուրը վերջին տասը տարվա ընթացքում աճել է ավելի քան 60%-ով՝ հասնելով տարեկան 847,3 մլրդ դոլարի<sup>33</sup>: Եվրոպական երկրներից ամենախոշոր առևտրային գործընկերը Գերմանիան է (227,6 մլրդ)<sup>34</sup>, որի կազմակերպությունները շատ ակտիվ գործում են չինական շուկայում և վերջին տարիներին բացել են այնտեղ բազմաթիվ ձեռնարկություններ:

ԵՄ-ին խիստ անհրաժեշտ են չինական մեծ ներդրումներ նավահանգիստներում, երկաթուղիներում, հեռահաղորդակցության և էներգետիկ համակարգերում. այդ հնարավորությունից օգտվեցին այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հունաստանը, Իտալիան և Պորտուգալիան, իսկ Չինաստանին հնարավորություն տրվեց որոշակի ազդեցություն ունենալու 27 երկրների դաշինքի ներսում և ստանալու որոշ տեխնոլոգիաներ Եվրոպայից՝ սեփական տնտեսական խնդիրները լուծելու համար: Իտալիան նույնիսկ պաշտոնապես միացավ Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծին և COVID-19 համաճարակի թեժ փուլում ձգտեց խորացնելու իր հարաբերությունները ՉԺՀ-ի հետ<sup>35</sup>: Սակայն նրանց միջև տնտեսական կապերի խորացումը նաև անհանգստություն առաջացրեց ԵՄ-ում, քանի որ Չինաստանը ձեռք էր բերում ռազմավարական որոշ ընկերություններ: Ֆրանսիայի և Գերմանիայի առաջնորդները, մասնավորապես, մտահոգված են այն բանով, որ Չինաստանի կողմից առանցքային ընկերություններ գնելը կարող է խաթարել ԵՄ ազգային անվտանգության համակարգը:

Նշենք, որ Չինաստանն իսկապես հետաքրքրվում է եվրոպական ենթակառուցվածքով և բաժնեմասեր է գնում եվրոպական ընկերություններում, առաջին հերթին՝ նավահանգիստներում: Դա կարևոր նշանակություն ունի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» համաշխարհային նախագծի հաջող ավարտի համար, որի գլխավոր նպատակներից մեկը հենց չինական արտադրողներին եվրոպական շուկային կապելն է: Եթե հաջողվի կյանքի կոչել այդ նախագիծը, ՉԺՀ-ն կդառնա աշխարհաքաղաքական առաջատար խաղացող, որը կարող է լրջորեն մրցակ-

---

<sup>32</sup> Տե՛ս «Прибыль Китайской корпорации редкоземельных металлов в III квартале выросла на 122,5% // «ТАСС» – <https://tass.ru/ekonomika/16160079>

<sup>33</sup> Տե՛ս **Исаев М.** Любовь прошла, но Евросоюз не спешит разводиться с Китаем // «Regnum» – <https://regnum.ru/news/2993831.html>

<sup>34</sup> Տե՛ս ՉԺՀ մաքսային գլխավոր վարչության պաշտոնական կայքը – <http://www.customs.gov.cn/customs/302249/zfxgk/2799825/302274/302275/4794352/index.html>

<sup>35</sup> Տե՛ս **Исаев М.** Любовь прошла, но Евросоюз не спешит разводиться с Китаем // «Regnum» – <https://regnum.ru/news/2993831.html>

ցել ԱՄՆ-ի հետ՝ աշխարհում իր ազդեցությունը տարածելու համար, քանի որ ձեռք կբերի ԱՄՆ-ից անկախ սեփական գլոբալ տրանսպորտային ենթակառուցվածքը<sup>36</sup>:

ԱՄՆ դեկավարությունը, հասկանալով դա, բացահայտորեն հայտարարել է, որ թույլ չի տալու, որ այս նախագիծը հաջողվի: Նա խստիվ դեմ է արտահայտվել, որ չինական ընկերությունները վերահսկողություն իրականացնեն եվրոպական նավահանգիստների նկատմամբ: Ըստ այդմ՝ Բայթյան և Հարավային Եվրոպայի երկրները ստիպված էին դադարեցնել արդեն նախանշված գործարքները Չինաստանի հետ: Ուստի չինական ընկերությունները այժմ եվրոպական տրանսպորտային ենթակառուցվածքը ձեռք են բերում միջնորդների օգնությամբ<sup>37</sup>:

2020-ի կեսերին հրապարակված ԵՄ-ի ծրագիրը, ըստ որի՝ օտարերկրյա արդյունաբերական սուբսիդիաների նկատմամբ կկիրառվեն նույն խիստ կանոնները, որոնք ԵՄ-ի կառավարությունը օգտագործում է միության ներսում՝ հակազդելու ապօրինի պետական օգնությանը, միայն ակնհայտ նշանն է այն բանի, որ Չինաստանի կիրառած տնտեսական մոդելը չափազանց մտահոգում է ԵՄ-ին: Միության արտաքին գործերի նախարար Ժոզեպ Բորելը անթաքույց խոսում է Չինաստանի մասին որպես ԵՄ-ի «մրցակցի»՝ սրելով քաղաքական հոետորաբանությունը, որն անշեղորեն աճել է վերջին տարիներին<sup>38</sup>:

Իրավիճակը սկսեց ավելի բարդանալ 2022 թվականին, երբ Ռուսաստան-Արևմուտք հակամարտությունը չափազանց սրվեց: ԱՄՆ-ն ու ԵՄ-ն սկսեցին ճնշում գործադրել տարբեր երկրների, մասնավորապես Չինաստանի վրա՝ պարտադրելով դադարեցնել համագործակցությունը Ռուսաստանի հետ և սպառնալով պատժամիջոցներ կիրառել արդեն ՉԺՀ-ի դեմ: Սակայն Չինաստանը ոչ միայն չկանգնեցրեց, այլև ավելի խորացրեց Ռուսաստանի հետ համագործակցությունը վերջին երկու տարում: Իսկ հակաչինական պատժամիջոցները (եթե դրանք կիրառվեն) կարող են գրեթե մահացու դառնալ հենց արևմտյան երկրների տնտեսության համար, ինչը նրանք շատ լավ հասկանում են: Արևմտյան տարբեր առևտրային կազմակերպությունների գործունեությունը հիմնականում կենտրոնացված է հենց Չինաստանում՝ իր հսկայական սպառման շուկայով, և անկայունության ցանկացած դրսևորում չափազանց ցավոտ հետևանքներ կարող է ունենալ տվյալ կազմակերպությունների համար:

Բացի այդ, եվրոպացիները վերջին տարիներին իրենց առաջ նպատակ են դրել զարգացնել կանաչ էներգետիկան, իսկ այս ոլորտում

<sup>36</sup> Տե՛ս **Крайняя У.** Китай стремится скупить весь мир: что они замыслили // «Investing» – <https://ru.investing.com/news/economy/article-2273457>

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>38</sup> Տե՛ս **Исаев М.** Любовь прошла, но Евросоюз не спешит разводится с Китаем // «Regnum» – <https://regnum.ru/news/2993831.html>

անվիճելի առաջատարը հենց Չինաստանն է: Կանաչ էներգետիկայի ցանկացած սարքավորում պահանջում է հազվագյուտ հողային մետաղներ, իսկ դրանց համաշխարհային արտադրության մեծ մասը վերահսկվում է, ինչպես արդեն նշեցինք, Չինաստանի կողմից: Ավելին, հենց Չինաստանում է կենտրոնացված արևային պանելների համաշխարհային արտադրության մոտ 85%-ը<sup>39</sup>: Հողմային տուրբինների արտահանման ոլորտում նույնպես երկիրը առաջատարներից է (2018 թվականին ՉՇՀ-ի բաժինը համաշխարհային շուկայում կազմում էր մոտ 30%, իսկ 2022-ին՝ արդեն զբաղացրեց պատվերների ընդհանուր քանակի 70%-ը)<sup>40</sup>: Եթե հակառուսական պատժամիջոցներին գումարվեն հակաչինականները, ԵՄ-ի և ԱՄՆ-ի տնտեսությունների համար դա կհանգեցնի չափազանց ծանր հետևանքների:

Աշխարհաքաղաքական լարվածության ֆոնին ԵՄ-ի երկրները սկսում են ավելի շատ ընկնել ԱՄՆ-ի ազդեցության տակ և հայտնում են իրենց աջակցությունը Թայվանին (նույնիսկ ռազմական նավեր են ուղարկում Խաղաղ օվկիանոս)<sup>41</sup>, բարձրացնում են ՉՇՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը, մասնավորապես Հոնկոնգում և Սինցյանում՝ անտեսելով Չինաստանի հնարավոր կոշտ պատասխանը, իսկ Իտալիան, որը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության մասնակից էր, 2023 թվականին որոշում ընդունեց դուրս գալ այս նախագծից<sup>42</sup>: Մակայն, միևնույն ժամանակ, առանձին վերցրած, ԵՄ պետությունների բարձր պաշտոնյաներ 2023 թվականի գարնանը մեկը մյուսի հետևից ժամանեցին Չինաստան (մասնավորապես՝ Ֆրանսիայի նախագահ Մակրոնը և Գերմանիայի արտգործնախարար Բերբոքը)<sup>43</sup>: Ընդ որում, ուշագրավ են նաև ամերիկյան բիզնեսի ներկայացուցիչների այցերը Չինաստան վերջին ամիսների ընթացքում (օրինակ Իլոն Մասքի, Բիլ Գեյթսի և Ջեյմի Դայմոնի)<sup>44</sup>: Պատճառներից մեկը այն է, որ արևմտյան երկրները և ձեռնարկատերերը մտահոգված են Խաղաղ օվկիանոսում սրվող հակամարտությամբ, չեն ցանկանում խզել առևտրային կապերը ՉՇՀ-ի հետ և, ամենայն հավանականությամբ, քննարկել են հետագա արգելքները շրջանցելու հնարավորությունները:

<sup>39</sup> St' u Заработать на Европе: Китай производит 84% солнечных батарей в мире // «Новые Известия» – <https://newizv.ru/news/2022-09-01/zarabotat-na-evrope-kitay-proizvodit-84-solnechnyh-batarey-v-mire-362239>

<sup>40</sup> St' u Китай укрепил роль лидера в строительстве надводных ветрогенераторов // «Глобальная энергия» – <https://globalenergyprize.org/ru/2022/09/08/kitaj-ukrepil-rol-lidera-v-stroitelstve-nadvodnyh-vetrogeneratorov/>

<sup>41</sup> St' u Остров нападения: как ЕС и США решили помочь Тайваню // «Известия» – <https://iz.ru/1242061/nataliia-portiakova/ostrov-napadeniia-kak-es-i-ssha-reshili-pomoch-taivaniu>

<sup>42</sup> St' u СМІ: Італія планує вийти з ініціативи Китаю «Один пояс – один путь» // «РІА Новості» – <https://ria.ru/20230509/italiya-1870651174.html>

<sup>43</sup> St' u Глава МИД ФРГ едет в Китай, чтобы сорвать договоренности Макрона? // «Российская газета» – <https://rg.ru/2023/04/13/mantry-berbok-ne-ponraviatsia-pekinu.html>

<sup>44</sup> St' u Билл Гейтс впервые с 2019 года прибыл в Китай // «ТАСС» – <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/18011955>

Այնուամենայնիվ, չնայած Արևմուտքի հետ զարգացած տնտեսական հարաբերություններին, ՉՏՀ-ի ժամանակակից արտաքին քաղաքական հայեցակարգում առանձնահատուկ տեղ է հատկացվում Ռուսաստանին: Չինական ռազմավարության համաձայն՝ Ռուսաստանը Չինաստանի հետ մեկտեղ համարվում է գլոբալ աշխարհի կայունության երաշխավոր և ԱՄՆ-ի միակողմանի մոտեցումներին հակադրվող պետություն, ինչի մասին վկայում են ՉՏՀ-ի պետական գործիչների հայտարարությունները<sup>45</sup>:

ԽՄՀՄ-ի փլուզումից հետո ռուս-չինական հարաբերությունները, իհարկե, համեմատաբար բարձր մակարդակի վրա էին պահպանվում, պետություններին նույնիսկ հաջողվեց լուծել խորհրդային տարիներին առաջացած տարածքային խնդիրները: Սակայն բավականին երկար ժամանակ այդ հարաբերությունները չունեին ռազմավարական համագործակցության բնույթ: Իրավիճակը փոխվեց վերջին տասը տարում, երբ արևմտյան երկրները սկսեցին ավելի մեծ ճնշում գործադրել ռազմական և տնտեսական առումով արագ հզորացող Ռուսաստանի և Չինաստանի վրա (Արևմուտքի քաղաքական գործիչները պարբերաբար հայտարարում են երկու երկրների զսպման անհրաժեշտության մասին), ինչը փաստացի նպաստեց երկու պետությունների մերձեցմանը:

Չինաստանին զսպելու ամերիկյան ռազմավարության մեջ մտնում է նաև Ռուսաստանի թուլացումը, ուստի ԱՄՆ-ն (հաճախ Եվրոպայի ձեռքերով) զինում է Ուկրաինային՝ հույս ունենալով, որ ձգձգվող պատերազմը և պատժամիջոցները կարող են հանգեցնել սոցիալական խռովությունների Ռուսաստանում (ինչի հավանականությունը, սակայն, բավականին ցածր է՝ հաշվի առնելով հասարակության համախմբվածությունը և պատժամիջոցների գրեթե չեզոքացումը հիմնականում հենց Չինաստանի շնորհիվ): Այս ամենը ՉՏՀ-ի ղեկավարությունը հասկանում է և իր հնարավորությունների շրջանակներում (չինական բիզնեսի դեմ հնարավոր պատժամիջոցները ամեն դեպքում ցանկալի չեն) աջակցում է Ռուսաստանին՝ սկսած քաղաքական հայտարարություններից, վերջացրած արևմտյան երկրների արտադրանքի փոխարինմամբ և նույնիսկ Ռուսաստանի ռազմական արդյունաբերության համար կարևոր սարքավորումների մատակարարմամբ<sup>46</sup>:

Կան մի շարք գործոններ, որոնք բարձրացնում են Ռուսաստանի կշիռը ՉՏՀ-ի արտաքին քաղաքական ռազմավարության մեջ: Բացի այն բանից, որ Ռուսաստանը ունի Չինաստանի հետ ընդհանուր հակառակորդ, ՌԴ-ն ռազմաքաղաքական ուժային կենտրոն է, միջուկային զենքի քանակով զբաղեցնում է առաջին տեղը աշխարհում (մոտ 6000), ունի

<sup>45</sup> Տե՛ս Глава МИД КНР заявил, что отношения Пекина и Москвы принесут глобальный мир и стабильность // «ТАСС» – <https://tass.ru/politika/17372141>

<sup>46</sup> Տե՛ս OPEC launches its 2020 Annual Statistical Bulletin // OPEC-ի պաշտոնական կայք – [https://www.opec.org/opec\\_web/en/press\\_room/6045.htm](https://www.opec.org/opec_web/en/press_room/6045.htm)

մեծ փորձ տիեզերքի ուսումնասիրության բնագավառում, աշխարհում առաջինը ստեղծեց հիպերձայնային զենք (որը գրեթե անհնար է խոցել), ինչպես նաև ունի ռազմաքաղաքական ազդեցություն Հարավային Կովկասում ու Կենտրոնական Ասիայում և խոչընդոտում է Թուրքիայի ազդեցության տարածումը մինչև չինական Մինցզյան-Ուլդուրյան ինքնավար մարզ:

Բացի այդ, Ռուսաստանը ունի էներգակիրների մեծ պաշարներ (գազ՝ համաշխարհային պաշարների 24%-ը՝ 1-ին տեղ; ածուխ՝ 17%, 2-րդ տեղ<sup>47</sup>; նավթ՝ 6%, 6-րդ տեղ, սակայն արտահանմամբ՝ 2-րդ տեղ<sup>48</sup>), վերահսկում է հարստացված ուրանի համաշխարհային արտադրության գրեթե կեսը<sup>49</sup>, ունի գյուղատնտեսական ապրանքների և պարարտանյութերի համաշխարհային շուկայում մեծ բաժին (պարարտանյութերի արտահանում՝ 14,5%, 1-ին տեղ<sup>50</sup>; ցորենի արտահանում՝ 25%, 1-ին տեղ<sup>51</sup>), իսկ Չինաստանը տարբեր էներգակիրների, պարարտանյութերի և սննդամթերքի ամենախոշոր ներմուծողներից է:

Այս ամենը հաշվի առնելով՝ Չինաստանը կարող է դառնալ համաշխարհային կենտրոն և առնվազն պահպանել իր ներքին կայուն զարգացումը Ռուսաստանի հետ համագործակցելով: Թե՛ Չինաստանը, թե՛ Ռուսաստանը փաստացի ցանկանում են պաշտպանվել արտաքին (և ընդհանուր) վտանգներից և այդ նպատակով աջակցում են միմյանց տարբեր ոլորտներում, քանի որ մեկի ուժեղացումը նպաստում է մյուսի դիրքերի ամրապնդմանը ևս:

Չինաստանն ու Ռուսաստանը փորձում են աշխարհին ներկայանալ որպես այլընտրանքային ռազմաքաղաքական, տնտեսական և քաղաքակրթական-արժեքային նոր բևեռի առաջամարտիկներ: Ավելի ու ավելի ակնհայտորեն է դրսևորվում այս երկրներում առաջնային համարվող բարոյական և հոգևոր արժեքների հակադրումը նեոլիբերալ վարքագծային նորմերին և ասլանտիզմին:

Չինաստանը վերջին 13 տարում Ռուսաստանի խոշորագույն առևտրային գործընկերն է: 2022 թվականին Ռուսաստանի և Չինաստանի միջև ապրանքաշրջանառությունը գերազանցել է 190 միլիարդ

---

<sup>47</sup> St u Уголь в мире: добыча, экспорт, импорт, запасы, применение, перспективы // «LinDeal» – <https://lindeal.com/trends/ugol-v-mire-dobycha-ehksport-import-zapasy-primenenie-perspektivy>

<sup>48</sup> St u Топ стран по добыче нефти: когда закончатся запасы в России // «РИА Новости» – <https://ria.ru/20220413/neft-1783302785.html#:~:text=Самые%20обеспеченные%20нефтяными%20месторождениями%20страны%2C,-%2066%2C5%25%20ее%20мировых%20запасов>

<sup>49</sup> St u Сколько урана Россия поставляет и кому? // «Аргументы и Факты» – [https://aif.ru/money/market/skolko\\_urana\\_rossiya\\_postavlyaet\\_i\\_komu](https://aif.ru/money/market/skolko_urana_rossiya_postavlyaet_i_komu)

<sup>50</sup> St u Экспорт и производство удобрений в мире: обзор рынка фосфорных, азотных и калийных подкормок // «LinDeal» – <https://lindeal.com/trends/ehksport-i-proizvodstvo-udobrenij-v-mire-obzor-gynka-fosfornykh-azotnykh-i-kalijnykh-podkormok>

<sup>51</sup> St u Крупнейшие экспортеры зерна (пшеницы) в мире: топ 10 стран лидеров отрасли // «LinDeal» – <https://lindeal.com/news/krupnejshie-ehksportery-zerna-pshenicy-v-mire-top-10-stran-liderov-otrasli>

դուլարը, ինչը 116 տոկոսով ավելի է, քան տասը տարի առաջ<sup>52</sup>: Ընդ որում, վերջին տարիներին երկու երկրները նաև նկատելիորեն ամրապնդել են համագործակցությունը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության և Եվրասիական տնտեսական միության միջև:

Ռուսաստանը Չինաստանին առավելապես էներգառեսուրսներ է մատակարարում: Այսպես, Ռուսաստանից Չինաստան մատակարարումների ընդհանուր ծավալի ավելի քան 70%-ը կազմում են նավթը, խողովակաշարային գազը, հեղուկ գազը, ածուխն ու մագույթը: ՉԺՀ-ն ՌԴ-ից ներմուծում է նաև հանքանյութեր, փայտանյութ, գյուղատնտեսական արտադրանք և ծովամթերք: Չինաստանը Ռուսաստան է արտահանում կենցաղային էլեկտրոնիկա, էքսկավատորներ, ավտոմեքենաներ, միկրոպրոցեսորային բլոկներ, հագուստ և լայն սպառման ապրանքներ: Ռուսաստանից էներգառեսուրսների ներմուծման վրա չեն ազդել նույնիսկ COVID-19-ի սահմանափակումները: Իհարկե սպառումը կրճատվել է, և Չինաստանը կրճատել է նավթի գնումները, բայց ոչ Ռուսաստանի հաշվին, անգամ ավելացրել է ռուսական նավթի ներմուծումը 8,2%-ով<sup>53</sup>:

Չինաստանի և Ռուսաստանի միջև ռազմատեխնիկական համագործակցությունը շարունակում է մնալ բարձր մակարդակի վրա: Ռուսաստանը Չինաստանի սպառազինության գլխավոր մատակարարն է (տարեկան մոտ 15 մլրդ դոլարի, չի բացառվում նաև համագործակցության գաղտնի կողմը, որը հաշվի չի առնվում վիճակագրության մեջ): Վերջին քսան տարում Չինաստանը Ռուսաստանից ձեռք է բերել 178 «Сy-27» և «Сy-30» կործանիչներ, 24 ժամանակակից «Сy-35» կործանիչներ, հարյուրավոր ավիաշարժիչներ «J-10»-ի (հիմնադրվել է МиГ փորձակոնստրուկտորական բյուրոյի հետ համատեղ), ռուսական «Сy-33» (J-15), «Сy-27» (J-11) կործանիչների չինական պատճենների, հինգերորդ սերնդի նորագույն «J-20» կործանիչի համար (փորձագետների տվյալներով՝ ստեղծվել է ռուսական «МиГ-1.44»-ի հիման վրա, որի տեխնոլոգիաները 2000-ականների սկզբին վաճառվել են Չինաստանին): Բացի այդ, Չինաստանը ձեռք է բերել Ռուսաստանից «С-400» զենիթահրթիռային համալիրներ և տարբեր նշանակության շուրջ 350 ուղղաթիռ: Խորհրդային «Т-72» տանկի հիման վրա ստեղծվել են մի քանի տեսակի ժամանակակից տանկեր, «HQ-9» զենիթահրթիռային համալիրը «С-300»-ի պատճենն է, իսկ «HQ-17» ՋՀՀ-ն մշակվել է ռուս մասնագետների հետ համատեղ (ռուսական «Տոբ» համալիրի հենքի վրա): Բացի այդ, Չինաստանը և Ռուսաստանը պարբերաբար անցկացնում են համատեղ ցամաքային, օդային և ծովային զորավարժություններ (դրանք հատկապես

<sup>52</sup> St' u Novaya epoxa rossiysko-kitayskikh otnosheniy: itogi vizita Si Цзиньпина в Москву // «НТВ» – <https://www.ntv.ru/novosti/2753799/>

<sup>53</sup> St' u Kitay в 2022 году увеличил импорт нефти из России на 8,2% // «ТАСС» – <https://tass.ru/ekonomika/16843821>

հաճախակիացել են վերջին երկու տարում՝ ինչպես աշխարհում, այնպես էլ Խաղաղովկիանոսյան տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակի սրման համապատկերում)<sup>54</sup>:

Ռուսաստանն օժանդակում է Չինաստանին հրթիռային հարձակման նախազգուշացման համակարգի ստեղծման հարցում<sup>55</sup>, ինչն աննախադեպ աջակցություն է ՉԺՀ-ի պաշտպանունակության բարձրացման առումով, քանի որ նախկինում նման համակարգ ունեին միայն Ռուսաստանն ու ԱՄՆ-ն: Ռուսաստանի կողմից Չինաստանին այդպիսի բարդագույն ռազմական տեխնոլոգիաների տրամադրումը նշանակում է երկու երկրների ռազմական համագործակցության հետագա ընդլայնում և հարաբերությունների անցում որակապես նոր մակարդակի՝ ռազմավարական և բազմակողմանի գործընկերության:

Ինչ վերաբերում է Ուկրաինական ճգնաժամին, ապա ՉԺՀ-ն թեև աշխատում է չեզոք դիրքորոշում պահպանել՝ կոչ անելով ճգնաժամը լուծել քաղաքական միջոցներով ու բանակցություններով, այնուամենայնիվ ԱՄՆ-ի վրա է դնում առճակատումը հրահրելու պատասխանատվությունը: ՉԺՀ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մաո Նինի կարծիքով՝ ԱՄՆ-ն ուկրաինական ճգնաժամի խոշորագույն կազմակերպիչն է: Նրա պնդմամբ՝ ամերիկյան իշխանությունները պետք է դադարեցնեն զենք փոխանցել Ուկրաինային, քանի որ դրանով միայն ձգձգում են հակամարտությունը: «Անհրաժեշտ է պատասխանատու կերպով նպաստել շուտափույթ ապաեսկալացմանը և բարենպաստ միջավայր ու պայմաններ ստեղծել շահագրգիռ կողմերի համար՝ խաղաղ բանակցություններ վարելու»<sup>56</sup>, – նշել է Մաո Նինը: ՉԺՀ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը կարծում է, որ եթե ամերիկացիներին իսկապես մտահոգում է ուկրաինացի ժողովրդի անվտանգությունը, ապա նրանք «պետք է դադարեն այնտեղ սպառազինություն ուղարկել և պատերազմի հաշվին հարստանալ»<sup>57</sup>: Ընդ որում, հարկ է նկատի առնել, որ ՉԺՀ արտաքին քաղաքականության համար, որը երկար տարիներ հիմնված էր չեզոքություն և հավասար հեռավորություն պահպանելու վրա, նման հայտարարությունները դիտվում են բավականին համարձակ և լուրջ:

Ռուս-չինական հարաբերությունների մակարդակը բարձր գնահատականի է արժանացել ՉԺՀ պաշտոնյաների կողմից: 2022 թվականի

---

<sup>54</sup> St' u Военно-техническое сотрудничество России и Китая. Досье // «ТАСС» – <https://tass.ru/info/2228966>

<sup>55</sup> St' u Как Россия поможет защитить Китай от ракетного нападения? // «РСМД» – <https://russiancouncil.ru/analytics-and-comments/interview/kak-rossiya-pomozhet-zashchitit-kitay-ot-raketskogo-napadeniya/>

<sup>56</sup> Официальный представитель МИД КНР Мао Нин заявила, что США должны прекратить поставлять оружие на Украину // «ИноСМИ» – <https://inosmi.ru/20230130/vooruzhenie-260152208.html>

<sup>57</sup> Նույն տեղում:



դեկտեմբերին, Ուկրաինայում Ռուսաստանի կողմից հատուկ ռազմական գործողության իրականացման և արևմտյան երկրների կողմից Չինաստանին ուղղված Ռուսաստանին չաջակցելու կոչերի համապատկերում, արտաքին գործերի նախարար Վան Յին (ներկայումս՝ ՉԿԿ կենտկոմի արտաքին գործերի հանձնաժողովի գրասենյակի ղեկավարը) հայտարարել է, որ «Չինաստանի և Ռուսաստանի միջև հաստատված հարաբերությունները ժայռի պես ամուր են: Դրանք ենթակա չեն միջամտության և սադրանքների, դրանք չեն վախենում իրավիճակային մեծ փոփոխություններից»: Այնուհետև հավելել է. «Վերջին մեկ տարում Չինաստանն ու Ռուսաստանը հաստատուն կերպով աջակցել են միմյանց՝ պաշտպանելու իրենց հիմնական շահերը, և քաղաքական ու ռազմավարական փոխադարձ վստահությունն է՛լ ավելի է ամրապնդվել»<sup>58</sup>:

Իր վերաբերմունքն է արտահայտել նաև ՉԺՀ պաշտպանության նախարար Լի Շանֆուն. «Մեր հարաբերությունները շատ ամուր են: Դրանք ավելին են, քան Սառը պատերազմի ժամանակաշրջանի ռազմաքաղաքական դաշինքները, կառուցվում են չմիավորման սկզբունքների վրա..., և դրանք շատ հաստատուն են»<sup>59</sup>: Հարկ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ դեռևս 2018 թվականից ԱՄՆ-ն պատժամիջոցներ է սահմանել Լի Շանֆուի նկատմամբ՝ Ռուսաստանից «Су-35» կործանիչների և «С-400» ՁՀՀ-ի գնման գործարքներին մասնակցելու համար<sup>60</sup>, սակայն հենց նա նշանակվեց պաշտպանության նախարար 2023 թվականի մարտին:

Հատուկ ուշադրության է արժանի Չինաստանի նախագահ Սի Ծինփինի՝ 2023 թվականի մարտի 20-22-ը Մոսկվա կատարած այցը: Եռօրյա հազեցած բանակցություններն ընթացան ընդգծված բարեկամական մթնոլորտում: Վլադիմիր Պուտինը և ՉԺՀ նախագահը քննարկեցին երկկողմ համագործակցության ամենակարևոր հարցերը, ինչպես նաև ստորագրեցին նոր դարաշրջան թևակոխող հարաբերությունների խորացման մասին հայտարարություն: 2023 թվականի մարտին վերընտրվելուց հետո Սի Ծինփինը հենց Ռուսաստանն ընտրեց արտասահմանյան այցի առաջին երկիր (ինչպես նաև 2013 թվականին առաջին անգամ ընտրվելուց հետո): Հանդիպման ժամանակ Սի Ծինփինը հայտարարեց. «Չինաստան-Ռուսաստան կապերը արդեն դուրս են եկել երկկողմ հարաբերությունների շրջանակներից և կենսական նշանակություն ունեն ժամանակակից աշխարհակարգի և մարդկության ճակատագրի համար»: Իսկ մեկնելուց առաջ դիմեց Ռուսաստանի նախագահին. «Այժմ տեղի են ունենում փոփոխություններ, որոնք չեն

<sup>58</sup> В МИД КНР заявили об укреплении стратегического взаимного доверия с Россией // «РИА Новости» – <https://ria.ru/20221225/knr-1841164500.html>

<sup>59</sup> Министр обороны КНР Ли Шанфу: Отношения России и Китая превосходят военные союзы холодной войны // «Российская газета» – <https://rg.ru/2023/04/17/ministr-oborony-knr-li-shanfu-otnosheniia-rossii-i-kitaia-prevoshodiat-voennye-soiuzy-holodnoj-vojny.html>

<sup>60</sup> Տե՛ս Минобороны КНР возглавил попавший под санкции США из-за России генерал // «РБК» – <https://www.rbc.ru/politics/12/03/2023/640d438b9a79471cee2e1cb6>

եղել վերջին հարյուր տարում: Երբ մենք միասին ենք, մենք գործի ենք դնում այդ փոփոխությունները»<sup>61</sup>:

Մի Ծինփինի այցը Մոսկվա աճող աշխարհաքաղաքական լարվածության համապատկերում վկայում է նոր՝ որպես այլընտրանք արևմտյանին, աշխարհաքաղաքական ուժի կենտրոնի ձևավորման մասին, որը կոչված է իր շուրջը համախմբելու Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի պետությունները (հեռանկարում, հնարավոր է նաև Եվրոպայի մի մասը), որոնք ցանկանում են արևմտյան երկրներից ավելի անկախ, ինքնուրույն քաղաքականություն վարել: Ընդ որում, Չինաստանն ու Ռուսաստանը պարզապես կարիք չունեն պաշտոնապես դաշինք կնքելու: Երբ երկու երկրների հարաբերությունները «ավելին են, քան սառը պատերազմի ժամանակաշրջանի ռազմաքաղաքական դաշինքները», դա վկայում է լիակատար փոխըմբռնման և շահերի ու նպատակների ընդհանրության գիտակցման մասին: Այսինքն՝ խոսքը արտաքին քաղաքականության մեջ դիրքորոշումների համաձայնեցման և գործողությունների կոորդինացման մասին է: Դա ակնհայտորեն երևում է Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում Ռուսաստանի և Չինաստանի վարած քաղաքականությունից, որտեղ շատ հիմնախնդիրներ են կուտակվել «Արևմուտքի գաղութային քաղաքականության» պատճառով, ինչպես ոչ առանց հիմքի հայտարարեց Վլադիմիր Պուտինը 2022 թվականի աշնանը<sup>62</sup>: Ռուսաստանը հանդես է գալիս որպես ռազմական, էներգետիկ և պարենային անվտանգության երաշխավոր, իսկ Չինաստանը՝ տնտեսության տարբեր ոլորտներում խոշոր ներդրող, ինչը միջազգային ասպարեզում այս երկու պետություններին դարձնում է փոխլրացնող և մեծացնում է նրանց գրավչությունը զարգացող երկրներից շատերի համար:

Հաշվի առնելով եվրասիական տարածքում համաաշխարհային նոր բևեռների ձևավորումը՝ զարգացող երկրներից շատերը սկսում են խորացնել հարաբերությունները այդ կենտրոնների, հատկապես Չինաստանի հետ: Այսպիսով, միջազգային ասպարեզում Չինաստանի նշանակալի հաջողությունները վկայում են ամբողջ աշխարհում աշխարհաքաղաքական լանդշաֆտի աստիճանական փոփոխության մասին, և աշխարհակարգը, որտեղ գերիշխում էր Արևմուտքը՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ, նորով փոխարինելու մասին՝ Չինաստանի և նրա դաշնակիցների գլխավորությամբ:

---

<sup>61</sup> Си Цзиньпин - Путину: Сейчас идут перемены, которых не было 100 лет // «Российская газета» – <https://rg.ru/2023/03/21/si-czinpın-putinu-sejchas-idut-peremeny-kotoryh-ne-bylo-100-let.html>

<sup>62</sup> St u Страны Запада так и остались колониальными, уверен Путин // «Вести» – <https://www.vesti.ru/article/2967639>

**ПАЙЛАК ЕНГОЯН – Укрепление конкурентных позиций Китая в геополитических и геоэкономических процессах.** – Беспрецедентные успехи Китая в деле развития собственной экономики, достигнутые благодаря преобразованиям 1980-х годов, позволили стране занять более достойное место в мировой политике и экономике. Были созданы необходимые предпосылки для последующей трансформации внешнеполитической концепции в сторону активизации роли Китая в мировых делах и превращению страны в один из мировых центров силы, играющей огромную роль в формировании нового многополюсного миропорядка. В связи с этим Китай в своей внешней политике стал опираться на такие международные объединения, как БРИКС и ШОС, а также выдвигать такие инфраструктурные проекты как «Один пояс, один путь». Новая внешнеполитическая стратегия КНР вошла в противоречие со сложившейся за последние десятилетия однополюсной моделью мироустройства, что привело к обострению отношений между Китаем и Западом, несмотря на развитие экономические отношения между ними. При этом в современной внешнеполитической концепции КНР особое место уделяется России, которая наряду с самим Китаем рассматривается как один из гарантов формирующегося многополюсного мира и глобальной стабильности.

**Ключевые слова:** внешнеполитическая стратегия, мировой порядок, многополюрный мир, геополитика, геоэкономика, центр силы, экономическое развитие

**PAYLAK YENGOYAN – The Strengthening of China's Competitive Positions in Geopolitical and Geo-Economic Processes.** – China's unprecedented success in developing its own economy, achieved thanks to the reforms in 1980s, allowed the country to take a more worthy place in world politics and economics. The necessary prerequisites were created for the subsequent transformation of the foreign policy concept towards enhancing China's role in world affairs and turning the country into one of the world centers of power, playing a huge role in the formation of a new multipolar world order. In this regard, China in its foreign policy began to rely on such international associations as BRICS and the SCO, as well as put forward such infrastructure projects as "Belt and Road". The new foreign policy strategy of the PRC came into conflict with the unipolar model of the world order that had developed over the past decades, which led to a worsening of relations between China and the West, despite the developed economic relations between them. At the same time, in the modern foreign policy concept of the PRC a special place is given to Russia, which, along with China itself, is considered as one of the guarantors of the forming multipolar world and global stability.

**Key words:** foreign policy strategy, world order, multipolar world, geopolitics, geoeconomics, center of power, economic development

## THE ROLE OF THE MINSK GROUP IN THE NAGORNO-KARABAKH CONFLICT: CURRENT CRISIS AND THE IMPORTANCE OF PRESERVING THE EXISTING MEDIATION FORMAT

SUREN SARGSYAN, ANAHIT MURADYAN,  
AIDA GEVORGYAN, VAHAKN MANOOGIAN

OSCE Minsk Group has been the main mediating body to deal with the Nagorno-Karabakh conflict since 1992. For around 30 years the three Co-Chairs of the Minsk Group- Russia, USA and France, have been productively cooperating on the matter. Minsk Group was believed to be an exclusive forum where the Western and Russian conflicting interests did not hinder the Minsk Group’s mission to provide ways to solve the conflict. However, since the February 2022 Russian-Ukrainian war the cooperation between these countries within the Minsk Group has been largely paralyzed.

Unfortunately, this coincided with the aftermath of Nagorno-Karabakh 44-day war in 2020, constant border skirmishes and Azerbaijani aggression and invasion into sovereign territory of the Republic of Armenia. The more internal struggles the Minsk Group experiences, the more regional security suffers. Different actors come up with individual efforts trying to establish themselves as the main mediators between Armenia and Azerbaijan. Under such circumstances there are no balancing mechanisms to restrain the mediating sides from advancing mutually contradicting initiatives which stem from their interests. Hence, this article advocates the importance of the role of the Minsk Group as a body uniting the main mediating actors at the same time being the only body that has the mandate to mediate on issues relating to Nagorno-Karabakh conflict. The article analyzes all the Nagorno-Karabakh conflict resolution plans proposed by the Minsk Group Co-Chairs, the Minsk Group activities during the 2016 and 2020 wars, the stalemate in the negotiations after the 2018 “Velvet revolution” in Armenia as well as the current crisis within the Minsk Group and the importance of preserving the Minsk Group as the main mediating body in the Nagorno-Karabakh conflict.

**Keywords:** *Nagorno-Karabakh, OSCE Minsk Group, negotiation process, aggression, regional conflicts*

### The Resolution Plans Proposed by the Minsk Group

The formation of the OSCE Minsk Group (previously the CSCE), the main mediating body of the Nagorno-Karabakh conflict for the past 30 years, can be traced back to 1992. The CSCE became involved in the conflict starting in February 1992, after a special mission of the CSCE, headed by former Chairman of the International Helsinki Federation Karel Schwarzenberg, visited Armenia, Azerbaijan, and Nagorno-Karabakh. Based on the results of the visit, a report was created, which was discussed during sessions of the CSCE Committee of Senior Officials in February and March of 1992. The first additional meeting of the CSCE Council on March 24, 1992, is of particular importance. During this meeting, a decision was adopted to

hold a conference with the participation of Armenia, Azerbaijan, Belarus, Germany, Italy, Russia, USA, Turkey, France, Czechoslovakia, Sweden, and "elected and other representatives of Nagorno-Karabakh as interested parties." Belarus proposed its capital Minsk as a venue for the negotiations. Hence, the negotiation process became known as the Minsk group (though the meeting in Minsk never occurred). Instead, states met in Rome between the 1st and 5th of June 1992, at the invitation of Italy. This was followed by four meetings (June 15-20, June 29 - July 6, July 31-August 5, and September 7-10 in 1992). These meetings eventually led to the creation of the Minsk Group, tasked with aiding Armenia and Azerbaijan in resolving the conflict. In December 1994, during the CSCE summit in Budapest, a decision was adopted to establish co-chairmanship, with the first co-chairs being Russia and Sweden. In April 1996, Finland replaced Sweden.<sup>1</sup>

In 1997, the permanent co-chairmanship of the OSCE Minsk Group was established, being led by Russia and the USA. In 1997, Russia, the USA, and France became the main mediating actors of the Nagorno-Karabakh conflict heading the Minsk Group. However, permanent members of the Minsk Group also include Belarus, Germany, Italy, Sweden, Finland, and Turkey, along with Armenia and Azerbaijan. Also, the OSCE Troika is a permanent member on a rotating basis.<sup>2</sup>

According to the Mandate of the Co-Chairmen of the Conference on Nagorno-Karabakh under the auspices of the OSCE, the tasks of the Minsk Group include but are not limited to

- the development of "a common basis for negotiations with the parties to the conflict";
- conducting the "negotiations with the parties to the conflict for the conclusion of a political agreement on the cessation of the armed conflict";
- promotion of "direct contacts, as appropriate, including substantial talks among the parties to the conflict;
- Joint visits or, when appropriate, separate visits on an agreed basis to "the region of conflict to maintain contacts with parties to the conflict concerning the aforementioned and other related issues," and so forth.<sup>3</sup>

OSCE Minsk Group has made several proposals for the resolution of the Nagorno-Karabakh conflict. Those proposals include the "package" deal, "step-by-step" approach, and "common state" solutions. Nonetheless, the parties have rejected these proposals for a variety of underlying reasons. The first proposal, offered to the conflicting parties in July 1997, was called a "package" deal as it sought to combine all the issues at stake and provide a comprehensive package agreement for even the most sensitive problems.<sup>4</sup>

The package deal encompassed two agreements. In Agreement I, the par-

---

<sup>1</sup> The OSCE Minsk Process, MFA of Artsakh, <http://www.nkr.am/en/osce-minsk-process>, (Accessed .03.2022)

<sup>2</sup> OSCE Minsk Group, <https://www.osce.org/minsk-group/108306>, (Accessed 10. 03.2023).

<sup>3</sup> Mandate of the Co-Chairmen of the Conference on Nagorno Karabakh under the Auspices of the OSCE ("Minsk Conference") Adopted by the Chairman-in-Office, Vienna, March 23, 1995, <https://www.osce.org/files/f/documents/f/f/70125.pdf>, (Accessed 10.03.2023).

<sup>4</sup> **Terrence H. P.**, Minsk Group Mediation of the Nagorno-Karabakh Conflict: Confronting an "Intractable Conflict," IFSH (ed.), OSCE Yearbook 2014, Baden-Baden 2015, pp. 167-179. [https://ifsh.de/file-CORE/documents/yearbook/english/14/Hopmann\\_2014\\_en\\_S.pdf](https://ifsh.de/file-CORE/documents/yearbook/english/14/Hopmann_2014_en_S.pdf), (Accessed 10.03.2023).

ties were required to "end armed hostilities...to withdraw armed forces." Agreement II dealt with the status of Nagorno-Karabakh. The document stipulated that the parties to the conflict should recognize "the territorial integrity and inviolability of the borders of Azerbaijan and Armenia." Regarding the status of Nagorno-Karabakh, the document foresaw the status of "a state-territorial entity within Azerbaijan" with the administrative boundaries of the former Nagorno-Karabakh Autonomous Oblast (Region). Accordingly, Nagorno-Karabakh was to form its legislative, executive, and judicial bodies independently and have its own Constitution. Moreover, the laws of Azerbaijan were to be effective on the territory of Nagorno-Karabakh "only if they did not contradict the latter's Constitution and laws."<sup>5</sup>

The "package" deal was doomed to fail from the beginning as it required a solution to all the sensitive issues simultaneously, not considering that the sides have different approaches to the same issue.

In order to overcome the shortcomings of the "package" deal, the Minsk Group co-chairs brought forth the "step-by-step" alternative at the Lisbon Summit in December 1997. This new approach aimed to reach an agreement on more straightforward issues, which would enhance the confidence of the conflicting sides concerning the negotiation process and only after then move to address the more complex issues. However, this new approach required compromises on all the issues at stake, sometimes hindering the negotiation process.<sup>6</sup>

The "step-by-step" approach implied the handing over of territories outside the Nagorno-Karabakh Autonomous Region (NKAO) to Azerbaijan, except for the Lachin region; deployment of OSCE peacekeepers on the ground; the return of displaced persons to their places of former permanent residence. However, a step-by-step approach postponed the final legal status of Nagorno-Karabakh to an indefinite future.<sup>7</sup>

The discussions over the "step-by-step" and "package" approaches became a topic of bitter contention within Armenian political circles. The first RA president Levon Ter-Petrosyan and his administration favored the "step-by-step" approach as he thought that was the only way to overcome the insurmountable contradictions of conflicting parties. However, because of his approach to the conflict, Levon Ter-Petrosyan had to resign as his government opponents declared his policies defeatist.<sup>8</sup>

In his speech during the Extended session of the Security Council held on January 7-8 of 1998, where the resignation of Levon Ter-Petrosyan was decided, Ter-Petrosyan asserted his position on the issue in the following way: "Theoretically, I do not deny that maintaining the status quo perhaps might be the best way out, because unlike the first two options ["package" deal and "step-by-step" approach], which are based on the idea of compromise, it assumes an exclusively victorious solution. However, this is only theoretical." He doubted

---

<sup>5</sup> Minsk Group proposal ('package deal') July 1997, <https://www.legal-tools.org/doc/4b2ddb/pdf/>, (Accessed 13.03.2023).

<sup>6</sup> Terrence H. P., *supra* note 4.

<sup>7</sup> Minsk Group proposal ('stepbystep deal') December 1997, <https://www.legal-tools.org/doc/8760bb/pdf/>, (Accessed 13.03.2023).

<sup>8</sup> Zourabian L., *The Nagorno-Karabakh Settlement Revisited: Is Peace Achievable?*, *Demokratizatsiya*, 2006, 14(2), pp. 252- 265.

that those opposing the “step-by-step” approach had any intention of solving the Karabakh issue in general. He was sure that the debate over “package” and “step-by-step” was just a veil to delay the settlement process, to maintain the current situation, that is, the status quo as long as possible. Ter-Petrosyan considered it “a terrible danger for the existence of both Karabakh and Armenia.” According to him, “In case of disruption or even delay of the conflict settlement process, we will not be able to get out of the current isolation. Moreover, we will even deepen it. It is not just about economic isolation because it is self-evident that economic isolation will also have unwanted political consequences.”<sup>9</sup>

Another solution that the Minsk Group Co-Chairs proposed was the idea of a so-called “common state” proposed in November 1998. The origin of the idea of the “common state” was explained by former Armenian Foreign Minister Vartan Oskanian. On May 15, 1998, Vartan Oskanian and Armenian Defense Minister Vazgen Sargsyan headed to Moscow to meet Russia’s Foreign Minister Yevgeny Primakov, Defense Minister Igor Sergeev, and the head of Russian Intelligence. During the meeting, Oskanian mentioned that “a status for Karabakh that makes it de-facto independent, but de jure not in Azerbaijan, would be acceptable, and in that context, it would be worth considering a version of the ‘common state’ approach being proposed in the Transnistria conflict, where horizontal relations would be secured between Karabakh and Azerbaijan.” Afterwards, the Russian Foreign Minister traveled to Baku to negotiate the Karabakh issue, and in November the Minsk Group Co-Chairs presented the “common state” proposal.<sup>10</sup>

In essence, the document implied that Nagorno-Karabakh would be a state territorial formation in the form of a Republic and constitute a common state with Azerbaijan in the latter's internationally recognized borders. Borders of Nagorno-Karabakh were to correspond to "borders of the former Nagorno-Karabakh Autonomous Oblast." Nagorno-Karabakh would have the right to "enter into direct external relations with foreign states in economic, trade, scientific, cultural, sporting and humanitarian fields, and with regional and international organizations associated with these fields" as well as participate in the implementation of Azerbaijan's foreign policy "on issues touching upon its interests." According to the plan, it would also have its own Constitution, flag, national symbols, and national anthem and form its legislative, executive, and judicial bodies independently. However, citizens of Nagorno-Karabakh would have Azerbaijani passports with a stamp indicating Nagorno-Karabakh. Whereas "Citizens of Nagorno-Karabakh of Armenian origin may emigrate to Armenia and in case of permanent settlement they may receive Armenian citizenship in accordance with the laws of that country." The question of the Lachin corridor was the subject of a different agreement. Armenian and Azerbaijani refugees were to return to Shushi and the town of

---

<sup>9</sup> Տեր-Պետրոսյանի հրաժարականը վճռեց Անվտանգության խորհրդի նիստը. հունվար 7-8, 1998թ., Լևոն Տեր-Պետրոսյանի ԸՆՏԲԱՆԻ հատորից, January 7, 2023, <https://www.aniarc.am/2023/01/07/ltp-7-8-january-1998/>, (Accessed 14.03.2023).

<sup>10</sup> Birth of the idea of “Common State,” March 5, 2012, <https://mediamax.am/en/column/12217/>, (Accessed .03.2023).

Shaumian.<sup>11</sup> Azerbaijan quickly and categorically rejected this proposal of the Minsk Group, though some points were also unacceptable for the Armenian side.<sup>12</sup>

The following active phase of the negotiations was met with significant optimism on the resolution in 2001—starting with French President Jacques Chirac's mediation when he invited the Presidents of Armenia and Azerbaijan to Paris for bilateral and trilateral meetings. After the first meeting, four more meetings would occur with direct mediation and the participation of the French President. The main idea of this negotiation process was to provide the final and complete solution to the conflict, accepting the principle of providing Azerbaijan with a stable and uninterrupted corridor through Armenia's territory to Nakhichevan in exchange for handing over NK along with Lachin under the sovereignty of Armenia. Based on the agreements reached in Paris, the United States organized a one-week gathering in Key West to deal with the remaining disagreements and develop a document to become the basis for the resolution. The negotiations started with a meeting between Kocharyan and Aliyev with the participation of the U.S. Secretary of State Colin Powell. There were a few days of intense negotiations with one main principle as a basis in exchange for handing NK with the Lachin corridor to the Republic of Armenia- Azerbaijan should gain free and unimpeded access connecting to Nakhichevan through Armenia.<sup>13</sup>

At the end of the negotiations, the sides seemed very close to reaching an agreement. However, upon returning to Azerbaijan, President Aliyev refused to follow the agreement as “he was not able to secure the approval of even his own circle to a plan,” which implied the release of the adjacent territories in exchange for the de facto ceding Nagorno-Karabakh to Armenia.<sup>14</sup>

Later, the U.S. Co-Chair of the OSCE Minsk Group, Ambassador Carey Cavanaugh, commented on the failure of this process, stating that the major obstacle was that “neither side had done the necessary work to ready their populations for serious compromise.” According to him, in private, both the presidents of Armenia and Azerbaijan were prepared to act, but they showed no indication of this in public. Also, in Azerbaijan, “this was doubly difficult” because only a small circle had restricted knowledge of the proposed solution, and even some key advisors were unaware of the process.<sup>15</sup>

In November 2007, the Minsk Group Co-Chairs introduced the Madrid principles to the parties. The content of the principles was presented by the presidents of the Minsk Co-Chair countries- U.S. President Barack Obama, Russian President Dmitry Medvedev, and French President Nicolas Sarkozy at the L'Aquila at the Summit of the Eight. The Madrid principles encompassed three principles of settlement and six elements.

---

<sup>11</sup> Minsk Group proposal (“common state deal”), November 1998, <https://www.legal-tools.org/doc/f2c2f3/pdf>, (Accessed 14.03.2023).

<sup>12</sup> *Supra note 10*.

<sup>13</sup> Վ. Օսկանյան, Քի Վեսթ՝ չիրացված հնարավորություն, August 20, 2013, <https://mediamax.am/am/column/12454/>, (Accessed 14.03.2023).

<sup>14</sup> Musabayov R., The Karabakh conflict and democratization in Azerbaijan, The limits of leadership Elites and societies in the Nagorny Karabakh peace process, Conciliation Resources, London 2005, pp. 60-63.

<sup>15</sup> Exclusive Interview of Former U.S. Co-Chair of the OSCE Minsk Group (1999-2001), Ambassador Carey Cavanaugh to Mediamax, April 4 2011, <https://mediamax.am/en/news/keywest/514/>, (Accessed 15.03.2023).



The principles included the Helsinki Final Act principles of Non-Use of Force, Territorial Integrity, and the Equal Rights and Self-Determination of Peoples. The six elements were

1. “Return of the territories surrounding Nagorno-Karabakh to Azerbaijani control
2. An interim status for Nagorno-Karabakh providing guarantees for security and self-governance,
3. A corridor linking Armenia to Nagorno-Karabakh;
4. Future determination of the final legal status of Nagorno-Karabakh through a legally binding expression of will;
5. The right of all internally displaced persons and refugees to return to their former places of residence;
6. International security guarantees that would include a peacekeeping operation.”<sup>16</sup>

After offering the Madrid Principles to the parties, there was still no progress toward peace. It was at this time, May 26, 2011, in Deauville during the G8 Summit, the President of Russia, Dmitry Medvedev, the President of the USA, Barack Obama, and the President of France, Nicolas Sarkozy jointly issued a statement on Nagorno-Karabakh conflict calling “upon the Presidents of Armenia and Azerbaijan to demonstrate their political will by finalizing the Basic Principles during their upcoming summit in June.”<sup>17</sup>

- **«Թուրքական կարմիր մահիկ» (Türk Kızılayı):** Կազմակերպության գործունեության հիմքում ընկած է «Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային շարժման» գաղափարախոսությունը: Ընդհանուր առմամբ 18 վայրում ներկայացված «Թուրքական կարմիր մահիկ» կազմակերպությունը առողջապահական և հումանիտար մի շարք ծրագրեր է իրականացնում Բալկաններում, Միջին Ասիայում, Մերձավոր Արևելքում, Ասիայում և այլուր<sup>6</sup>: Այս կազմակերպությունը հատկապես ներգրավված է եղել Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետևանքով տուժած մի շարք մարդկանց բժշկական և պարենային աջակցություն ցուցաբերելու գործում, որը, անշուշտ, ունեցել է նաև քաղաքական բաղադրիչ և նպատակ: Նույն տրամաբանությամբ և պետական ուղղորդմամբ կազմակերպությունը ներգրավված է եղել COVID-19 համավարակի հաղթահարմանը:

---

<sup>6</sup> St' u **Samet Kavoğlu**, Yapılandırmacı Perspektiften Kamu Diplomasisi ve Türkiye: ABD Yazılı Basınından Yansımalar, İstanbul Üniversitesi İletişim Fakültesi Dergisi, 11(45), 2013, էջ 121. <https://cdn.istanbul.edu.tr/file/1CD58DF90A/418B7BD815484D59B05F0D4330100A23?doi=10.17064/i%C3%BCifhd.16181>, «Թուրքական կարմիր մահիկի» գործունեության մասին առավել մանրամասն տե՛ս **Serhan Koyuncu Burak Medin**, Resmî Aktörler Bağlamında Dijital Kamu Diplomasisi, International Journal of Social Sciences and Education Research, 3(4), 2017, էջ 1240-1241. <http://static.dergipark.org.tr:8080/article-download/7264/23c1/907a/594e302743ee1.pdf?>

• **«Թուրքիայի համագործակցության և համակարգման գործակալություն» (Türk İşbirliği ve Koordinasyon Ajansı Başkanlığı, TİKA):** ԽՍՀՄ փլուզումից հետո Կենտրոնական Ասիայում և այլ տարածաշրջաններում թյուրքախոս ժողովուրդների հետ Թուրքիայի վարած քաղաքականության մեջ նշանակալի ավանդ ունի այս գործակալությունը, որը զարգացման մի շարք ծրագրեր է իրականացնում այդ երկրների կրթության, մշակույթի, զբոսաշրջության, առողջապահության, գյուղատնտեսության, ֆինանսների և այլ ոլորտներում<sup>7</sup>: Այս կազմակերպությունը հիմնադրվել է 1992 թ. և ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո հասկապես Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետությունների հետ հարաբերություններում Թուրքիայի որդեգրած «փափուկ ուժի» իրացման լավագույն օրինակներից է: 2011 թ. վերածնակերպվել և ընդլայնվել են կազմակերպության լիազորություններն ու գործունեության տիրույթը, բարեփոխվել և արդիականացվել են կառավարման կարգն ու որոշումների կայացման գործընթացը: Ներկայումս կազմակերպությունը տարաբնույթ ծրագրեր է իրականացնում աշխարհի շուրջ 60 երկրում: Դրանց առանցքում հիմնականում օսմանյան շրջանի մշակութային ժառանգության վերականգնումն ու գովազդումն է: Մի շարք ծրագրեր են կյանքի կոչվում նաև առողջապահության և հումանիտար բնագավառներում: Հատկանշական է, որ 2003-2007 թթ. կազմակերպությունը ղեկավարել է Թուրքիայի ներկայիս ԱԳ նախարար Հաքան Տիդանը:

• **«Յունուս Էմրեի ինստիտուտ» (Yunus Emre Enstitüsü):** Ինստիտուտը գործում է «Յունուս Էմրե իմանադրամի» հովանավորությամբ: Կազմակերպությունը հիմնադրվել է 2009 թ., որի հիմնական առաքելությունն է ապահովել արտասահմանում թյուրքական մշակույթի, լեզվի և արվեստի ոլորտներում կրթություն ստանալու հնարավորությունը: Ներկայումս աշխարհի տարբեր երկրներում գործում է կազմակերպության 58 կենտրոն<sup>8</sup>: Այդ գործառնություններն ու ծրագրերը, որն այժմ իրականացնում է այդ ինստիտուտը, 1999-2011 թթ. ընթացքում կյանքի են կոչվել «Թուրքիայի համագործակցության և համակարգման գործակալության» հովանու ներքո: Ինստիտուտը հսկայական ավանդ ունի աշխարհի բազմաթիվ երկրներում թյուրքագիտության կենտրոններ

<sup>7</sup> ԱԶԿ իշխանության օրոք «Թուրքիայի համագործակցության և համակարգման գործակալությունը» որպես հանրային դիվանագիտության իրացման գործիք կիրառելու մասին առավել մանրամասն տե՛ս u **Gökmen Kılıçoğlu, Ayhan Nuri Yılmaz**, Bir Kamu Diplomasisi Kurumu Olarak TİKA'nın AK Parti Döneminde Kullanılması, Türk Dünyası Araştırmaları, 116(229), 2017, էջ 171-182. <https://dergipark.org.tr/pub/tda/issue/60085/870037>

<sup>8</sup> Թուրքիայի «փափուկ ուժի» հանրային և մշակութային դիվանագիտության իրացման շրջանակներում «Յունուս Էմրեի ինստիտուտի» ղեկավարության մասին առավել մանրամասն տե՛ս u **Ahmet Nafiz Ünalımsı**, Yumuşak Gücün Tesis Edilmesinde Kültürel Diplomasiinin Önemi ve Bir Uygulayıcı Olarak Yunus Emre Enstitüsü, Turk Dünyası Sosyal Bilimler Dergisi, 91, 2019, 137-159. <http://static.dergipark.org.tr:8080/article-download/28b4/18fb/43a6/5daec1c4bdfc.pdf?>

հիմնադրելու և գործունեություն ծավալելու հարցում: Մասնավորապես, 2012 թ. իրականացվել է «100 գրադարան» նախագիծը, որի շրջանակներում արտասահմանում գործող թյուրքագիտության 100 կենտրոններ հագեցվել են Թուրքիայի և Օսմանյան կայսրության պատմության, գրականության և լեզվի մասին գրականությամբ:

• **«Թուրք արդյունաբերողների և գործարարների ասոցիացիա» (Türk Sanayicileri ve İş İnsanları Derneği, TÜSİAD), «Անկախ արդյունաբերողների և գործարարների ասոցիացիա» (Müstakil Sanayici ve İşadamları Derneği, MÜSİAD):** Այս երկու կազմակերպությունների հովանու ներքո են համախմբված թուրքական գործարար շրջանակների ներկայացուցիչները: Կազմակերպությունները ներկայացված են աշխարհի մի շարք երկրներում: «Թուրք արդյունաբերողների և գործարարների ասոցիացիան» հիմնադրվել է 1971 թ.՝ ներկայանալով որպես աշխարհիկ, ազատական գաղափարախոսության ջատագով և շուկայական հարաբերությունների խորացմանը կողմնակից գործարարների միություն, որը, տնտեսական բնույթի հարցերից բացի, աստիճանաբար սկսել է ներգրավվել որոշակի քաղաքական բաղադրիչ ունեցող գործընթացներում: Այս կառույցը գործունե գործառնություն է ունեցել նաև Թուրքիա-ԵՄ հարաբերություններում, կողմնակից է Թուրքիայի անդամակցությանը ԵՄ-ին և թուրքական շուկայի ինտեգրմանը արևմտյան շուկաներին: «Անկախ արդյունաբերողների և գործարարների ասոցիացիան» հիմնադրվել է 1990 թ.: Ի տարբերություն «Թուրք արդյունաբերողների և գործարարների ասոցիացիայի»՝ այն տեղի է տալիս կրոնին և հատուկ ուշադրություն է դարձնում ընտանիքին, սոցիալական համերաշխությանն ու ազգային ինքնությանը: Այս կազմակերպությանը քաղաքական ակտիվ աջակցություն է ցուցաբերում «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որը գաղափարական մի շարք ընդհանրություններ ունի այդ կառույցի հետ<sup>9</sup>:

Նշված կազմակերպություններից բացի՝ կան տասնյակ այլ կառույցներ, որոնք ԱԶԿ իշխանության օրոք ակտիվորեն ներգրավվեցին արտասահմանյան հասարակությունների շրջանում Թուրքիայի դրական կերպարի ձևավորմանը՝ այդպիսով նպաստելով Թուրքիայի հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի» իրացմանը:

Թուրքական հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի» ինստիտուցիոնալացման շրջանակներում որոշվեցին նաև այն երկրներն ու տարածաշրջանները, որտեղ ԱԶԿ-ն մտադիր էր ակտիվորեն

---

<sup>9</sup> Միջազգային ասպարեզում Թուրքիայի հանրային դիվանագիտության, «փափուկ ուժի» և տնտեսական դիվանագիտության կիրառության տեսանկյունից «Թուրքական արդյունաբերության և բիզնես ասոցիացիայի» և «Անկախ արդյունաբերողների և գործարարների ասոցիացիայի» ունեցած առանցքային նշանակության մասին առավել մանրամասն տե՛ս **Derya Büyüktanır**, Public Diplomacy Activities of TÜSİAD and MÜSİAD During the AK Party Era, Akademik Bakış Dergisi, 11(23), 2018, էջ 73-98. <https://dergipark.org.tr/tr/download/article-file/609472>



կիրառել այդ գործիքները: Չնայած աշխարհագրական այդ տարբերակումներին, հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի» գործիքակազմը, որը կիրառում էր ԱԶԿ իշխանությունը, մեծ մասամբ նույնն էր: Հարկ ենք համարում պայմանականորեն առանձնացնել և առանձին-առանձին անդրադառնալ այն չորս միավորներին, որտեղ Դավութօղլուի անմիջական ուղղորդմամբ Թուրքիան կենտրոնացրեց հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի» իր ողջ ներուժը.

- *Մերձավոր Արևելք*
- *Հարավային Կովկաս*
- *Թյուրքալեզու պետություններ և ժողովուրդներ*
- *Աֆրիկյան մայրցամաք:*

*Մերձավոր Արևելքում* Թուրքիայի արտաքին քաղաքականության համար առաջին փորձություններից մեկը «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության օրոք 2003թ. Իրաքի դեմ սկիզբ առած պատերազմական գործողություններն էին, որի նախաձեռնողը ԱՄՆ-ն էր՝ Թուրքիայի ամենակարևոր դաշնակիցներից մեկը: ԱԶԿ իշխանության օրոք Թուրքիայի Ազգային մեծ ժողովը մերժեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի դիմումը՝ թույլ տալ Միացյալ Նահանգներին օգտագործել Թուրքիայի ռազմական վեց օդակայանները, միջերկրածովյան երեք նավահանգիստները և Թուրքիայի տարածքը 80 հազար ԱՄՆ զինվորականների՝ դեպի Իրաք տեղաշարժն ապահովելու համար<sup>10</sup>: Ընդ որում, ԱՄՆ-ին աջակցություն ցուցաբերելուն դեմ էր հատկապես թուրքական հասարակության իսլամական հայացքներ ունեցող շերտը, որի ներկայացուցիչները ԱՄՆ-ին Թուրքիայի աջակցության վերաբերյալ հարցի քննարկման նախօրեին ԹԱՄԺ մի շարք պատգամավորների էլեկտրոնային փոստին հասցեագրում էին «Քվեարկիր ոչ» բովանդակությամբ նամակներ<sup>11</sup>: Իրաքի համար դժվար այս ժամանակաշրջանում Թուրքիայի զուսպ քաղաքական պահվածքը որոշակիորեն փոխեց արաբական աշխարհի բացասական վերաբերմունքը Թուրքիայի հանդեպ, որը ձևավորվել էր Սառը պատերազմի ընթացքում ՆԱՏՕ-ին անդամակցելու, Արևմուտքի հետ սերտ դաշնակցային հարաբերություններ հաստատելու և հատկապես 1949 թ. Իսրայելի անկախությունը ճանաչելու հետևանքով<sup>12</sup>:

Արաբական աշխարհում Թուրքիայի դրական կերպարը ձևավորելու գործում առանցքային էր նաև ԱԶԿ իշխանության սկզբնական տա-

---

<sup>10</sup> Sté u **Ramazan Gözen**, Causes and Consequences Of Turkey's Out-Of-War Position In The Iraq War Of 2003, The Turkish Yearbook of International Relations, 36, 2005, էջ 76-77. <https://dSPACE.ankara.edu.tr/xmlui/bitstream/handle/20.500.12575/65601/8622.pdf?sequence=1>

<sup>11</sup> Sté u նույն տեղը, էջ 79:

<sup>12</sup> Արաբական աշխարհում Թուրքիայի հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորման պատճառների և ընթացքի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս **Dietrich Jung**, Turkey and the Arab World: Historical Narratives and New Political Realities, Mediterranean Politics, 10(1), 2005, էջ 3-7. <https://doi.org/10.1080/1362939042000338818>

րիներին թուրք-սիրիական հարաբերությունների աննախադեպ ջերմացումը. «*Սասնի այցը Թուրքիա և Էրդոդանի այցը Սիրիա 2004 թ. կտրուկ բարելավեցին թուրք-սիրիական հարաբերությունները: Սիրիան դադարեցրեց աջակցությունը «Քրդական բանվորական կուսակցությանը» և ճանաչեց Հաթայը որպես Թուրքիայի անքակտելի մաս: Զարգացան նաև տնտեսական հարաբերությունները: Ստեղծվեց տարածաշրջանային զարգացման ծրագիրը, ինչպես նաև ստորագրվեց ռազմական համագործակցության պայմանագիր: Երկկողմ հարաբերությունները թնկնդեցին նոր փուլ, երբ երկու երկրների միջև 2009 թ. վերացվեց վիզային ռեժիմը»<sup>13</sup>: Աստիճանաբար Սիրիան դարձավ Մերձավոր Արևելքում Թուրքիայի հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի» օգտագործման հիմնական կենտրոնը<sup>14</sup>, որը, Դավութօղլուի համոզմամբ, դրական ազդեցությունն էր ունենալու ոչ միայն թուրք-սիրիական երկկողմ հարաբերությունների բարելավման, այլև արաբական աշխարհում Թուրքիայի հանդեպ առավել բարյացակամ վերաբերմունքի ձևավորման վրա: Այդուհանդերձ, Սիրիայի շուրջ հետագայում ծավալված իրադարձությունները և թուրք-սիրիական հարաբերությունների ծայրաստիճան լարումը մատնանշեցին, որ Սիրիայում Թուրքիայի քաղաքականությունը դարձավ ոչ միայն թուրքական «փափուկ ուժի» և հանրային դիվանագիտության ամենահաջող օրինակներից մեկը, այլև այդ նույն քաղաքականության ձախողման լավագույն դրսևորումը:*

Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց նաև արաբ-խորայելական հակամարտության կարգավորմանը՝ միջնորդական առաքելություն ստանձնելով Սիրիա-Իսրայել հարաբերությունների կարգավորման բանակցություններում: 2010 թ. մայիսի 20-ին միջազգային հեղինակավոր պարբերականներից մեկում տպագրված իր հոդվածում Թուրքիայի ԱԳ նախարար Դավութօղլուն ներկայացրեց Մերձավոր Արևելքում Թուրքիայի արտաքին քաղաքականության պատկերացումները. «Մերձավոր Արևելքի վերաբերյալ Թուրքիան ունի իր պատկերացումները: Այդ պատկերացումները ներառում են ողջ տարածաշրջանը: «Քուրդիստանի աշխատավորական կուսակցության», Թուրքիայի դեմ տասնամյակներ շարունակ սահաբեկչական գործողություններ իրականացրած

<sup>13</sup> Thowhidul Islam, Turkey's AKP foreign policy toward Syria: shifting policy during the Arab Spring, International Journal on World Peace, 33(1), 2016, էջ 9. [https://www.researchgate.net/publication/335881395\\_Turkey's\\_AKP\\_foreign\\_policy\\_toward\\_Syria\\_shifting\\_policy\\_during\\_the\\_Arab\\_Spring](https://www.researchgate.net/publication/335881395_Turkey's_AKP_foreign_policy_toward_Syria_shifting_policy_during_the_Arab_Spring)

<sup>14</sup> Թուրքիայից բացի՝ Սիրիայի հետ հարաբերություններում հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի» գործիքակազմից օգտվել է նաև Իրանի Բալանական Հանրապետությունը: Սիրիայի հետ հարաբերություններում այս երկու երկրների «փափուկ ուժի» բովանդակային և կիրառական տարբերությունների մասին առավել մանրամասն տե՛ս **Ozüm Sezin Uzun, Mojtaba Barghandan**, Public Diplomacy of Turkey and Iran: The Syrian Case, Adnan Menderes University, Journal of Institute of Social Sciences, 4(3), 2017, էջ 33-42. <http://static.dergipark.org.tr:8080/article-download/dee2/be07/ac65/5a40b1318f39a.pdf>

քրդական ծայրահեղական խմբերի դեմ պայքարը կամ հատուկ երկրներին հակակշռելու ջանքերը չեն կարող սահմանափակվել: Թուրքիան կարող է օգտագործել Մերձավոր Արևելքի վերաբերյալ իր յուրահատուկ ընկալումները, «գետնի» վրա արդյունավետ գործելու դիվանագիտական ներուժը: Թուրքիայի քաղաքականությունը՝ Լիբանանի հանդեպ, Պաղեստինյան հարցի կարգավորմանը միտված՝ Միջին Արևելքի և Բարայելի միջև Թուրքիայի միջնորդական առաքելության փորձերը, թուրքական ջանքերը 2005 թ. խորհրդարանական ընտրություններում իրաքյան սունիների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ և կառուցողական ներգրավումը իրանական միջուկային խնդրում Մերձավոր Արևելքում Թուրքիայի արտաքին քաղաքականության հայեցակարգի անբաժան մասն են»<sup>15</sup>:

Թեև **Հարավային Կովկասի** տարածաշրջանի հանդեպ Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը մշտապես մշակվել և ներկայացվել է որպես մեկ ամբողջություն, բայց այդ երկրում արտաքին հարաբերությունների վերաբերյալ որոշումներ կայացնողների պատկերացումներում մշտապես առանձնացել են Հարավային Կովկասի և Ադրբեջանի հանդեպ ընկալումները՝ հաշվի առնելով վերջինիս հետ քաղաքական, մշակութային, ինքնության և արժեհամակարգային նմանություններն ու սերտ կապերը, ինչպես նաև երկու երկրների միջև հաստատված սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական համագործակցությունը<sup>16</sup>: Եթե Խորհրդային Միության փլուզումից հետո Ադրբեջանի հետ հարաբերությունները առանձնապես կարևոր էին ներկայացնում վերը թվարկված պատճառներով, ապա Հարավային Կովկասի մյուս երկրների՝ Վրաստանի և Հայաստանի հետ թուրքական քաղաքականության դրդապատճառներն այլ էին: Հայաստանի անկախացումը և Լեռնային Ղարաբաղի հակամարտության բռնկումը նպաստեցին, որ Հայաստանի հանդեպ թուրքական քաղաքականությունը ձևավորվի Թուրքիայի անվտանգային քաղաքականության համատեքստում:

2008 թ. օգոստոսին վրաց-ռուսական ռազմական գործողություններից հետո Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի հանդեպ Թուրքիայի քաղաքականությունը ձևավորեց անվտանգային խնդիրները, որոնք շարունակում էին զուգահեռվել Ադրբեջանի հետ բարձր մակարդակի քաղաքական և տնտեսական հարաբերությունները պահպանելու և զարգացնելու անհրաժեշտությանը:

Դավաճող լուրի անմիջական նախաձեռնությամբ ԱԶԿ իշխանութ-

<sup>15</sup> Ahmet Davutoğlu, Turkey's Zero-Problems Foreign Policy, Foreign Policy, accessed November 7, 2023, <https://foreignpolicy.com/2010/05/20/turkeys-zero-problems-foreign-policy/>

<sup>16</sup> ԽՍՀՄ փլուզումից հետո թուրք-ադրբեջանական երկկողմ հարաբերությունների օրակարգի ամենակարևոր հարցերի մասին առավել մանրամասն տե՛ս **Bülent Aras, Pinar Akpınar**, The Relations between Turkey and the Caucasus, Perceptions, 16(3), 2011, էջ 57-59. [http://static.dergipark.org.tr:8080/article-download/ae49/1de8/c73b/JA36PA23SG/5c4976c1219a1\\_9f74dfe09514a083e309b58695720de5.pdf?](http://static.dergipark.org.tr:8080/article-download/ae49/1de8/c73b/JA36PA23SG/5c4976c1219a1_9f74dfe09514a083e309b58695720de5.pdf?)

յան սկզբնական տարիներին Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների կարգավորման գործընթացը դարձավ Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ Դավութջյուզի տեսության ամենակարևոր բաղադրիչներից մեկը: Մեր համոզմամբ՝ Թուրքիայի անվտանգային միջավայրի բարելավումը կամ թուրքական կողմի համար Հայաստանի հետ քաղաքական և սոցիալ-տնտեսական երկկողմ հարաբերությունների հաստատման և զարգացման հեռանկարների շահավետությունը, անշուշտ, կարևոր, բայց ոչ հիմնական մղումներն էին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման թուրքական ընկալումների տեսանկյունից: Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը, որը Թուրքիայում<sup>17</sup> և ողջ աշխարհում ընկալվում էր որպես Թուրքիայի համար ամենակնճռոտ, ընդհուպ բարդություների տիրույթ տեղափոխված խնդիրներից մեկը<sup>18</sup>, կարևոր էր միջազգային ասպարեզում այդ երկրի դրական կերպարի ամբողջացման տեսանկյունից: Մյուս կարևոր դրդապատճառը ցեղասպանությունները ժխտող երկրների շարքից Թուրքիային դուրս բերելու մղումն էր:

2008 թ. օգոստոսին ռուս-վրացական ռազմական գործողություններից անմիջապես հետո՝ օգոստոսի 13-ին, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի հետ հանդիպումից հետո հայտարարեց «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ» ստեղծելու մտադրության մասին<sup>19</sup>: Հասկանալի էր, որ այս նախաձեռնությունը արտաքին հարաբերություններում Թուրքիայի որդեգրած հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի» համատեքստում իրականացվող միջնորդական առաքելությունների ևս մեկ բաղկացուցիչն էր՝ ի թիվս Իսրայելի և Սիրիայի, Աֆղանստանի և Պակիստանի, ԱՄՆ-ի և Իրանի միջև հարաբերությունների կարգավորմանը կամ Սուդանում կայունության հաստատմանն ուղղված՝ Թուրքիայի գործադրած ջանքերի<sup>20</sup>:

---

<sup>17</sup> Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը լայնորեն քննարկվում էր նաև թուրքական մամուլում, որի մասին առավել մանրամասն տե՛ս **Դավիթ Սաֆարյան**, «Ճուտբոլային դիվանագիտության» արձագանքները թուրքական մամուլում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 3(27), 2018, էջ 47-57. [http://ysu.am/files/04D\\_Safaryan.pdf](http://ysu.am/files/04D_Safaryan.pdf)

<sup>18</sup> Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում պակաս կարևոր չէր նաև Ադրբեջանի ծայրահեղ բացասական վերաբերմունքը գործընթացի հանդեպ: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Bülent Aras, Fatih Özbay**, Turkish-Armenian Relations: Will Football Diplomacy Work?, SETA Policy Brief, 24, 2008 էջ 3. [http://setad.org/wp-content/uploads/2015/05/SETA\\_Policy\\_Brief\\_No\\_24\\_Bulent\\_Aras\\_Fatih\\_Ozbay.pdf](http://setad.org/wp-content/uploads/2015/05/SETA_Policy_Brief_No_24_Bulent_Aras_Fatih_Ozbay.pdf)

<sup>19</sup> Վարչապետ Էրդողանը հաջորդ օրը օգոստոսի 14-ին, այցելեց Թբիլիսի, որտեղ ևս բարձրաձայնեց «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ» ստեղծելու թուրքական նախաձեռնության մասին: Առավել մանրամասն տե՛ս **Mitat Çelikpala**, Türkiye ve Kafkasya: Reaksiyoner Dış Politikadan Proaktif Ritmik Diplomasiye Geçiş, Uluslararası İlişkiler Dergisi, 7(25), 2010, էջ 108-111. <https://dergipark.org.tr/tr/pub/uidergisi/issue/39272/462474>

<sup>20</sup> Տե՛ս **Eleni Fotiou**, “Caucasus Stability and Cooperation Platform”: What is at Stake for

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան ակտիվ նախաձեռնողակա- նություն դրսևորեց *թյուրքալեզու պետությունների և ժողովուրդների* հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ՝ ձգտելով միջազ- գային հարաբերություններում դառնալ այդ սուբյեկտների շահերը և հետաքրքրությունները ներկայացնող հիմնական դերակատար: Հատ- կանշական է, որ ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում «փափուկ ուժի» նկատելի բա- դադրիչով Թուրքիայի որդեգրած արտաքին քաղաքականության վե- րաբերյալ դեռևս 2010 թ. գրել է Թուրքիայի ներկայիս ԱԳ նախարար Հաքան Ֆիդանը՝ նշելով, որ Թուրքիան այդ ժամանակ, ի թիվս մի շարք նպատակների, հետամուտ էր նաև նորանկախ թյուրքախոս պետույթ- յունների և Թուրքիայի միջև ինստիտուցիոնալ հարթակի ձևավորմանը և ցանկանում էր մերձեցնել ու զարգացնել լեզվական և մշակութային կապերը<sup>21</sup>:

ԱԶԿ իշխանության և Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ Դավութօղլուի տեսության շրջանակներում կառավա- րությունը ինստիտուցիոնալիզացրեց իր այդ նկրտումները: Թուրքիայի ակտիվ ներգրավմամբ 2009 թ. ստեղծվեց «Թյուրքալեզու պետություն- ների համագործակցության խորհուրդը», որին մաս կազմող պետույթ- յուններին միավորում էին ընդհանուր պատմությունը, լեզուն, ինք- նությունը և մշակույթը: 2021 թ. Խորհուրդը վերափոխվեց կազմակեր- պության՝ հավակնելով է՛լ ավելի ընդլայնելու իր ներգրավվածությունն ու գործառույթները միջազգային հարաբերություններում: Հարկ է նշել, որ ավելի վաղ՝ 1993 թ., Թուրքիայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղըզստանի, Ուզբեկստանի մշակույթների նախարարների ստորագ- րությամբ հիմնադրվել էր նաև «Թյուրքական մշակույթի միջազգային կազմակերպությունը», որը ԶԼՄ-ներում և որոշ հետազոտություննե- րում որակվեց որպես «Թյուրքական ՅՈՒՆԵՍԿՕ»՝ ավելի ուշ օգտա- գործվելով որպես թուրքական հանրային դիվանագիտության և «փա- փուկ ուժի» գործիք<sup>22</sup>:

Թյուրքական աշխարհում Թուրքիայի հանրային դիվանագիտույթ- յան և «փափուկ ուժի» արդյունավետ կիրառման համար, նշվածներից բացի, դրանց առընթեր կամ անկախ հիմունքներով ստեղծվեցին մի շարք այլ հարթակներ, որոնց թվում են «Թյուրքալեզու երկրների և ժո- ղովուրդների մեդիա հարթակը», «Թյուրքալեզու պետությունների մե-

Regional Cooperation?, ICBSS, Policy Brief, 16, 2009, էջ 5, accessed November 7, 2023. [https://www.files.ethz.ch/isn/104737/PB\\_16.pdf](https://www.files.ethz.ch/isn/104737/PB_16.pdf)

<sup>21</sup> Տե՛ս **Hakan Fidan**, Turkish Foreign Policy Towards Central Asia, Journal of Balkan and Near Eastern Studies, 12(1), 2010, էջ 109. <https://doi.org/10.1080/19448950903507560>

<sup>22</sup> «Թյուրքական մշակույթի միջազգային կազմակերպությունը» հանրային դիվա- նագիտության և «փափուկ ուժի» շրջանակներում օգտագործելու մասին առավել ման- րամասն տե՛ս **Erman Akilli**, Turksoy, Turkic Council and Cultural Diplomacy: Transactionalism Revisited, Journal of Social Sciences of the Turkish World (Bilig), 91, 2019, էջ 1-25. <http://bilig.yesevi.edu.tr/yonetim/icerik/makaleler/4558-published.pdf>

դիա ֆորումը», «Թյուրքալեզու պետությունների խորհրդարանական վեհաժողովը» և այլն<sup>23</sup>:

Թուրքիայի «փափուկ ուժի» և հանրային դիվանագիտության մեկ այլ գործիք դարձավ 2010 թ. հիմնադրված «Արտասահմանցի թուրքերի և բարեկամ ժողովուրդների նախագահությունը», որի առաքելությունը հռչակվեց համակարգել արտասահմանում բնակվող թուրքերի, բարեկամ ժողովուրդների և Թուրքիայում ուսում ստացած արտասահմանցիների գործունեությունը սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում<sup>24</sup>:

*Աֆրիկյան մայրցամաքի* երկրների հետ Թուրքիայի հարաբերությունները ունեն բավականին երկար պատմություն արմատները ձգվում են մինչև Օսմանյան կայսրության ժամանակաշրջան<sup>25</sup>: Աֆրիկյան ուղղությամբ ուշադրությունը հատկապես աճեց ԱԶԿ իշխանության օրոք. 2005 թ. Թուրքիան հռչակեց «Աֆրիկայի տարի», իսկ 2008-ին Ստամբուլում տեղի ունեցավ «Թուրքիա-Աֆրիկա համագործակցության գագաթնաժողովը», *«որին մասնակցեցին աֆրիկյան մայրցամաքի հիսուն երկրների ներկայացուցիչներ: Նույն 2008-ին Թուրքիայի ԱԳ նախարար Ալի Բարաջանը հայտարարեց, որ Թուրքիայի նոր արտաքին քաղաքականության շրջանակներում Աֆրիկան հատուկ կարևորություն ունի Թուրքիայի համար, որի արդյունքում որոշում կայացվեց առաջիկա մի քանի տարիների ընթացքում թուրքական տասնհինգ նոր դեսպանություններ հիմնել աֆրիկյան մայրցամաքում»*<sup>26</sup>: Հատկանշական է, որ աֆրիկյան մայրցամաքում Թուրքիայի արտաքին քաղաքականության առանցքում էր երկու բաղադրիչ՝ մարդասիրական օգնություն<sup>27</sup> և տնտեսական քաղաքականություն: 2018 թ. մայիսին հրապար-

<sup>23</sup> St' u **Muharrem Ekşi**, Türkiye'nin Türk Dünyasına Yönelik Diplomasisi, Türk Dünyası İncelemeleri Dergisi, 17(1), 2017, էջ 182. <https://acikerisim.klu.edu.tr/xmlui/handle/20.500.11857/902>

<sup>24</sup> Թուրքական պիտուքի և հատկապես Բալկաններում բնակվող թուրքերի ներուժը դիվանագիտական նպատակների ծառայեցնելու «Արտասահմանցի թուրքերի և բարեկամ ժողովուրդների նախագահության» գործադրած ջանքերի մասին առավել մանրամասն տե՛ս **Ayhan Yilmaz**, Bir Diaspora Diplomasisi Kurumu Olarak Yurtdışı Türkler ve Akraba Topluluklar Başkanlığı (YTB) ve Balkanlar, Uluslararası Sosyal Araştırmalar Kongresi 2017 Bildiri Kitapçığı, 1(4), 2017, էջ 242-251. <https://www.academia.edu/33445789/>

<sup>25</sup> Թուրք-աֆրիկյան պատմական առնչությունների համառոտ անդրադարձը տե՛ս **Kieran Uchehara**, Continuity and Change in Turkish Foreign Policy Toward Africa, Akademik Bakışm, 2(3), 2008, էջ 50-51. <http://static.dergipark.org.tr/article-download/imported/5000142054/5000129857.pdf?>

<sup>26</sup> **Mehmet Özkan**, Turkey's Rising Role in Africa, Turkish Policy Quarterly, 9(4), 2010, էջ 94. [https://www.researchgate.net/publication/220048169\\_Turkey's\\_Rising\\_Role\\_in\\_Africa](https://www.researchgate.net/publication/220048169_Turkey's_Rising_Role_in_Africa)

<sup>27</sup> Աֆրիկյան մայրցամաքում Թուրքիայի մարդասիրական քաղաքականությունն իրականացնող հիմնական կազմակերպությունը «Թուրքիայի համագործակցության և համակարգման գործակալությունն» է, որը մայրցամաքում ակտիվ գործունեություն է ծավալում 2003 թ. ի վեր: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Hakan Fidan, Rahman Nurdun**, Turkey's role in the global development assistance community: the case of TİKA (Turkish International Cooperation and Development Agency), Journal of Southern Europe and the Balkans, 10(1), 2008, էջ 100. <https://doi.org/10.1080/14613190801895888>, Թուրք-աֆրիկյան տնտեսական հարաբերությունների մասին տե՛ս նաև **Elem Eyric Tepecikligo**, Economic Relations Between Turkey and Africa: Challenges and Prospects, The Journal of Sustainable Development

րակած իր մի հողվածում Թուրքիայի ԱԳ նախարար Մևլութ Չավուզօղլուն արձանագրել է, որ Աֆրիկայի հետ Թուրքիայի հարաբերությունների սերտացման արդյունքում Թուրքիայի և աֆրիկյան մայրցամաքի միջև ապրանքաշրջանառությունը 2003 թ. համեմատ աճել է շուրջ 5 անգամ՝ կազմելով 20 միլիարդ ԱՄՆ դոլար: Չավուզօղլուն նշել է նաև, որ Թուրքիայի ազգային ավիափոխադրողը թռիչքներ է իրականացնում աֆրիկյան մայրցամաքի 34 երկրների 52 ուղղություններով, որը հնարավորություն է ընձեռում աֆրիկացիներին ճամփորդելու դեպի Թուրքիա և աշխարհի այլ երկրներ<sup>28</sup>: Աֆրիկյան մայրցամաքում Թուրքիայի այս քաղաքականությունը ևս մաս էր կազմում արտաքին քաղաքականության Դավութօղլուի տեսության, որը դարձել էր իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության արտաքին քաղաքականության առանցքը:

Հասկանալի է, որ աշխատանքում հիշատակված տարածաշրջանները և Թուրքիայի արտաքին քաղաքականության իրականացմանն աջակցող կազմակերպությունները չեն արտահայտում ամբողջական պատկերը, բայց դրանք կարող են բավարար լինել ԱԶԿ իշխանության սկզբնական տարիներին Թուրքիայի հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի», ինչպես նաև Դավութօղլուի հեղինակած տեսության գործնական կիրառության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու համար:

**АЙК ДАРБИНЯН – Инструменты турецкой «мягкой силы» и их проявления по сферам.** – В рамках институционализации «мягкой силы» в Турции и непосредственными усилиями бывшего министра иностранных дел Турции, а затем премьер-министра Ахмета Давутоглу был основан или реорганизован ряд организаций, занимающихся деятельностью в общественной, политической, культурной сфере, деловых кругах и в других разных областях.

Эти организации постепенно стали основными инструментами «мягкой силы» и публичной дипломатии Турции. Основной целью политики правящей партии «Справедливости и Развития» Турции была поддержка этих организаций и формирование положительного имиджа Турции в общественных кругах ряда зарубежных стран. В ряде случаев это стало возможным благодаря деятельности этих организаций.

В рамках реализации турецкой публичной дипломатии и «мягкой силы» были обозначены различные страны и регионы, где эти инструменты активно использовались. Несмотря на географические различия, инструменты турецкой публичной дипломатии и «мягкой» силы остались во многом одинаковыми.

**Ключевые слова:** Турция, Ахмед Давутоглу, «мягкая сила», публичная дипломатия, Партия справедливости и развития, Турецкий Красный Полумесяц, Турецкое агентство по сотрудничеству и координации, Институт имени Юнуса Эмре, Турецкая ассоциация промышленности и бизнеса

---

Law and Policy, 8(1), 2017, էջ 1-33. <https://doi.org/10.4314/jsdlp.v8i1.2>.

<sup>28</sup> St' u **Mevlut Çavuşoğlu**, Turkey and Africa are building a solid partnership, Daily Sabah, Daily Sabah, accessed November 7, 2023. <https://www.dailysabah.com/op-ed/2018/05/25/turkey-and-africa-are-building-a-solid-partnership>

**HAYK DARBINYAN – *Tools of Turkish "Soft Power" and Examples of Their Implementations by Spheres.*** – Within the framework of institutionalization of "soft power" in Türkiye and with the direct efforts of former Turkish Foreign Minister and then Prime Minister Ahmet Davutoğlu, a number of organizations were founded or reorganized in Türkiye, which are active in public, political, cultural, health, business circles and other fields in the country.

These organizations gradually became the leading instruments of Türkiye's "soft power" and public diplomacy. The main goal of the policy of ruling party of Türkiye "Justice and Development" was to support these organizations and to contribute to the formation of a positive image of Türkiye throughout the public circles in a number of foreign countries. In a number of episodes this became possible thanks to the activities of these organizations.

Various countries and regions where these "soft power" tools have been actively used were pointed out within the framework of the implementation of Turkish public diplomacy and "soft power". Despite the geographical differences, the tools of Turkish public diplomacy and "soft" power remained largely the same.

**Keywords:** *Türkiye, Ahmet Davutoğlu, "Soft Power", Public Diplomacy, Justice and Development Party, Turkish Red Crescent, Turkish Cooperation and Coordination Agency, Yunus Emre Institute, Turkish Industry and Business Association*



## **ՊՈՊՈՒԼԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՆՈՂ ՀԱԿԱԼԻԲԵՐԱԼ ԵՐԵՎՈՒՅԹ**

### **ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Վերջին տասնամյակում պոպուլիզմը<sup>1</sup> դարձել է քաղաքական զարգացումներին հետևող վերլուծաբանների, քաղաքական գործիչների և լայն հասարակության կողմից ամենաօգտագործվող և երբեմն ամենադեմոնիզացված եզրույթներից մեկը: 2016 թվականի ԱՄՆ նախագահական ընտրություններում Դոնալդ Թրամփի հաղթանակից հետո արևմտյան քաղաքական վերլուծաբանների շրջանում պոպուլիզմի վերաբերյալ ուսումնասիրությունների թիվը զգալիորեն աճել է, իսկ 2017 թվականին «պոպուլիզմը» Քեմբրիջի բառարանը հայտարարել է տարվա բառ<sup>2</sup>: Թեև այս երևույթի համընդհանուր սահմանում գոյություն չունի, հետազոտողների միջև կա համաձայնություն պոպուլիզմը սահմանող ամենակարևոր տարրերից մեկի վերաբերյալ, պոպուլիզմի տրամաբանությամբ քաղաքականությունը համարվում է բարու և չարի միջև մշտական պայքար: Այս հոդվածի շրջանակներում ուսումնասիրվում են պոպուլիզմ տերմինի ծագումը և դրա բացասական ընկալման պատճառները: Գիտական գրականության ուսումնասիրության և փորձագիտական հարցազրույցների վերլուծության հիման վրա այս հոդվածում փորձ է արված գտնել հետևյալ հարցի պատասխանը. «Ինչո՞ւ է պոպուլիզմի դրսևորումը մի դեպքում ընկալվում որպես դրական, իսկ մյուս դեպքում՝ որպես բացասական երևույթ»: Հոդվածում հեղինակը պոպուլիզմը դիտարկում է որպես ժողովրդավարացնող հակալիբերալ երևույթ: Մույն հոդվածի միջոցով հեղինակը փորձում է նաև խթանել պոպուլիզմ երևույթի էության մասին կառուցողական ակադեմիական բանավեճը:

**Բանալի բառեր** – *պոպուլիզմ, ժողովրդավարություն, ժողովրդավարացում, գաղափարախոսություն, ոչ լիբերալիզմ, քաղաքականություն, ընտրություններ, քաղաքական համակարգեր*

Ակադեմիական գրականության մեջ նշվում է, որ *պոպուլիզմ* եզրույթը ծագել է 19-րդ դարի վերջին արիստոկրատական հանրույթի

---

<sup>1</sup> Ավելի մանրամասն տե՛ս S. Guriev and Elias Papaioannou, *The Political Economy of Populism* // *Journal of Economic Literature*, 2022, 60 (3), էջ 4:

<sup>2</sup> Տե՛ս Official website of Cambridge university, “Populism’ revealed as 2017 Word of the Year by Cambridge University Press”, 30.10.2017. URL: <https://www.cam.ac.uk/news/populism-revealed-as-2017-word-of-the-year-by-cambridge-university-press>

անկմանը զուգահեռ, երբ քաղաքականությունը դառնում էր հասանելի հանրային լայն զանգվածներին: Սակայն, այս եզրույթի բովանդակության և նշանակության մասին գոյություն չունի միանշանակ սահմանում: Այն քաղաքական գործիչների կողմից գործածվում է իրենց հակառակորդներին թիրախավորելու և պարսավելու միջոց: Հայկական իրականությունում *պոպուլիզմ* եզրույթը հաճախ օգտագործվում է որպես *ամբոխավարություն* բառի հոմանիշ: Թեպետ ամբոխավարությունն ու պոպուլիզմն ունեն որոշակի ընդհանրություններ, սակայն դրանք հոմանիշներ չեն: *Պոպուլիզմը* ներառում է նաև ամբոխավարության տարբեր և հոետորաբանություն, սակայն այս երևույթի բովանդակությունն ու էությունը շատ ավելի լայն են:

Հայաստանում պոպուլիզմ երևույթի վերաբերյալ ակադեմիական-վերլուծական հոդվածները սակավաթիվ են, իսկ նրանց հայեցակարգային հիմքում ընկած են ոչ թե առաջնային աղբյուրների ուսումնասիրության հիման վրա կատարված եզրակացությունները, այլ արևմտյան հեղինակների աշխատանքների ընդհանուր գծերի վերհանումը: Այլ կերպ ասած՝ հայ հետազոտողները *պոպուլիզմ* երևույթի ուսումնասիրության ընթացքում օգտվում են գրականության վերլուծության ինդուկտիվ մեթոդաբանությունից և այսպիսով տալիս պոպուլիզմի ոչ ամբողջական սահմանումներ: Հայ հեղինակներն իրենց աշխատանքների հայեցակարգայնացման ընթացքում հիմնականում հղում են կատարում ծագումով հոլանդացի, ԱՄՆ հետազոտող Կաս Մուդեի աշխատանքներին և ներկայացնում պոպուլիզմը որպես «նեղ գաղափարախոսություն»<sup>3</sup>: Միաժամանակ ցանկանում ենք նշել, որ հայ վերլուծաբանների կողմից պոպուլիզմն առավելապես ընկալվում և գործածվում է որպես ամբոխավարություն, ամբոխահաճություն, դեմագոգիա, ինչը, մեր կարծիքով, չի արտացոլում *պոպուլիզմ* եզրույթի բնույթը և եզրույթին տալիս է բացասական նրբերանգ: Ըստ Քեմբրիջի բառարանի դեմագոգիան հասարակ մարդկանց հույզերը գրգռելու և ոչ թե լավ կամ բարոյապես ճիշտ գաղափարների միջոցով նրանց աջակցությունը շահելու գործողությունն է<sup>4</sup>: Դեմագոգիան քաղաքական գործիչների «զինանոցում» առկա և ամենից հաճախ կիրառվող զինատեսակներից է և բնորոշ է տարբեր գաղափարախոսություններ կրող քաղաքական գործիչներին: Անշուշտ, պոպուլիստ առաջնորդներն առավել հաճախ

<sup>3</sup> Տե՛ս **Ա. Ղազարյան, Ա. Պողոսյան**, Պոպուլիզմը Հայաստանում. հայեցակարգային զեկույց. URL: [https://boon.am/populism-and-propaganda-arm/?fbclid=IwAR1DmX7pnoCqWRb\\_4ns-g5SeOk1fSXfmR\\_F7Du8k99loPCeXcV0LpbE\\_GSs#\\_Toc487196275](https://boon.am/populism-and-propaganda-arm/?fbclid=IwAR1DmX7pnoCqWRb_4ns-g5SeOk1fSXfmR_F7Du8k99loPCeXcV0LpbE_GSs#_Toc487196275), Լևոն Բարաջանյան, Պոպուլիզմի և ցինիզմի՝ որպես «նեղ» գաղափարախոսությունների սահմանումների համեմատական վերլուծություն // «Բանբեր Երևանի համալսարանի Փիլիսոփայություն, հոգեբանություն» 2020, № 2, էջ 31–44: **Էդգար Վարդանյան**, Պոպուլիզմը Հայաստանում, Եր., Սայիս 2021, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, էջ 2, URL: <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/18252.pdf>

<sup>4</sup> Տե՛ս <https://dictionary.cambridge.org/dictionary/english/demagogu>

են կիրառում դեմագոգիան իրենց քաղաքական խոսույթում, սակայն դեմագոգիայի և պոպուլիզմի նույնականացումը սահմանափակում է վերջինիս ընկալումը: Կարծում ենք, որ հայերենում *պոպուլիզմ* եզրույթի էությանն ու բնույթին առավել համապատասխանող համարժեքը *ժողովրդականություն* եզրույթն է: Ավելին, *ժողովրդականությունը* նույնքան անհստակ է, որքան պոպուլիզմը: Ժողովրդականություն տերմինը հայ քաղաքական իրականությունում ընդունվում է որպես դրական երևույթ, սակայն նրա բնույթի մասին քաղաքագիտական վերլուծությունները բացակայում են: Այնուամենայնիվ, սույն հոդվածում մենք կշարունակենք գործածել *պոպուլիզմ* եզրույթը:

Արևմտյան հետազոտական շրջանակներում *պոպուլիզմ* եզրույթով բնութագրվող երևույթի նշանակության շուրջ համընդհանուր ըմբռնում չկա: Ըստ պոպուլիզմի առանցքային տեսաբաններից Կաս Մուդեի սահմանման՝ «Պոպուլիզմը «նեղ» գաղափարախոսություն է, այսինքն՝ հասարակությունը բաժանված է երկու միատարր և միմյանց հակադիր խմբերի՝ ժողովուրդն ընդդեմ կոռումպացված էլիտայի, և ըստ այս գաղափարախոսության՝ քաղաքականությունը պետք է արտահայտի ժողովրդի ընդհանրական կամքը»<sup>5</sup>: Սակայն անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ պոպուլիզմի վերաբերյալ այս մոտեցումը թեպետ ամենատարածվածն է, սակայն այն միանշանակ արձագանք չի ստանում արևմտյան հետազոտողների կողմից: Գաղափարախոսությունից զատ՝ պոպուլիզմն արևմտյան հետազոտողները համարում են նաև ռազմավարություն: Օրինակ՝ Կուրտ Վեյլենդը պոպուլիզմը դիտարկում է որպես «քաղաքական ռազմավարություն, որի միջոցով անձնակենտրոն առաջնորդը ձգտում կամ իրականացնում է կառավարչական գործառույթները՝ հիմնված մեծ թվով անկազմակերպ հետևորդների ուղղակի, չմիջնորդված և ոչ ինստիտուցիոնալ աջակցության վրա»<sup>6</sup>:

Սակայն Յեյլի համալսարանի պրոֆեսոր Պարիս Ասլանիդիսը, անդրադառնալով Կաս Մուդեի առաջ քաշած՝ պոպուլիզմի նեղ գաղափարախոսություն լինելու տեսակետին, հակադարձում է, որ նման մոտեցմամբ կարելի է ցանկացած փոքրաթիվ քաղաքական հասկացություններ պարունակող հայեցակարգին տալ գաղափարախոսության կարգավիճակ: Ըստ նրա՝ «Կաս Մուդեի կողմից նշված նեղ գաղափարախոսության չափանիշներով առաջնորդվելու պարագայում ռասիզմը, այլատյացությունը, սեքսիզմը, կապիտալիզմը, ռադիկալիզմը, բազմամշակութայնությունը, տեխնոկրատիան, եվրասկեպտիցիզմը, զլոբալիզացիան, հակազլոբալիզացիան, սպառողականությունը և այլ հա-

<sup>5</sup> C. Mudde, *The Populist Zeitgeist // Government and Opposition* 39, no. 4 (2004), p. 543.

<sup>6</sup> K. Weyland, *Clarifying a Contested Concept: Populism in the Study of Latin American Politics // Comparative Politics*, (2001), 34, p. 1-22.

յեցակարգեր և կարելի է համարել գաղափարախոսություն»<sup>7</sup>: Միաժամանակ, Ասլանիդիսը նաև սխալ է համարում պոպուլիզմի՝ որպես ռազմավարության հայեցակարգայնացումը: Ըստ հեղինակի՝ ճիշտ չէ նաև պոպուլիզմի դիտարկումը որպես ռազմավարություն, քանի որ բոլոր տեսակի քաղաքական վարքագծերի խմբավորումը որպես ռազմավարություն նսեմացնում է ռազմավարության քաղաքական հայեցակարգը և պոպուլիզմը հավասարեցնում է դեմագոգիայի՝ չափազանցված խոստումներ տալու հետ<sup>8</sup>: Հերքելով պոպուլիզմը որպես գաղափարախոսություն և որպես քաղաքական ռազմավարություն ներկայացնող մոտեցումները՝ Ասլանիդիսը պոպուլիզմը սահմանում է որպես խոսույթի տարատեսակ, որը, վկայակոչելով ժողովրդական ինքնիշխանության գերակայությունը, պնդում է, որ կոռումպացված էլիտաները գրկում են «ժողովրդին» իրենց իրավունքներից: Այսպիսով, պոպուլիզմը դառնում է հակաէլիտար խոսույթ՝ հանուն ժողովրդի ինքնիշխանության: Ըստ Ասլանիդիսի՝ պոպուլիստական խոսույթի շրջանակում հասարակության խնդիրները դիտվում են հետևյալ կերպ. «կոռումպացված էլիտաները» անարդարացիորեն յուրացրել են «ազնիվ ժողովրդի» իշխանությունը, և խնդրի լուծումը «ազնիվ ժողովրդի» քաղաքական մոբիլիզացիայի միջոցով իշխանությունը ժողովրդին վերադարձնելն է<sup>9</sup>:

Վերոնշյալ հեղինակների մտքերում արտացոլված է արևմտյան ակադեմիական շրջանակներում *պոպուլիզմ* եզրույթի բնորոշման շուրջ հիմնական բանավեճը: Թեև արևմտյան հեղինակները միակարծիք չեն պոպուլիզմը որպես նեղ գաղափարախոսություն, քաղաքական ռազմավարություն կամ քաղաքական խոսույթ բնորոշելու հարցում, նրանք նույն կարծիքի են պոպուլիզմը բնորոշող կարևորագույն տարրերից մեկի՝ քաղաքականությունը որպես չարի և բարու պայքար ընկալելու շուրջ: Այլ կերպ ասած՝ պոպուլիզմը և պոպուլիստները մերժում են պլյուրալիզմը՝ բազմակարծությունը: Այս տեսանկյունից տեղին է նշել նաև Կաս Մուդդեի այն միտքը, որ «էլիտարիզմը պոպուլիզմի հայելային պատկերն է, և, համաձայն էլիտարիստների՝ քաղաքականությունը պետք է լինի բարոյական և պրոֆեսիոնալ վերնախավի, այլ ոչ թե անբարոյական մեծամասնության տեսակետների արտահայտությունը»<sup>10</sup>: Պոպուլիզմն ու էլիտարիզմն ունեն բովանդակային կարևոր ընդհանրություն. երկուսն էլ մերժում են բազմակարծությունը, ըստ որի՝ հասարակությունը բաղկացած է տարբեր գաղափարներով, ցանկություններով, սկզբունքներով և շահերով առաջնորդվող մարդկանցից և խմբերից:

<sup>7</sup> P. Aslanidis, Is Populism an Ideology? A Refutation and a New Perspective // Political Studies, 64 (2016), p. 88–104.

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 96:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 99:

<sup>10</sup> C. Mudde. The Populist Zeitgeist. // Government and Opposition 39, no. 4 (2004), p. 544.

Պոպուլիզմի էությունն ըմբռնելու տեսանկյունից կարևոր է նաև քաղաքական վարչակարգերի շարքում պոպուլիզմի դասակարգման խնդիրը: Պոպուլիստներն իրենց անվանում են իրական ժողովրդավարներ, այնինչ պոպուլիզմի հակառակորդներն այս եզրույթով պիտակավորում են ավտորիտար և անգամ տոտալիտար առաջնորդներին: Մակայն նման մոտեցումը անհնարին է դարձնում պոպուլիզմի հայեցակարգայնացման խնդիրը: Յեյլի և Հելսինկիի համալսարանների հետազոտող Տակիս Պապասն իր «Լիբերալ ժողովրդավարությունն ու պոպուլիզմը» գրքում ժամանակակից պոպուլիզմը համարում է ժողովրդավարության տարատեսակ՝ ժողովրդավարական հակալիբերալիզմ (democratic illiberalism), որը, սակայն, հակադրվում է ժամանակակից լիբերալ-ժողովրդավարությանը<sup>11</sup>: Հեղինակը համարում է, որ պոպուլիզմը, իր բնույթով լինելով ժողովրդավարական երևույթ, որը հիմնված է մեծամասնության աջակցության վրա, հակասության մեջ է ինչպես ժամանակակից լիբերալ-ժողովրդավարության, այնպես էլ ավտորիտար համակարգերի հետ: Ըստ Պապասի՝ եթե ժամանակակից լիբերալ-ժողովրդավարական համակարգերի հիմնական սկզբունքները ներառում են՝ 1) մեծամասնության բնակալության կանխարգելումը, 2) սոցիալական բազմակարծության խթանումը, 3) զսպումների և հակակշիռների մեխանիզմների պաշտպանությունը և դրանց վեր դասումը անհատական քաղաքական շահերից, 4) նպատակների ռացիոնալությունը և ոչ թե բարոյական միջոցների պաշտպանությունը, ապա պոպուլիզմը պարունակում է ժողովրդին բնութագրող հետևյալ հիմնական տարրերը՝ 1) քաղաքական մեծամասնություն ձևավորելու ներուժը, 2) այդ մեծամասնության ենթադրյալ միատարր հոգեբանական բնույթը, 3) նրա ենթակայությունը չանձնավորված ինստիտուտներին և 4) նրա բարոյական իրավունքով օժտված լինելու համոզմունքը<sup>12</sup>:

Այսպիսով, Տ. Պապասը տարանջատում է մտցնում պոպուլիզմի և լիբերալիզմի միջև, որը դրսևորվում է հետևյալում. լիբերալ ժողովրդավարության տեսակետից քվեարկության նպատակը ինստիտուցիոնալ զսպումների և հավասարակշռության միջոցով մեծամասնության բռնապետությունից խուսափելն է: Ըստ այս տրամաբանության՝ քվեարկության գործառույթը պաշտոնյաներին վերահսկելն է: Քվեարկության վրա որոշիչ ազդեցություն է ունենում առկա խնդիրների լուծմանը միտված ռացիոնալ քաղաքականության, գաղափարների ընտրությունը: Եթե ընտրությունների արդյունքում իշխանության է գալիս մարտահրավերներին չհամապատասխանող քաղաքական ուժ, ապա իշխանության մյուս ինստիտուտները, ինչպիսիք են դատական իշխանությունը, բյուրոկրատիան և այլն, զսպում են մեծամասնության կամ-

<sup>11</sup> Տե՛ս **T. Pappas**, *Populism and Liberal Democracy: A Comparative and Theoretical Analysis* // Oxford University Press, 2019, էջ 33:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը

քի բռնակալությունը, մինչև որ հաջորդ ընտրությունների միջոցով ձևավորվի նոր կառավարություն: ԱՄՆ սահմանադրության հիմքում դրված է հավասարակշռման հենց այս սկզբունքը, երբ մի կողմից պարբերաբար անցկացվող ընտրությունների միջոցով հասարակությունում առկա փոփոխությունների պահանջներն իրենց արտացոլումն են գտնում երկու տարին մեկ անցկացվող Ներկայացուցիչների պալատի ընտրություններում, իսկ մյուս կողմից՝ առկա է ԱՄՆ Սենատի ինստիտուտը, որի անդամներն ընտրվում են 6 տարի ժամկետով, իսկ Գերագույն դատարանի անդամները՝ ցմահ: ԱՄՆ-ում գոյություն ունի նաև ընտրիչների ինստիտուտը, որը փաստացի միջնորդող օղակ է նախագահի ընտրության գործում: Այսպիսով, փաստորեն բացառվում է հասարակության մեծամասնության կողմից զգացմունքային ընտրության հետևանքով պետության քաղաքական համակարգի փոփոխության հնարավորությունը, և միաժամանակ հնարավորություն է տրվում հասարակական պահանջների և տրամադրությունների փոփոխությունը մշտապես արտացոլելու պետական ինստիտուտներում:

Ի տարբերություն լիբերալ-ժողովրդավարական մոտեցման՝ ընտրությունների վերաբերյալ պոպուլիստների տրամաբանությունն այլ է. ժողովրդի կամքը պետք է մարմնավորված լինի ընտրված պաշտոնյաների գործողություններում, որոնք կոչված են ծառայելու ժողովրդին՝ անկախ ֆորմալ ինստիտուտներից և իրավական սահմանափակումներից: Նման տրամաբանության պարագայում ընտրությունները ժողովրդի համար միջոց են՝ ուղղակիորեն մասնակցելու օրենքների ընդունմանը, որը պետք է արտահայտի ժողովրդի համընդհանուր կամքը: Եվ պոպուլիստ առաջնորդներն արդարացնում են մեծամասնության բռնապետությունը տարբեր սցիալական փոքրամասնությունների նկատմամբ՝ հենվելով այն փաստարկի վրա, որ ընտրությունների արդյունքները ճշմարտացիորեն արտահայտում են ժողովրդի կամքը: Ըստ պոպուլիստական տրամաբանության՝ սուվերեն մեծամասնության կամքը կարող է սահմանափակվել ոչ թե ֆորմալ ինստիտուտներով, այլ նրա էթիկական և վարքագծային սկզբունքներով<sup>13</sup>: Տ. Պապպասը նշում է, որ պոպուլիստների ժողովրդավարական բնույթը դրսևորվում է պառլամենտարիզմի հանդեպ նրանց ունեցած հավատարմության և մրցակցային ընտրություններին մասնակցելու որոշման մեջ: Դրա հետ մեկտեղ՝ հեղինակը ժողովրդավարական և պոպուլիստական չի համարում այն քաղաքական ուժերին, որոնք մասնակցում են ընտրություններին՝ նպատակ ունենալով իշխանության գալուց հետո վերացնել մրցակցային ընտրությունների ինստիտուտը, ինչպես, օրինակ՝ հաճախ վարվում էին կոմունիստական և ֆաշիստական կուսակցությունները: Այն կուսակցությունները, որոնք նպատակ ունեն չե-

---

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 56:

դարկելու պառլամենտական ժողովրդավարությունը, չեն կարող համարվել ժողովրդավարական, հետևաբար նաև դուրս են մնում պոպուլիստական կուսակցությունների դասից: Ըստ այս տրամաբանության՝ կուսակցությունը կարող է համարվել պոպուլիստական, եթե համապատասխանում է հետևյալ չափանիշներին՝ 1. մասնակցում է մրցակցային ընտրություններին, 2. հավատարիմ է խորհրդարանական ժողովրդավարության կանոններին և ընթացակարգերին, 3. ունի դիրքորոշում, որ հասարակությունը պառակտված է ժողովրդի և անորոշ էլիտայի միջև, 4. նպաստում է քաղաքական բևեռացմանը՝ ի վնաս կոնսենսուսի և չափավոր քաղաքականության, 5. նպաստում է մեծամասնականությանը՝ ի հաշիվ օրենքի գերակայության:

Կարծում ենք, որ Տ. Պապպասի այս ցուցիչները, սակայն, չեն կարող ամբողջությամբ արտահայտել պոպուլիզմի ժողովրդավարական բնույթը, քանի որ նման մոտեցումներ ունեցող քաղաքական ուժը կամ կուսակցությունը, գալով իշխանության, կարող է փաստացի հրաժարվել ժողովրդավարական պառլամենտարիզմի սկզբունքներից ևս, իսկ լիբերալ-ժողովրդավարությանը կամ պոլիարխիային բնորոշ զապման ինստիտուտների վերացումից և ժողովրդական աջակցությունը կորցնելուց հետո կարող է վերածվել ավտորիտար վարչակարգի: Հեղինակը ևս նման եզրակացության է հանգում. «Հայտնվելով լիբերալ-ժողովրդավարության և ավտորիտարիզմի միջև դժվարին ընտրության առջև՝ պոպուլիստները, հատկապես երբ գտնվում են իշխանության ղեկին, ավելի շատ հակվում են դեպի ավտորիտարիզմը, քան դեպի լիբերալ-ժողովրդավարությունը»<sup>14</sup>: Նման քաղաքական ուժերը բազմաթիվ են, և նրանց շարքում կարելի է նշել Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանին, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանին, Վենեսուելայի առաջնորդ Նիկոլաս Մադուրոյին և անգամ ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփին:

Այս պոպուլիստ առաջնորդների մեծ մասն իշխանության է եկել լիբերալ-ժողովրդավարական պետություններում և մարտահրավեր նետել գործող համակարգերին. պոպուլիզմը որոշ հեղինակներ բնորոշում են որպես ոչ ժողովրդավարական լիբերալիզմ: Նման երկրներում քաղաքականության շատ ասպեկտներ դուրս են ժողովրդավարական քննարկումներից: Մակրոտնտեսական ոլորտի որոշումները կայացնում են անկախ կենտրոնական բանկերը, որոնք դուրս են ժողովրդավարական վերահսկողությունից, իսկ առևտրային հարաբերությունները կարգավորվում են միջազգային առևտրային համաձայնագրերով, որոնց վերաբերյալ որոշումները կայացվում են ոչ թե ժողովրդավարական մեխանիզմների գործարկմամբ, այլ մասնագիտական կառույցների կողմից անդրկուլիսյան պայմանավորվածությունների արդյուն-

<sup>14</sup> T. Pappas, *Populism and Liberal Democracy: A Comparative and Theoretical Analysis* // Oxford University Press, 2019, p. 56.

քում, սոցիալական խնդիրների շուրջ վեճերը լուծվում են ոչ թե հանրային խորհրդակցությունների արդյունքում, այլ սահմանադրական դատարանների վճիռներով: Այս ամենի հետևանքով մի շարք զարգացած լիբերալ պետությունների քաղաքացիներ իրենց օտարված են զգում քաղաքականությունից: Այսպիսով, նրանք ապրում են լիբերալ պետություններում, «որտեղ նրանց իրավունքները հարգվում են, սակայն նախապատվությունները անտեսվում»<sup>15</sup>: Հետևաբար՝ նրանք ժողովրդավարական մասնակցային այլընտրանք են փնտրում: Ինչպես նշում է Յեյի համալսարանի պրոֆեսոր Վիլյամ Գալստոնը, «նման դեպքերում պոպուլիզմը ոչ այնքան հարձակում է ժողովրդավարության վրա, որքան արձագանք ժողովրդավարության դեֆիցիտին»<sup>16</sup>: Լիբերալ-ժողովրդավարական պետություններում սկիզբ առնող նմանատիպ քաղաքական շարժումները Տակիս Պապպասն անվանում է «ժամանակակից պոպուլիզմ» կամ «հետլիբերալ պոպուլիզմ»<sup>17</sup>:

Ըստ որոշ հետազոտողների՝ հետնիքսոնյան ժամանակաշրջանում պոպուլիստական քաղաքական ուժերն ԱՄՆ-ում հիմնականում թիրախավորում են «լիբերալ էլիտաներին», որոնք ներառում են բյուրոկրատներին, ՋԼՄ-ները, «ամբարտավան» գիտնականներին<sup>18</sup>: Վերջին ժամանակներում նշված խմբերին ավելացել են նաև մշակութային էլիտաները: Ըստ Վ. Գալստոնի՝ ԱՄՆ-ում այս մշակութային երկփեղկույնը բաժանվում է հետևյալ երկու մշակութային բևեռների. «Ժողովրդի ներկայացուցիչներն ուտում են համբուրգերներ, լսում են քանթրի կամ արևմտյան երաժշտություն և դիտում են Duck Dynasty սերիալը, այնինչ գլոբալիստները սպառում են այն ամենը, ինչ նրանց են մատուցում PBS, NPR և The New York Times լրատվականները»<sup>19</sup>: *Պոպուլիզմ* տերմինն ըստ էության բացասական նրբերանգ է ստացել հենց այս ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ-ում քեյնսականությունը փոխարինվեց «շուկայական հեղափոխությամբ», որի հետևանքով ԱՄՆ-ում առավել բյուրեղացավ սոցիալական շերտավորումը: Մինչև 1970-ականները *պոպուլիզմ* եզրույթը չունեի այնպիսի բացասական երանգավորում, ինչպիսին այն ունի այսօր: Ակադեմիական շրջանակներում պոպուլիզմ եզրույթի ծագումնաբանությունը վերագրվում է 19-րդ դարում ԱՄՆ-ում ծագած Պոպուլիստական կուսակցության անվանմանը, որը միավորում էր ֆերմերներին և քաղաքային փոքր ձեռնարկատերերին խո-

<sup>15</sup> Y. Mounk, *Illiberal Democracy or Undemocratic Liberalism?* Jun 9, 2016. URL: <https://www.project-syndicate.org/commentary/trump-european-populism-technocracy-by-yascha-mounk-1-2016-06>

<sup>16</sup> W. A. Galston, et al, *Anti-Pluralism: The Populist Threat to Liberal Democracy* // Yale University Press, 2018, p. 37.

<sup>17</sup> T. Pappas, *Democracy, Liberalism, and their Opposites* // First published in *Democracy Paradox*, December 15, 2022.

<sup>18</sup> St u D. H. Bennett and M. Kazin, *The Populist Persuasion: An American History* // New York: Basic Books, *Historical Review*, Volume 101, Issue 4, October 1996, էջ 266:

<sup>19</sup> W. A. Galston, J.D. Hunter, and J. M. Owen. *Anti-Pluralism: The Populist Threat to Liberal Democracy* // Yale University Press, 2018. <https://doi.org/10.2307/j.ctt21668rd>.



շոր կապիտալի և բանկերի գերակայության դեմ պայքարում: Այսպիսով, ԱՄՆ-ում ստեղծվում էր կուսակցություն, որը մարտահրավեր էր նետում հանրապետականներին և դեմոկրատներին: ԱՄՆ պոպուլիստական կուսակցության օրակարգը ներառում էր շրջանառվող արժույթի ավելացում, աստիճանավորված եկամտահարկի հարկում, երկաթուղիների պետականացում, ԱՄՆ սենատորների ուղիղ ընտրություն (որն այդ պահին իրականացվում էր նահանգային օրենսդիրների կողմից)<sup>20</sup>: Թեպետ պոպուլիստական կուսակցությունն ԱՄՆ-ում հաջողություն չունեցավ դաշնային ընտրություններում և լուծարվեց, այնուամենայնիվ կուսակցության առաջ քաշած գաղափարների ու ծրագրերի մի մասը յուրացվեց դեմոկրատական կուսակցության կողմից: 19-րդ դարում ԱՄՆ-ում առաջացած պոպուլիստական կուսակցությունը/շարժումն ուներ ռեֆորմիստական բնույթ:

Բացի ԱՄՆ-ից, պայմանական ռեֆորմիստական բնույթ կրող պոպուլիստական քաղաքական ուժեր առկա են եղել նաև մի շարք այլ պետություններում, ինչպես, օրինակ՝ լատինամերիկյան երկրներում՝ Բրազիլիայում Ժետուլիու Վարգասի կամ Արգենտինայում Խուան Պերոնի ժամանակաշրջանում: Այստեղ անհրաժեշտ է նշել մեկ կարևոր առանձնահատկություն: Արևմտյան քաղաքական խոսույթի շրջանակներում լիբերալ-ժողովրդավարական վարչակարգեր ունեցող պետություններում առաջ եկող պոպուլիստական ուժերը դիտվում են որպես ժողովրդավարության սպառնալիք, այնինչ ոչ ժողովրդավարական վարչակարգերի պայմաններում պոպուլիստական շարժումները հաճախ ընկալվում են որպես ժողովրդավարացման գործիք, որը մոբիլիզացնում է հասարակության լայն շերտերին ժողովրդավարացման գործընթացում և կարող է վերջնարդյունքում հանգեցնել լիբերալ-ժողովրդավարական համակարգի ձևավորմանը: Վարդերի հեղափոխությունից հետո Վրաստանում իշխանության եկած Սիխեիլ Սաակաշվիլին վարում էր պոպուլիստական քաղաքականություն, միաժամանակ համարվում էր նաև ժողովրդավար: Նմանատիպ քաղաքական համակարգերը մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել նաև նախալիբերալ ժողովրդավարական համակարգեր<sup>21</sup>:

Մասնագիտական և քաղաքական շրջանակներում ընդունված է նաև ժամանակակից արևմտյան պոպուլիստական քաղաքական ուժերի դասակարգումը աջերի և ձախերի՝ գաղափարաբանական հարթությունում: Պոպուլիստական երկու գաղափարական հոսանքների միջև առկա են որոշ արժեքաբանական տարբերություններ, սակայն քաղաքական և տնտեսական մոտեցումների հարցում ավելի շատ ընդհանրություններ են առկա: Ձախ պոպուլիզմում ավելի ընդգծված են,

<sup>20</sup> Տե՛ս <https://www.britannica.com/event/Populist-Movement>

<sup>21</sup> Տե՛ս **F. Zakaria**, *The Rise of Illiberal Democracy* // *Foreign Affairs*, vol. 76, no. 6, 1997, էջ 22-43:

այսպես կոչված, պոստմոդերն արժեքները սոցիալական հարցերի վերաբերյալ, օրինակ՝ դրական վերաբերմունքը միասեռականների ամուսնությանը, մինչդեռ աջ պոպուլիզմը հիմնականում նախամոդերն է, այսինքն՝ սոցիալապես պահպանողական, և սկզբունքայնորեն դեմ է միասեռական ամուսնություններին, հղիության ընդհատումների իրավունքին, միգրացիոն ճկուն քաղաքականությանը: Արևմտյան ձախ պոպուլիստներին բնորոշ գծերից են նաև պաղեստինցիների հանդեպ համակրանքն ու հակասեմիթականությունը, թերահավատությունը պատվաստանյութերի և լաբորատոր փորձարկումների հանդեպ:

Ըստ Սերգեյ Գուրիևի՝ գալով իշխանության՝ ժամանակակից պոպուլիստները վարում են տնտեսական պրոտեկցիոնիզմի քաղաքականություն և վերացնում են տեխնոկրատական, քաղաքական և տնտեսական հակակշիռների մեխանիզմները: Նրանք նաև ստանձնում են դատարանների և կենտրոնական բանկերի ուղղակի քաղաքական վերահսկողությունը և մերժում միջազգային պարտավորությունների կատարումը<sup>22</sup>: Մակայն, այստեղ ևս հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ հեղինակը նկատի ունի լիբերալ-ժողովրդավարական համակարգերում իշխանության եկող պոպուլիստական կուսակցություններին:

Պոպուլիստների իշխանության գալը մեծապես կախված է տվյալ պետության քաղաքական համակարգի բնույթից և գործող կուսակցությունների բացթողումներից: Ինստիտուցիոնալացված քաղաքական համակարգեր ունեցող պետություններում գալով իշխանության՝ պոպուլիստներն աստիճանաբար սկսում են փոխգործակցել, իսկ երբեմն էլ համագործակցել գործող քաղաքական կուսակցությունների և նրանց առաջնորդների հետ, որոնց նախկինում անվանում էին ժողովրդի հակառակորդներ և կոռումպացված էլիտաներ: Այսպիսով, սկսվում է պոպուլիստական ուժերի աստիճանական ինտեգրումը գործող կուսակցական համակարգերին:

Ամփոփելով թեման՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ պոպուլիզմը՝ որպես քաղաքականության ոճ, իր առանցքային տեղն է զբաղեցնում ժամանակակից քաղաքականության մեջ և փոփոխության է ենթարկում կարծրացած քաղաքական համակարգերը, որտեղ քաղաքականությունը կարտելիզացվել է ավանդական քաղաքական ուժերի կողմից: Պոպուլիզմի ժողովրդավարական կամ հակաժողովրդավարական բնույթի շուրջ արծարծված մտքերի լավագույն աջակցությունը կամ քննադատությունը կարելի է գտնել Ռալֆ Դարենդորֆի հետևյալ մտքում. «Ունանց պոպուլիզմն այլոց ժողովրդավարությունն է և հակառակը»<sup>23</sup>:

<sup>22</sup> Sէ u Գурьев С. Экономика и политика возрождения популизма в развитых странах, 15 июля 2019: URL <https://econs.online/articles/opinions/ekonomika-i-politika-vozhrozhdeniya-populizma/>

<sup>23</sup> Հղումն ըստ Krastev, Ivan “The Populist Moment.” (2007). URL: <https://www.robert->

**ГОР ПЕТРОСЯН – Популизм как демократизирующий антилиберальный феномен.** – В последнее десятилетие популизм стал одним из наиболее употребляемых, а иногда и демонизированных терминов среди политиков, аналитиков и широкой общественности, следящей за политическими событиями. После победы Дональда Трампа на президентских выборах в США количество исследований в области популизма среди западных политологов значительно увеличилось, а в 2017 году «популизм» был объявлен словом года по версии Кембриджского словаря. Несмотря на отсутствие универсального определения этого явления, исследователи сходятся во мнении относительно одного из важнейших элементов, определяющих популизм: он рассматривает политику как борьбу добра и зла. В рамках данной статьи мы исследуем происхождение термина «популизм» и причины его негативного восприятия. Проведя обзор литературы и анализ экспертных интервью, данная статья ставит своей целью найти ответ на вопрос: «почему проявление популизма в одном случае воспринимается как позитивное, а в другом – как негативное явление?» В рамках статьи популизм рассматривается как демократизирующий антилиберальный феномен. С помощью этой статьи автор также пытается стимулировать конструктивную академическую дискуссию о природе феномена популизма.

**Ключевые слова:** *популизм, демократия, демократизация, идеология, антилиберализм, политика, выборы, политические системы*

**GOR PETROSYAN – Populism as a Democratizing Illiberal Phenomenon.** – During the last decade populism has become one of the most used and sometimes the most demonized terms by politicians, analysts and the general public who follow the political developments. After the victory of Donald Trump in US presidential elections the number of studies on populism among Western political analysts has significantly increased, and in 2017, "populism" was announced as the word of the year by the Cambridge dictionary. Despite there is no universal definition of this phenomenon, there is a consensus among researchers about one of the most important elements defining populism: It sees politics as a struggle between good and evil. Within the framework of this article, we study the origin of the term populism and the reasons for its negative perception. By conducting a literature review and analyzing expert interviews, this article aims to find an answer for the question “why is the manifestation of populism in one case perceived as a positive, and in another case as a negative phenomenon?” Within the framework of the article, populism is considered as a democratizing anti-liberal phenomenon. With this article the author also tries to stimulate a constructive academic debate about the nature of the phenomenon of populism.

**Key words:** *populism, democracy, democratization, ideology, illiberalism, politics, elections, political systems*

**ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՂԵՍ ԱԶԳԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ ԵՎ ԴՐԱ  
ԱՐԺԵՔԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

**ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Ժամանակակից աշխարհը վերափոխումների շրջան է ապրում: Նոր ուժային կենտրոնների ձևավորումը և դրանց միջև սրվող պայքարը, ինչպես նաև այդ պայքարում ռազմական ուժի նշանակության մեծացումը հանգեցնում են աշխարհակարգի կառուցվածքի փոփոխության և նոր կանոնների ու սկզբունքների ձևավորման: Յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության ապահովման քաղաքականության և որոշումների ընդունման գործընթացի կառուցվածքում հատուկ նշանակություն ունեն քաղաքական հայեցակարգային փաստաթղթերը, որոնցից ամենակարևորներից է ազգային անվտանգության հայեցակարգը կամ դրան իր գործառույթներով հավասարագոր այն փաստաթուղթը, որը, ելնելով երկրի առանձնահատկությունից, կարող է ունենալ այլ անվանում: Ազգային անվտանգության հայեցակարգը քաղաքական փաստաթուղթ է, որը ներառում է արդի աշխարհում պետության տեղի և դերի մասին պաշտոնական հայացքների համակարգը, պետության ազգային արժեքները, շահերն ու նպատակները, արտաքին և ներքին սպառնալիքների կանխման և հակադարձման ուժերը, միջոցներն ու կարողությունները, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման համակարգի գործառույթան կազմակերպման հիմքերն ու սկզբունքները:

Գիտության ու տեխնիկայի արագ համաշխարհայնացումը, ինչպես նաև ճանապարհորդությունների, առևտրի և միգրացիայի ընդլայնումը դրական արձանագրումներին զուգընթաց՝ ի հայտ բերեցին նոր սպառնալիքներ ու մարտահրավերներ, որոնք պետություններից պահանջում են լոկալ, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում գործել խաղի նոր կանոններով: Դրանցում վճռորոշ են կենսաբանական սպառնալիքների վերահսկումը և կանխարգելումը: Կենսանվտանգությանը վերաբերող խնդիրները անմիջական կապ ունեն կրիտիկական ենթակառուցվածքների հետ և ազգային մակարդակի սպառնալիքներ են:

**Բանալի բառեր** – *ազգային անվտանգություն, կենսաբանական անվտանգություն, կենսատեխնոլոգիա, կենսաբանական սպառնալիք, գենետիկորեն ձևափոխված մարմիններ, կենսաբանական զենք*

Ամենաընդհանուր բնորոշմամբ՝ ազգային անվտանգության քաղաքականությունն ընկալվում է որպես ազգային շահերի պաշտպա-

նության համակարգ և ներառում է սոցիալ-տնտեսական, քաղաքական, արտաքին, ռազմական, տեխնիկական, իրավական և այլ բնույթի օպերատիվ ու երկարաժամկետ միջոցառումների, պետության կողմից ձեռնարկվող համապատասխան գործողությունների, ինչպես նաև քաղաքացիների ու նրանց հասարակական միավորումների գործունեության համալիրը:

Արդի գլոբալ անորոշությունները լուրջ մարտահրավերներ են նետել զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների անտանգային և քաղաքական համակարգերին: Ձևավորվող աշխարհակարգը կոչված է փոխակերպելու լոկալ, տարածաշրջանային, գլոբալ սպառնալիքները: Գործընթացի առավել վտանգավոր դրսևորումներից են կենսաբանական պատերազմները, որոնք ծագում են միջէթնիկական բախումների, միջպետական հարաբերությունների սրման, ներքաղաքական անհանդուրժողականության դրսևորումների հետևանքով հանգեցնելով աշխարհաքաղաքական քառսի, կաթվածահար անելով քաղաքական և հասարակական կյանքը:

Անցյալում պետությունների մրցակցության ռազմական, քաղաքական, տնտեսական հնարավորություններին այսօր ավելացել են նոր չափանիշներ, որոնք պայմանավորում են պետության կենսանվտանգության ոլորտի տեղն ու դերը երկրի ազգային անվտանգության համատեքստում: Պետությունների անվտանգության համակարգում ռազմավարական նշանակություն է ստանում նաև պետության անվտանգության ապահովումը կենսանվտանգության ոլորտում:

«Կենսաբանական անվտանգությունը» համեմատաբար նոր տերմին է, բավականին անկայուն բովանդակությամբ: Նշված տերմինի գոյություն ունեցող սահմանումները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի հետազոտողների համար տեսական հիմք են ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» 1992 թ. հունիսի 5-ին ընդունված կոնվենցիան և ՄԱԿ-ի՝ 2000 թ. հունվարի 29-ի «Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիային վերաբերող կենսանվտանգության» Կարթագենյան արձանագրությունը: Այդ միջազգային փաստաթղթերի նպատակը ժամանակակից կենսատեխնոլոգիաների օգնությամբ ստացված՝ ձևափոխված կենդանի օրգանիզմների հնարավոր սպառնալիքներից կենսաբանական բազմազանության պահպանության իրավական հիմքերի ձևավորումն է<sup>1</sup>:

Պրոֆեսոր Տ. Ի. Մակարովան կենսաբանական անվտանգությունը սահմանում է որպես շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի և առողջության պաշտպանվածության վիճակ կենսաբանական ազդակների, այդ թվում՝ գենաինժեներական գործունեությամբ փոփոխված կենդանի օրգանիզմների հնարավոր վնասակար ազդեցությունից: Մակայն

<sup>1</sup> Ст'ю **Жемчугов В.** Биобезопасность - важное направление работы // Гражданская защита. 2008, № 10, էջ 34-35:

գենային ինժեներիան ժամանակակից կենսատեխնոլոգիաների կիրառման միայն մասնավոր դեպք է: Դրանից կարելի է եզրակացնել, որ «կենսանվտանգություն» տերմինը շատ ավելի լայն է, քան «գենահինժեներական գործունեության անվտանգություն» սահմանումը:

Գիտնականների մյուս խումբը տալիս է այս տերմինի ավելի լայն սահմանումը՝ «մարդու, հասարակության, պետության, քաղաքակրթության և շրջակա միջավայրի պաշտպանվածություն մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր, բնական կամ գենետիկորեն ձևափոխված կենսաբանական օբյեկտներում և դրանցից ստացված մթերքներում պարունակվող թունավոր և ալերգիկ կենսաբանական նյութերի և միացությունների վնասակար ազդեցությունից»: Ընդ որում՝ հետևողականորեն արտահայտվում է այն միտքը, որ կենսաբանորեն վնասակար օրգանիզմները և դրանց արգասիքները վտանգավոր են ոչ միայն մարդու, այլև բույսերի, կենդանիների, օգտակար մանրէների գոյության համար՝ առաջացնելով դրանց ախտահարման տարբեր աստիճաններ՝ ընդհուպ վերացում՝ գրկելով մարդուն սննդամթերքից և գոյության այլ աղբյուրներից ու հնարավորություններից<sup>2</sup>:

Կենսաբանական անվտանգությունը որպես գիտություն միավորում է վտանգավոր կենսաբանական գործոններից մարդուն պաշտպանելու տեսությունը և պրակտիկան:

Ազգային կենսաբանական անվտանգությունը վնասի կանխարգելմանը, ինչպես նաև պոտենցիալ և իրական կենսաբանական սպառնալիքներից անձին, հասարակությանը և պետությանը պաշտպանելուն ուղղված կազմակերպչական և տեխնիկական միջոցառումների համակարգ է:

«Կենսանվտանգություն» տերմինը փոխառվել է անգլալեզու գրականությունից, որտեղ այն ներառում է երկու ուղղություն՝ «biosafety» և «biosecurity»:

1. Կենսաբանական անվտանգություն (biosafety)՝ մարդու և անձնակազմի առողջության համար կենսատեխնոլոգիաների (այդ թվում՝ գենային ինժեներիայի) անվտանգության, ինչպես նաև պաթոգեններից և կենսաբանական գործոնների այլ վնասակար ազդեցություններից պաշտպանության ապահովում: Օրինակ՝ այս տերմինն օգտագործվում է պաթոգենության 1-4-րդ խմբերի մանրէների հետ աշխատանքի անվտանգության հիմքերը կանոնակարգելիս:

2. Կենսաբանական անվտանգություն (biosecurity)՝ լաբորատորիայում կենսաբանական ազդակների և տոքսինների պահպանության, վերահսկողության և հաշվառման ապահովում՝ դրանց կորստից, գողությունից, սխալ օգտագործումից, դիվերսիայից, չարտոնված օգտագործու-

---

<sup>2</sup> St' u De Oliveira Cardoso T.A., De Albuquerque Navarro M.B.M., Soares B.E.C., Tapajós A.M. Biosafety and biosecurity: applicabilities of the biological security// Interciencia. 2008, vol. 33, № 8, էջ 561-568:

մից կամ միտումնավոր չարտոնված արտանետումից խուսափելու նպատակով («կենսաբանական ահաբեկչության» կանխում): Այս տերմինը հանդիպում է նաև «ագրոառնաբեկչություն» երևույթը նկարագրելիս:

Քանի որ կենսանվտանգության համակարգերի գործառնության վերջնարդյունքն ու նպատակը մարդկանց առողջությունն ու բարեկեցությունը ամրապնդելն են, կարելի է համարել, որ կենսանվտանգությունը այն կամուրջն է, որը միացնում է գյուղատնտեսությունը և առողջապահությունը: Պրակտիկ ոչ բավարար հմտությունները գյուղատնտեսության ոլորտում կամ սննդամթերքի արտադրության բնագավառում կարող են նպաստել կենսանվտանգության հետ կապված ռիսկերի առաջացմանը և անմիջականորեն ազդել մարդկանց առողջության վրա կամ սպառնալ սննդամթերքի անվտանգությանը<sup>3</sup>:

Ըստ ծագման՝ կենսաբանական սպառնալիքները լինում են բնական, պատահական և դիտավորյալ:

**1. Բնական կենսաբանական ռիսկեր:** Վարակիչ հիվանդությունները սահմաններ չեն ճանաչում: Միգրացիան, առևտուրը, կենսամիջավայրի խաթարումը և ճանապարհորդությունները՝ գումարած թույլ առողջապահական համակարգերը, մեծացնում են վարակիչ հիվանդությունների տարածման հավանականությունը ամբողջ աշխարհում: Հակամանրէային դիմադրությունը, տարափոխիկ նոր հիվանդությունները և երբեմնի աշխարհագրական առումով սահմանափակ վարակիչ հիվանդությունների վերածնունդն ու տարածումը կարող են գերազանցել արձագանքման կարողությունները և բռնկումները դարձնել ավելի դժվար վերահսկելի: Եթե ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակով համապատասխան գործողություններ չիրականացվեն, ապա կունենանք հակաբիոտիկների նկատմամբ կայուն վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման աճ, ինչը հսկայական ազդեցություն կունենա ինչպես մարդկանց առողջության, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա: Տնտեսական փլուզման կամ միջազգային կոնֆլիկտների պատճառով իմունիզացման ծրագրերի ձախողումը կարող է հանգեցնել պատվաստանյութերով կանխարգելվող հիվանդությունների (օր.՝ դիֆթերիա, կարմրուկ) դեպքերի աճի: Երկրաժամկետ հեռանկարում կլիմայի փոփոխությունը նույնպես կմեծացնի վնասատուների և վարակիչ հիվանդությունների տարածման հավանականությունը երկրագնդի նոր ծագերում, որտեղ միջավայրը նախկինում չէր աջակցում դրանց շրջանառությանը<sup>4</sup>:

<sup>3</sup> St' u Hall C. M. Biosecurity, tourism and mobility: institutional arrangements for managing tourism-related biological invasions // Journal of Policy Research in Tourism, Leisure and Events. 2011, v. 3. № 3, էջ 256-280:

<sup>4</sup> St' u Указ Президента РФ от 11 марта 2019 г., № 97, «Об Основах государственной политики Российской Федерации в области обеспечения химической и биологической безопасности на период до 2025 года и дальнейшую перспективу» // <https://www.garant.ru/products/ipo/prime/doc/72092478/>

**2. Պատահական կենսաբանական ռիսկեր:** Գիտական և տեխնոլոգիական առաջընթացը, ինչպես նաև ավելի մեծ թվով երկրներում կենսաբանական գիտությունների զարգացումը մեծացնում են վտանգավոր կենսաբանական նյութերի պատահական արտանետման հավանականությունը: Աշխարհի շատ երկրներում վտանգավոր հարուցիչները պահվում են այնպիսի լաբորատորիաներում, որոնք չունեն կենսանվտանգության համապատասխան պայմաններ, ինչը կարող է հանգեցնել լաբորատորիայում վարակի բռնկման կամ պաթոգենի պատահական արտանետման դեպի շրջակա միջավայր<sup>5</sup>:

**3. Դիտավորյալ կենսաբանական ռիսկեր:** Կենսաբանական զենքի օգտագործումը պետական կամ ոչ պետական դերակատարների կողմից լուրջ մարտահրավեր է մեր բնակչության առողջության, շրջակա միջավայրի, գյուղատնտեսության և առհասարակ ազգային անվտանգության համար: Բազմաթիվ երկրներ իրականացնում են կենսաբանական զենքի գաղտնի ծրագրեր, իսկ ահաբեկչական մի շարք խմբավորումներ ձգտում են ձեռք բերել կենսաբանական զենք: Գիտական ու տեխնոլոգիական առաջընթացը հնարավոր է դարձնում պետական ու ոչ պետական դերակատարների և ահաբեկչական խմբավորումների կողմից կենսաբանական զենքի ստեղծումն ու օգտագործումը: Համացանցը, մասնավորապես «մութ ցանցը», նույնպես ստեղծում է կենսաբանական զենքի հետ կապված նյութեր և սարքավորումներ ձեռք բերելու մեծ հնարավորություններ<sup>6</sup>:

21-րդ դարը յուրահատուկ է իր գիտատեխնիկական առաջընթացի և վիրտուալացման գործընթացներով, որոնք ի սկզբանե ակնառու էին իրենց բացասական կողմերով: Լրջագույն վտանգներից է կենսաբանական ահաբեկչության և կենսաբանական աղետների աճը, ինչը սպառնում է պետությունների, հասարակությունների և անհատների կայուն կենսագործունեությանն ու բնականոն զարգացմանը:

Արդիական սպառազինության շարքում միկրոբային զենքերն ու դրանց տեխնոլոգիան ամենաշատն են արժանացել միջուկային զենքեր ստիբապետող երկրների ուշադրությանը, քանզի միջուկային զենքերը ակտիվ վտանգի աղբյուր չեն, այլ առավելապես համարվում են կանխարգելիչ պոտենցիալ ուժ: Այդպիսի զենքեր ունեցող երկրները չեն կարող դա հեշտությամբ կիրառել իրենց թշնամիների դեմ, քանզի այդ դեպքում վտանգները չափազանց ծավալուն ու անվերահսկելի կլինեն<sup>7</sup>:

<sup>5</sup> St' u National Biodefense Strategy of US, White House, 2018 // <https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2018/09/National-Biodefense-Strategy.pdf>

<sup>6</sup> St' u UK Biological Security Strategy, The Home Office, London, July 2018 // [https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/730213/2018\\_UK\\_Biological\\_Security\\_Strategy.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/730213/2018_UK_Biological_Security_Strategy.pdf)

<sup>7</sup> St' u **Черкесов В. В., Хацько М. С., Гентлер А. Н.** Актуальность проблемы биотерроризма // Пожарная и технологическая безопасность: проблемы и пути совершенствования. 2020, № 2 (6), էջ 475-479:



Քիմիական զենքերը ևս լավ այլընտրանք չեն համարվում ահաբեկչական գործողությունների համար, քանզի դրանց փոխադրման, պահպանության ու օգտագործման բարդությունները և նյութերի արտադրման վտանգը որոշակի անհարմարություններ են ստեղծում: Այդ պատճառով էլ արդիական սպառազինության մեջ առավել մեծ ուշադրության է արժանացել կենսաբանական զենքը:

Այսպես, կենսաբանական ահաբեկչությունը կամ բիոտեռորիզմը իրականացվում է «կենսաբանական զենքերով», որոնց ստեղծումը ավելի հեշտ ու, այսպես ասած, էժան արտադրություն է, քան քիմիական և ատոմային զենքերը:

Կենսաբանական ահաբեկչությունը պաշտոնապես ճանաչվել է միջազգային անվտանգության հիմնական սպառնալիքներից մեկը՝ արդեն կատարված ահաբեկչական գործողությունների, ինչպես նաև կենսաբանական գիտության և կենսատեխնոլոգիայի զարգացման վերլուծության արդյունքում:

Կենսաբանական զենքը ունի հետևյալ առանձնահատկությունները.

- բարձր պոտենցիալ արդյունավետություն, որը պայմանավորված է հարուցչի վիրուլենտականությամբ, այսինքն՝ կենսաբանական զենքի չնչին քանակները կարող են առաջացնել զանգվածային ախտահարումներ և ընդգրկել մեծ տարածքներ, օրինակ՝ ընդունվում է, որ 1 գրամ բոտուլինային տոքսինը բավական է՝ մահացու թունավորելու 1 մլն մարդու,

- կոնտագիոզ հատկություն, այսինքն՝ փոխանցվում է հիվանդից առողջին և արագ անցնում շրջապատի մարդկանց, կենդանիներին,

- վարակիչ ազդեցության երկարատևություն, որը պայմանավորված է արտաքին միջավայրում հարուցիչների կայունությամբ (խուլերայի հարուցիչները պահպանվում են ջրում մինչև 21-22 օր, սիբիրյան խոցի հարուցիչները հողում պահպանվում են տասնյակ տարիներ),

- գաղտնի (ինկուբացիոն) շրջան,

- հայտնաբերման դժվարություն, քանի որ կենսաբանական միջոցները չունեն արտաքին նշաններ (հոտ, գույն), դրանք կարելի է հայտնաբերել լաբորատոր բարդ մեթոդների օգնությամբ: Այդ պատճառով շատ հաճախ որպես կենսաբանական հարձակման ազդանշան է ծառայում առաջին հիվանդների ի հայտ գալը,

- հիվանդությունները ախտորոշելու դժվարություն, հատկապես երբ օգտագործում են անսովոր փոխանցման մեխանիզմներով հարուցիչներ<sup>8</sup>:

Կենսաբանական զենքի կիրառման միջոցներ են՝ ավիացիոն ռումբերը, փոխանցման սարքերը, որոնք տեղադրվում են ինքնաթիռների, ուղղաթիռների վրա, ռեակտիվ հրետանու զինամթերքները, հրթիռնե-

<sup>8</sup> Տե՛ս **Broussard L. A.** Biological agents: weapons of warfare and bioterrorism // Molecular Diagnosis and Therapy. 2001, v. 6, № 4, էջ 324-333:

րի մարտական մասերը, կեսաբանական ականները, ավիառումբերը և հատուկ կառուցվածքի կոնտեյներները, որոնք թռիչքի և վայելքի ժամանակահատվածում պաշտպանում են ոչ բարենպաստ գործոնների ազդեցությունից: Կենսաբանական զինամթերքների տեղափոխման միջոցներն են՝ ավիացիան, հրթիռները, հրետանին և այլն:

1972 թ. ապրիլի 10-ին 22 պետությունների միջև ստորագրվեց «Մանրէաբանական (կենսաբանական) և թունավորող գործոններ պարունակող զենքի մշակումը, արտադրությունը և կուտակումը արգելելու և այն ոչնչացնելու մասին» կոնվենցիան, որն առավել հայտնի է Կենսաբանական զենքի կոնվենցիա անվանումով (ԿՉԿ): ԿՉԿ-ն զինաթափման մասին առաջին բազմակողմ պայմանագիրն էր, որն արգելում էր զենքի մի ամբողջ կատեգորիայի արտադրությունը և օգտագործումը: Այն ուժի մեջ մտավ 1975 թ.: Վերջին քսանամյակում բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը (1994 թ. հունիսի 7-ին), միացել են կոնվենցիային՝ կարևորելով դրա հետագա ամրապնդումը և դրույթների ամբողջական իրագործումը, ինչպես նաև այն որակելով որպես զանգվածային ոչնչացման զենքի տարածումը կանխարգելող կենսական գործիք: Կոնվենցիան պահանջում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկի ցանկացած անհրաժեշտ միջոց՝ արգելելու կենսաբանական զենքի արտադրությունը, կուտակումը, ձեռքբերումը, պահպանումը, փոխանցումը կամ օգտագործումը<sup>9</sup>:

Հայաստանի Հանրապետության կրիտիկական կենսաբանական ենթակառուցվածքները հիմնականում կառավարվում են մասնավոր հատվածի կողմից: Ուստի կենսանվտանգության ապահովումն արդյունավետ կարող է իրականացվել պետություն - մասնավոր հատված կառուցողական համագործակցության և համատեղ մեխանիզմներ մշակելու ու կիրառելու միջոցով:

**БАГРАТ ВАРДАНЯН – Биобезопасность как основная составляющая национальной безопасности и ее ценностная основа.** – Современный мир переживает период трансформации. Формирование новых центров силы и усиление борьбы между ними, а также возрастание значения военной мощи в этой борьбе ведут к изменению структуры мироустройства и формированию новых правил и принципов. Особое значение в структуре политики национальной безопасности и процесса принятия решений каждой страны имеют политические концептуальные документы, среди наиболее важных из которых концепция национальной безопасности или эквивалентный ей по своим функциям документ, который может иметь различное название исходя из характеристик страны, можно причислить к наиболее важным. Концепция национальной безопасности – это политический документ, содержащий систему официальных взглядов на место и роль государства в современном мире, национальные ценности, интересы и цели государства,

<sup>9</sup> Տե՛ս **Marifli A. M.** Bioterrorism and chemical attacks // International Journal of Antiterrorism Studies. 2019, № 4 (1), էջ 16-24:

силы, средства и возможности предотвращения и противодействия внешние и внутренние угрозы, а также организация функционирования системы национальной безопасности, основы и принципы.

Стремительная глобализация науки и техники, а также расширение путешествий, торговли и миграции вместе с положительными эффектами выявили угрозы и вызовы качественно нового характера, требующие от государств действовать на локальном, региональном и глобальном уровнях: уровни с новыми правилами игры, где решающее значение имеют контроль и предотвращение биологических угроз. Вопросы биобезопасности напрямую связаны с критической инфраструктурой и представляют собой угрозы на национальном уровне.

**Ключевые слова:** *национальная безопасность, биологическая безопасность, биотехнологии, биологическая угроза, генетически модифицированные организмы, биологическое оружие*

**BAGRAT VARDANYAN – *Biosecurity as the Main Component of National Security and Its Value Basis.*** – The modern world is going through a period of transformation. The formation of new power centers and the intensification of the struggle between them, as well as the increase in the importance of military power in that struggle, lead to a change in the structure of the world order and the formation of new rules and principles. Political conceptual documents are of special importance in the structure of the national security policy and decision-making process of each country, among the most important of which the national security concept or a document equivalent to it in its functions, which may have a different name based on the characteristics of the country, can be ranked among the most important. The concept of national security is a political document containing a system of official views on the place and role of the state in the modern world, national values, interests and goals of the state, forces, means and capabilities to prevent and counter external and internal threats, as well as the organization of the functioning of the national security system, basics and principles.

The rapid globalization of science and technology, as well as the expansion of travel, trade and migration, together with positive effects, have brought to light threats and challenges of a qualitatively new nature, which require states to operate at the local, regional and global levels with new rules of the game, where the control and prevention of biological threats are crucial. Biosecurity issues are directly related to critical infrastructure and are threats at the national level.

**Keywords:** *national security, biological security, biotechnology, biological threat, genetically modified organisms, biological weapons*

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ**  
**INFORMATION ABOUT THE AUTHORS**

1. **Խաչիկ Գալստյան** – քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր  
**Хачик Галстян** – доктор политических наук, профессор кафедры политологии ЕГУ  
**Khachik Galstyan** – Doctor of Political Sciences, Professor at YSU Chair of Political Science  
Էլ. փոստ՝ khgalstyan@ysu.am
2. **Գրիգոր Բալասանյան** – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ  
**Григор Баласанян** – кандидат исторических наук, доцент кафедры международных отношений и дипломатии ЕГУ  
**Grigor Balasanyan** – Candidate of History, Associate Professor at YSU Chair of International Relations and Diplomacy  
Էլ. փոստ՝ g.balasanyan@ysu.am, grigorbilasanyan@mail.ru
3. **Փայլակ Ենգոյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի ասիստենտ  
**Пайлак Енгоян** – кандидат политических наук, ассистент кафедры политологии ЕГУ  
**Paylak Yengoyan** – Candidate of Political Sciences, Assistant at YSU Chair of Political Science  
Էլ. փոստ՝ paylak.yengoyan@ysu.am
4. **Սուրեն Սարգսյան** – ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ  
**Сурен Саргсян** – аспирант кафедры политологии ЕГУ  
**Suren Sargsyan** – PhD Student at YSU Chair of Political Science  
Էլ. փոստ՝ sargsyansuren81@gmail.com
5. **Անահիտ Սուրադյան** – իրավագիտության մագիստրոս, Հայաստանի Ամերիկյան համալսարան  
**Анаит Мурадян** – магистр права, Американский университет Армении  
**Anahit Muradyan** – Master of Law, American University of Armenia
6. **Աիդա Գևորգյան** – իրավագիտության մագիստրոս, Հայաստանի Ամերիկյան համալսարան  
**Аида Геворгян** – магистр права, Американский университет Армении  
**Aida Gevorgyan** – Master of Law, American University of Armenia
7. **Վահագն Մանուկյան** – քաղաքագիտության բակալավր, Վենտրոնական Ֆլորիդայի համալսարան  
**Вахагн Манукян** – бакалавр политических наук, Университет Центральной Флориды  
**Vahagn Manoogian** – Political Science B.A., University of Central Florida
8. **Հայկ Դարբինյան** – ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ  
**Айк Дарбинян** – аспирант кафедры тюркологии ЕГУ  
**Hayk Darbinyan** – PhD Student at YSU Chair of Turkic Studies  
Էլ. փոստ՝ haykdarbinyan93@gmail.com

9. **Գոր Պետրոսյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի ասիստենտ, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ/գրասենյակի ղեկավար  
**Гор Петросян** – кандидат политических наук, ассистент кафедры политологии, руководитель офиса/заместитель декана факультета международных отношений ЕГУ  
**Gor Petrosyan** – Candidate of Political Sciences, Assistant at YSU Chair of Political Science, Head of Office/Deputy Dean at YSU Faculty of International Relations  
Էլ. փոստ՝ gor.petrosyan@ysu.am
10. **Բագրատ Վարդանյան** – ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի հայցորդ  
**Баграт Варданян** – соискатель кафедры политологии ЕГУ  
**Bagrat Vardanyan** – Applicant at YSU Chair of Political Science  
Էլ. փոստ՝ bagrat.vardanyan@ysu.am

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ \* СОДЕРЖАНИЕ \* CONTENTS

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ INTERNATIONAL RELATIONS

<i>Խաչիկ Գալստյան</i> – Թուրքիայի «փափուկ ուժի» ռազմավարության ինստիտուցիոնալ կառուցակարգերը.....	3
<i>Хачик Галстян</i> – Институциональные механизмы стратегии «мягкой силы» Турции	
<i>Khachik Galstyan</i> – The Institutional Mechanisms of Turkey’s “Soft Power” Strategy	
<i>Գրիգոր Բալասանյան</i> – ԵԱՏՄ ստեղծման մասին «Մեծ պայմանագրի» ստորագրման 10-ամյակին ընդառաջ. նոր մարտահրավերներ և նոր հնարավորություններ (ռուս.).....	16
<i>Григор Баласанян</i> – В преддверии 10-летия подписания «Большого догово- ра» о создании ЕАЭС: новые вызовы и новые возможности	
<i>Grigor Balasanyan</i> - On the Approach of the 10 <sup>th</sup> Anniversary of the Signing of the “Grand Treaty” on the Creation of the EAEU: New Challenges and New Opportunities (rus.)	
<i>Փայլակ Ենգոյան</i> – Չինաստանի մրցակցային դիրքերի ամրապնդումը աշ- խարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործընթացներում .....	24
<i>Пайлак Енгоян</i> – Укрепление конкурентных позиций Китая в геополити- ческих и геоэкономических процессах	
<i>Paylak Yengoyan</i> – The Strengthening of China’s Competitive Positions in Geopo- litical and Geo-Economic Processes	
<i>Սուրեն Սարգսյան, Անահիտ Մուրադյան, Արդա Գևորգյան, Վահագն Մանուկյան</i> – Մինսկի խմբի դերը Լեռնային Ղարաբաղի հակամար- տությունում. ներկայիս ճգնաժամը և առկա միջնորդական ձևաչափի պահպանման կարևորությունը (անգլ.) .....	44
<i>Сурен Саргсян, Анаит Мурадян, Аида Геворгян, Вахагн Манукян</i> – Роль Минской группы в Нагорно-Карабахском конфликте: текущий кризис и важность сохранения существующего формата медиации (англ.)	
<i>Suren Sargsyan, Anahit Muradyan, Aida Gevorgyan, Vahagn Manoogian</i> – The Role of the Minsk Group in the Nagorno-Karabakh Conflict: Current Crisis and the Importance of Preserving the Existing Mediation Format	
<i>Հայկ Գարբինյան</i> – Թուրքական «փափուկ ուժի» գործիքներն ու դրանց դիրտային կիրառության դրսևորումները .....	60
<i>Айк Дарбинян</i> – Инструменты турецкой «мягкой силы» и их проявления по сферам	
<i>Hayk Darbinyan</i> – Tools of Turkish “Soft Power” and Examples of Their Implementations by Spheres	

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**ПОЛИТОЛОГИЯ**  
**POLITICAL SCIENCE**

<i>Գոր Պետրոսյան</i> – Պոպուլիզմը որպես ժողովրդավարացնող հակալիբերալ երևույթ .....	73
<i>Гор Петросян</i> – Популизм как демократизирующий антилиберальный феномен	
<i>Gor Petrosyan</i> – Populism as a Democratizing Illiberal Phenomenon	
<i>Բագրատ Վարդանյան</i> – Կենսանվտանգությունը որպես ազգային անվտանգության հիմնական բաղադրիչ և դրա արժեքաբարանական հիմքերը .....	84
<i>Баграт Варданян</i> – Биобезопасность как основная составляющая национальной безопасности и ее ценностная основа	
<i>Bagrat Vardanyan</i> – Biosecurity as the Main Component of National Security and its Value Basis	
Տեղեկություններ հեղինակների մասին .....	92
Сведения об авторах	
Information about the Authors	

**Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1**  
**Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1**  
**Address: 1, Alex Manoogian str., Yerevan**

**Վայք՝ journals.ysu.am**  
**Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am**

**Հեռ. 060 710 218, 060 710 219**

**Հրատարակչական խմբագիր՝**  
**Издательский редактор**  
**Publishing Editor**

**Արմեն Հովակիմյան**  
**Армен Овакимян**  
**Armen Novakimyan**

**Վերստուգող սրբագրիչ՝**  
**Контрольный корректор**  
**Proofreader**

**Փայանե Գրիգորյան**  
**Гаяне Григорян**  
**Gayane Grigoryan**

**Թողարկման պատասխանատու՝**  
**Ответственный выпуска**  
**Issued by**

**Հասմիկ Եսայան**  
**Насмик Есаян**  
**Hasmik Yesayan**

**Ստորագրված է տպագրության 18. 12. 2023:**